

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԻՐԱՐՓԻ ՀՈՎԻԿԻ

**ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ԲԱՂԱԴՐՈՒ ԹՅՈՒ ՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱՉՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ

**Ժ.02.02-«Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությունը ամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական
աստիճանի համար**

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. Գ. Դ., ՊՐՈՖ. ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՍԵԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	9
1.1 Հայ երեւնի բառակազմագիտութիւնը անպատմութիւնը անակնարկ	9
1.2 Անգլ երեւնի բառակազմագիտութիւնը անհիմնական խնդիրներն ու հասկացութիւնները	20
ԳԼՈՒԽ 2. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ	42
2.1 Գոյականական բաղադրող հիմքով համադրական բարդութիւնները հայ երեւնում և անգլ երեւնում	42
Գոյական+գոյական (Noun+Noun).....	42
Ածական+գոյական (Adjective+Noun)	51
Թվական+գոյական (Numeral+Noun)	57
Դերանուն+գոյական (Pronoun+Noun).....	59
Բայ+գոյական (Verb+Noun)	64
Դերբայ+գոյական (Participle+Noun)	67
Մակբայ+գոյական (Adverb+Noun)	68
Կապ+գոյական (Preposition+Noun).....	71
2.2 Գոյականական սերող հիմքով համադրական բարդութիւնները հայ երեւնում և անգլ երեւնում	72
Գոյական+ածական (Noun+Adjective)	73
Գոյական+բայ (Noun+Verb)	77
Գոյական+դերբայ (Noun+Participle)	87
Գոյական+կապ (Noun+Preposition)	89
ԳԼՈՒԽ 3. ԳՈՅԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ	92
3.1 Կրկնավորներ	92
3.2 Հարադրութիւններ	100
Հարակցական հարադրութիւններ	100
Անդրական հարադրութիւններ	104
Հատվածական հարադրութիւններ	109

Շաղկապակալան հարադրու թյ ու ններ	111
Կապակցակալան հարադրու թյ ու ններ	118
3.3 Երկու գոյականներով և գոյականով ու այլ խոսքի մասերով բաղադրված հարադրու թյ ու ններն անգլ երենում	120
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	141
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	145
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	146

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից լեզվաբանության ոլորտը մեծապես կարևորում է լեզուների գուգադրական ուսումնասիրության ոլորտները: Չուգադրական ուսումնասիրության ոլորտների նպատակը լեզուների կառուցվածքային ընդհանրության ոլորտների ու տարբերության ոլորտների վերհանումն է: Ի. Ա. Բոդուեն դը Կուրտենեն գրում է. «Մենք կարող ենք համեմատել լեզուները՝ բոլորովին անկախ դրանց ծագումնաբանական ընդհանրության ոլորտներից, դրանց միջև եղած պատմական կապերից: Մենք մշտապես միանման հատկանիշներ, միանման փոփոխության ոլորտներ, միանման պատմական գործընթացներ ենք գտնում այն լեզուների միջև, որոնք միմյանց օտար են թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական տեսանկյունից: Այս տեսանկյունից մենք կարող ենք համեմատել ռոմանական լեզուների զարգացումը նոր հնդկական լեզուների զարգացման հետ, սլավոնական լեզուներինը՝ սեմական լեզուների զարգացման հետ, ռուսերենինը՝ ղաթիերենի զարգացման հետ, անգլերենինը՝ ճապոներենի զարգացման հետ և այլն»¹:

Այսինքն՝ պարտադիր չէ, որ լեզուներն ունենան մերձավոր ցեղակցության, ծագումնաբանական ընդհանրության ոլորտներ, որպեսզի հնարավոր լինի դրանց կառուցվածքների միջև ընդհանրության ոլորտներ հաստատել:

Սույն ատենախոսության թեման է հայերենի և անգլերենի բառակազմական համակարգերի գուգադրական ուսումնասիրությունը, իսկ ավելի որոշակի՝ երկու լեզուների գոյականական հիմքերով բառակազմական բաղադրության ոլորտների գուգադրական քննությունը: Ատենախոսության մեջ ուսումնասիրվում են գոյականական հիմքերով բառակազմական բաղադրության ոլորտների կառուցվածքային կադապրները՝ բացահայտելու համար հայերենի և անգլերենի բառակազմության մեջ գործող եղանակների ու միջոցների ընդհանուր գծերն ու տարբերությունները:

Հայերենի և անգլերենի գոյականական հիմքերով բաղադրության ոլորտների գուգադրական քննությունն բառակազմության

¹ И. Бодуэн де Куртенэ, Избранные труды по общему языкознанию, Т. 1, М., 1963, с. 371.

մեջ առաջին անգամ է կատարվում: Ատենախոսության մեջ առանձնացրել ենք գոյական սերող և բաղադրող հիմքերով բաղադրությունները երկու լեզուներում՝ առանձին ուշադրություն դարձնելով գոյականական հիմքերով բաղադրությունների բաղադրիչների միջև եղած իմաստային և շարահյուսական բազմազան հարաբերություններին:

Հայերենի և անգլերենի բառակազմական համակարգերն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, խնդիրներն ու վիճահարույց կողմերը, հետևաբար մեր ատենախոսության մեջ անդրադարձել ենք նաև այդ խնդիրներին՝ հայերենում բարդ բառերի դասակարգման տարբերություններին և առանձնահատկություններին, բառակազմական եզրույթների հստակեցմանն ու ճշգրտմանը, անգլերենի գոյականական հիմքերով բաղադրությունների և համապատասխան բառակապակցությունների առնչության հարցին, գոյականական հիմքերով բառակազմական բաղադրյալ կազմությունների և գոյական բաղադրիչով դարձվածքների տարբերակման խնդրին, ներկենտրոնության և արտակենտրոնության հասկացություններին և այլն: Փորձել ենք նաև պարզել համադրական և վերլուծական տիպի կազմությունների կառավարների գործունեությունն ու արդյունավետությունը քննվող լեզուներում:

Լեզուների զուգադրական քննությունը լեզվաբանական ուսումնասիրությունների կարևոր բնագավառներից է: Չուգադրական ուսումնասիրությունները մեծապես կարևորվում են ինչպես տեսական լեզվաբանության, այնպես էլ լեզուների գործնական ուսուցման առումով²: Մեր օրերում հատկապես կարևորվում է անգլերենի՝ որպես աշխարհում ամենագործածական լեզուներից մեկի գործնական ուսուցումը, որը հայալեզու միջավայրում իսկապես արդյունավետ է դառնում հայերենի և անգլերենի միջև զուգահեռներ անցկացնելու դեպքում, այսինքն՝ այս կամ այն լեզվի կառուցվածքային, գործառնական առանձնահատկություններն առավել արդյունավետ կարելի է ուսումնասիրել այլ լեզուների զուգադրական քննությամբ:

² Տե՛ս՝ O. Akhmanova et al., Approaches to Contrastive Linguistics, M., 1972, էջ 18:

Չուգադրական լեզվաբանությունը, որի նպատակն է երկու (ավելի հազվադեպ՝ երկուսից ավելի) լեզուների զուգադրական քննությունը և դրահիման վրա եզրահանգումներ կատարելը, հասել է զարգացման այնպիսի բարձր մակարդակի, որ կարող է լուծել մի շարք տեսական և լեզվաուսուցողական խնդիրներ³: Ինչպես այլ լեզուների, այնպես էլ հայերենի և անգլերենի զուգադրական քննությունը բառակազմության մակարդակում հնարավորություն է տալիս առավել խորությամբ ուսումնասիրելու երկու լեզուների բառակազմական համակարգերի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Բառակազմությունը զբաղվում է լեզվի բառակազմական համակարգի, դրանում գործող օրենքների ու օրինաչափությունների, բառի կառուցվածքի, բառակազմական եղանակների ու միջոցների, տիպերի ու կաղապարների և բառերի կազմությանն առնչվող զանազան հարցերի քննությամբ: Հայերենն ու անգլերենն աչքի են ընկնում բառակազմական հարուստ կաղապարներով: Երկու լեզուներն ունեն բառակազմական հսկայական հնարավորություններ, որի շնորհիվ դրանց բառապաշարն անընդհատ հարստանում է բառային նորանոր միավորներով: Չգալի ընդհանրություններ կան հայերենի և անգլերենի բառակազմական համակարգերի միջև. ընդհանրությունները բազմաթիվ են ոչ միայն բայական, այլ և անվանական բառակազմության մեջ:

Կան գոյականական, ածականական, մակբայական, թվականական, դերանվանական, կապական հիմքերից բաղադրված կաղապարներ: Ինչպես գրեթե բոլոր լեզուներում, այնպես էլ հայերենում և անգլերենում գոյականական հիմքերից բաղադրված կաղապարները նշանակալից տեղ են գրավում: Գոյականն իր հիմաստային լայն ընդգրկման շնորհիվ փոխհարաբերությունների մեջ է մտնում ինչպես այլ գոյականի, այնպես էլ տարբեր խոսքի մասերի հետ, այդ իսկ պատճառով գոյականներով է կազմվում համարական բարդությունների և վերլուծական բաղադրությունների ճնշող մեծամասնությունը:

³ Ст'ю У. Юсупов, Сопоставительная лингвистика как самостоятельная дисциплина, "Методы сопоставительного изучения языков", М., 1988, էջ 6:

Գոյականների՝ բառակազմական տեսանկյունից ճկուն լինելը պայմանավորված է նաև նրանց քերականական հատկանիշներով: Առհասարակ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, թեքվող խոսքի մասերի բառաբարդման հնարավորություններն ավելի լայն են, որը բխում է դրանց՝ քերականական կարգեր ունենալուց (թիվ, հոլով, դեմք), ինչը մեծապես օգնում է բարդ բառ կազմելուն, բարդության կազմիչ տարրերի փոխարմարվելուն⁴:

Մեր լեզվի բառաբարդման հնարավորությունների վերաբերյալ Մ. Աբեղյանը իրավացիորեն նշում է. «Հայերենը շատ մեծ չափերով ընդունակ է բաղադրության: Հին լեզվից ունենք բազմաթիվ բաղադրված բառեր, որոնց անալոգիայով այժմ էլ կազմում ենք նոր բառեր: Այս հատկությունը նպաստում է մեր լեզվի բառամթերքը հարստացնելու և օտար, մանավանդ գիտական ու տեխնիկական բառերի փոխանակ՝ հայերեն նոր բառեր կազմելու: Այս է պատճառը, որ թե՛ հնումն և թե՛ այժմ մեր լեզուն օտար գիտական բարդ բառերի նշանակությունն է միայն առնում և իր սեփական բառերով դրանց համապատասխան բաղադրություններ է կազմում: Այսպիսի նոր բառերը հեշտությամբ գործածվում և ընդհանրանում են. բավական է միայն, որ օտար բառի համապատասխան նոր բառը ճշտությամբ արտահայտի այլազգի բառի նշանակությունը, կազմված լինի հայերենի բառակազմության օրենքներով և, որքան կարելի է, կարճ ու ներդաշնակ լինի»⁵:

Բառաստեղծման լայն հնարավորություններ ունի նաև անգլերենը: Հայտնի է, որ լինելով անընդհատ փոփոխվող համակարգ՝ լեզուն՝ իբրև հաղորդակցության միջոց և գիտակցության ձև, կրում է բազմազան փոփոխություններ⁶, շարունակ համալրվում բառային նոր միավորներով, որոնք կազմվում են՝ ելնելով ժամանակակից աշխարհում գիտության, տեխնիկայի և նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց առաջ եկած նոր հասկացություններ ու երևույթներ անվանելու անհրաժեշտությունից: Բառապաշարի հարստացման ու թարմացման գործում բառաբարդման՝ որպես բառա-

⁴ Տե՛ս Ռ. Մկրտչյան, խոսքի մասերի բառաբարդման կաղապարները ժամանակակից հայերենում, ԱԺՀԼՖՏ, Եր., 1982, էջ 95:

⁵ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 135:

⁶ Տե՛ս Վ. Համբարձումյան, Լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների մասին, ՀԼԳԴ (4), Եր., 1978, էջ 50:

կազմական եղանակի դերը մեծ է և արժեքավոր, ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում: Լինելով անգլերենի բառապաշարի համալրման ամենակենսունակ եղանակներից մեկը՝ բառաբարդումը նաև արտացոլում է անգլերենի լեզվակիրների ազգային յուրահատկությունը՝ հաճախ արտահայտելով միայն տվյալ լեզվին բնորոշ առանձնահատկություններ, որոնցով կարելի է մի լեզուն տարբերել մյուսից⁷:

Բարդությունները՝ որպես լեզվաբանական ուսումնասիրության առարկա, սկզբունքորեն տարբերվում են լեզվաբանական քննության ենթակա մյուս միավորներից՝ այդ թվում նաև ածանցավոր կազմություններից, քանի որ բարդության սահմաններում իրար են միանում լիիմաստ բառային միավորներ, այդ իսկ պատճառով, ի տարբերություն ածանցավոր կազմությունների, բարդությունների դեպքում կարևորվում են դրանց կազմիչ տարրերի փոխհարաբերությունը, բաղադրիչների՝ իրար միանալու սկզբունքները, դրանց միջև առկա ամենատարբեր իմաստային և շարահյուսական հարաբերությունները և այլն⁸:

Մեր աշխատանքում հայերենի և անգլերենի գոյականական հիմքերով բաղադրություններն ուսումնասիրվում են համաժամանակյա հայեցակետով, հազվադեպ միայն ըստ անհրաժեշտության լեզվական այս կամ այն իրողությանն անդրադարձել ենք նաև պատմական բառակազմության դիրքերից:

Նշենք, որ սույն ատենախոսության մեջ քննել ենք միայն գոյական հիմքով կամ բաղադրիչով *անվանական համադրական* և *վերլուծական* կառույցները, ոչ թե բայական, այսինքն՝ քննության չենք ենթարկել գոյական բաղադրիչով հարադրավոր բայերը: Այդպես ենք վարվել՝ ելնելով մեր աշխատանքի ծավալից: Մեր համոզմամբ հայերենի և անգլերենի հարադրավոր բայերի զուգադրական ուսումնասիրությունը կարող է առանձին հետազոտության նյութ դառնալ:

Ատենախոսության մեջ գոյականական հիմքերով բաղադրություններն առանձնացնելիս օգտագործել ենք հիմնականում հայերեն և անգլերեն ամենագործածական բա-

⁷ Տե՛ս Օ. Мешков, Словосложение в современном английском языке, М., 1985, էջ 10:

⁸ Տե՛ս նույնի Семантические аспекты словосложения английского языка, М., 1986, էջ 15:

ռաբանները, ինչպես նաև համացանցային բառարաններ. դրանք նշված են մեր աշխատանքի գրականության ցանկում: Մեր հետազոտությունը կատարելիս օգտագործված աղբյուրներից հատկապես հիշատակման է արժանի Կ. Սադիկի՝ վերջին շրջանում հրատարակած «Բարդ բառեր. 7000 բարդ և միացման գծիկով բառեր»⁹ բառարանը, որն անգլերենի բառարանագրության մեջ եզակի աշխատություն է, քանի որ բառարանում խմբավորված են մոտ 7000 բաղադրություններ՝ այդ թվում թե՛ համադրական, թե՛ վերլուծական կառույցներ: Բարդ բառերի և հարադրությունների խմբավորված լինելու փաստը հնարավորություն է տվել մեզ նախ և առաջ համոզված լինելու, որ տվյալ բառային միավորը հաստատապես բառակազմական բաղադրյալ կազմություն է և ոչ բառակապակցություն, բացի այդ՝ մեկ աշխատության մեջ դրանց մեկտեղված լինելը նվազեցրել է անգլերենի առանձին բառարաններում բաղադրյալ բառեր փնտրելու անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ1. ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Հայերենի բառակազմագիտության պատմության ակնարկ

Բառակազմության հարցերի քննությունը հայերենում սկսվել է դեռևս Դիոնիսիոս Թրակացուց, սակայն հայ լեզվաբանները բառակազմությանը զգալի ուշադրություն են դարձրել հատկապես 20-րդ դարի կեսերից սկսած: Ուսումնասիրություններն ուղղված են եղել նրան, որ բառակազմությունն առանձնացվի որպես լեզվաբանական հետազոտության անկախ, առանձին բնագավառ, ճշգրտվել են և առավել խորացվել բառակազմական ուսումնասիրությունների տարածամասակյա և համաժամանակյա հայեցակետերը¹⁰:

⁹ C. Sadik, The Compound Words; 7000 Compound and Hyphenated Words, United States, 2013:

¹⁰ Տե՛ս Լ. Հովսեփյան, Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ, «Զահուկյանական ընթերցումներ» (4), Եր., 2009, էջ 102:

Ժամանակակից հայ երեւնի բառակազմական ուսումնասիրությունների բնագավառում հատկապես մեծ է անգնահատելի Մ. Աբեղյանի ներդրումը, որը իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ հայ երեւնի բարդությունները դասակարգելիս առանձնացնում է դրանց երեք տեսակ՝ *հարադրություններ (բաց անել)*, *կցական (կեսօր)* և *իսկական բարդություններ (մեծատուն)*¹¹:

Հարադրությունները բաժանվում են *բայական հարադրությունների (հարադրական բայերի)*՝ *միտք անել*, *ներս գալ*, և *բաղիյունական հարադրությունների*՝ *կազմված շաղկապներով՝ ահ ու դող, հալ և մաշ*, և առանց շաղկապների՝ *թև-թիկունք, տասը-քսան* և այլն¹²:

Կցական բարդությունները (*այսպես, կեսօր*) նշանակությամբ և գրության ձևով մեկ բառ են՝ կազմված լեզվի սովորական շարահյուսական ձևերից, իսկ *իսկական* բարդությունների (*գորավար, լուսաբեր*) մեջ շարահյուսական կապակցության ձևը բոլորովին մեռած է լեզվի մեջ և պահվում է միայն բարդության մեջ և բարդության համար¹³:

Կցական բարդություններին (առաջացած հարադրական բայերից, բաղիյունական կապակցություններից, կրկնավորներից և այլն)¹⁴, հակադրվում են *իսկականները*, որոնց բաղադրիչները միացած են հոդակապ կոչվող *ա* ձայնավորով (բացի այն բառերից, որոնց երկրորդ բաղադրիչը սկսվում է ձայնավորով), առաջին անգամը դրված է եզակի ուղղական հոլովով, և դրավերջին փակ վանկը շեշտափոխական հնչյունափոխության է ենթարկվում՝ *երկիր-երկրագունդ, թռչուն-թռչնորս*¹⁵:

Հայ լեզվաբաններից Գ. Սևակը իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» գրքում բարդությունները բաժանում է *անիսկական* և *իսկական* ենթատեսակների¹⁶: Ըստ հեղինակի՝ *անիսկական բարդությունները* լինում են *կրկնավոր, հարադրական, բաղիյունական* և *կցական*¹⁷: Կրկնավոր բարդությունները քննվում են դրանց տարա-

¹¹ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 137:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 137-143:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 141-146:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 153-154:

¹⁶ Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 151:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 152:

տեսակություններով: *Հարադրական բայերը*¹⁸ Գ. Սևակը դասակարգում է Մ. Աբեղյանի հետևողությամբ: *Բաղիյունական հարադրություններ* անվան տակ, ի տարբերություն Մ. Աբեղյանի, հեղինակը նկատի ունի միայն շաղկապական հարադրությունները (*մարդ ու կին*), որոնց բաղադրիչները համազոր հարաբերության մեջ են՝ տարբերվելով սովորական հարադրություններից¹⁹: Կրկնավոր, հարադրական, բաղիյունական և կցական բարդություններին հակադրվում են *խկական* բարդությունները²⁰:

Հայերենի բառակազմությունն ուսումնասիրել է Ա. Մուրվալյանը իր «Հայոց լեզվի բառային կազմը» աշխատության մեջ, որի բառաբարդման բաժինը հեղինակը սկսում է բառակրկնությունների ուսումնասիրությամբ²¹: Նա նաև ներկայացնում է *անել, դնել* և այլ բառերով կազմված հարադրյալ բայերը, ապա դրանց միաձուլումները՝ որպես բարդության յուրահատուկ ձևեր՝ *առաջ և բերել = առաջբերել = առաջբերում*²²: Ապա ուսումնասիրվում են «այն բաղադրյալ բառերը, որոնց երկու եզրերը սովորաբար իրար կողք-կողքի գործածվելով միաձուլվել են և կազմել յուրահատուկ բարդ բառեր...»²³ (հմմտ. *գլ ու խբաց, եղբորորդի, երեսպարզ* և այլն): Այնուհետև քննվում են *խկական* բառաբարդումները:

Ս. Գալստյանը, իր «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» մենագրությունում ուսումնասիրելով հայերենի բառակազմությունը, տալիս է նաև ներկարմատիսկական բարդության կառուցվածքային կաղապարները՝ ներկայացնելով դրանցում տարբեր խոսքի մասերի հնարավոր արմատազուգորդումները և առանձնացնում 16 հնարավոր կաղապար, որոնք հերթականությամբ ենթարկում է քննության²⁴:

Հայերենի բառակազմական երևույթները մանրամասն քննված են «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական քերականության մեջ, որում Ս. Էլոյանը բարդությունները բաժանում է *հարադրականների (վերլուծականների)* և *համադրականների*, իսկ վեր-

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 154-157:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 156:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 162-163:

²¹ Տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 147-162:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 211:

²³ Նույն տեղում, էջ 215:

²⁴ Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 20-30:

ջինները՝ *կցական* և *իսկական* տեսակների²⁵: Հարադրու թյուների մեջ առանձնացնում է *անվանական* (*համադասական* և *ստորադասական*) և *բայական* տեսակները: Համադասական անվանական հարադրու թյուներին մեջ առանձնացվում են *կրկնավոր*, *բաղիյուսական* և *նոր տիպի* (*տիեզերագնաց-օդաչու*)²⁶ հարադրու թյուները:

Հայ լեզվաբաններից Ս. Աբրահամյանը, յուրահատուկ մոտեցմամբ քննելով հայերենի բառակազմությանը, իր «Ժամանակակից գրական հայերեն» աշխատության մեջ առանձնացնում է բարդ բառերի *համադրական* (*հանդիսատես*) և *հարադրական* (*հարց ու փորձ*, *ման գալ*) տեսակները²⁷: Հոդակապավոր և *անհոդակապ* համադրական բարդ բառերի մեջ կարող են լինել երկու, երեք, չորս արմատային բաղադրիչներ²⁸: Բառերի բաղադրման *կադապարային* եղանակին պատկանող բարդ բառերը (*իսկական բարդու թյուները*) ստեղծվում են լեզվում արդեն առկա կադապարների հիման վրա, իսկ *փոխանցումային եղանակին* պատկանող բառերը (*կցական բարդու թյուները*) կազմվում են կապակցության ներքո: *Հարադրական բարդ բառերի* մեջ առանձնացվում են *բուն հարադրական* և *կիսահարադրական* (*նույնարմատ կամ կրկնավոր* և տարարմատ կամ *զուգահրական*) տեսակներ²⁹:

Հայերենի բարդ բառերը քննել է նաև Ռ. Մկրտչյանը³⁰. դասակարգելով դրանք՝ հեղինակը տալիս է դրանց կառուցվածքային վերլուծությանը և մանրամասնորեն քննում դրանց բաղադրիչների միջև եղած շարահյուսական ու իմաստային փոխհարաբերությանները:

Ժամանակակից հայերենի բառակազմության հարցերն առավել համապարփակ ու խոր ուսումնասիրության են ենթարկվել Է. Աղայանի կողմից նրա «Ընդհանուր և հայկական բառագիտության» աշխատության մեջ, որում լեզվի բաղադրյալ բառերը բաժանվում են

²⁵ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 250, էջ 252:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 269-270:

²⁷ Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 85:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 86:

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 90-99:

³⁰ Տե՛ս Ռ. Մկրտչյան, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԼՈՅ, IV, Եր., 1977, էջ 77-158:

վերլուծական, համադրական և հապավական տիպերի³¹: Վերլուծական բաղադրությունները բաժանվում են՝ 1. *հարադրողությունների*, 2. *կրկնավորների* կամ *բառակրկնությունների*, 3. *կայուն բառակապակցությունների*, 4. *հատվածական բաղադրությունների*: *Հարադրողությունների* մեջ առանձնացվում են *բայական հարադրողություններն* իրենց տեսակներով (հարադրավոր բայեր՝ *առաջ գալ*, և գուգորդական բայեր՝ *առնել-փախչել*)³² և *անվանական հարադրողությունները*՝ *շաղկապական (սար ու ծոր)*, *հարակցական (ամառ-ձմեռ)* ու *կապակցական (ոտից գլուխ) տեսակներով*³³:

Է. Աղայ անը առաջինը հրաժարվեց «բաղիյ ուսական» եզրույթից, որ նախորդ հետազոտողներն օգտագործում էին կամ միայն *շաղկապական*, կամ *շաղկապական և անշաղկապ կառույցները* բնութագրելիս: Անշաղկապ կառույցները նա անվանում է *հարակցական*՝ նրանք, որոնց բաղադրիչներն ուղղակի հարակցությամբ են կապվում, գծիկի օգնությամբ, ինչպես՝ *ամառ-ձմեռ*, *գրադարանը նթերցարան* և այլն:

Կապակցական անվանական հարադրողությունները «ներկայացնում են շարահյուսական բառակապակցություն՝ բաղադրիչների համապատասխան քերականական ձևավորմամբ...»³⁴. հմմտ. *ոտից գլուխ տակից գլխից (դուրս տալ)*, *ոտով-ձեռով (կորչել)* և այլն:

Կրկնավոր բաղադրողությունների մեջ առանձնացնում է *հարակցական (երամ-երամ)*, *շաղկապական (ծակ ու ծուկ)*, *նախադրական (փոխ առ փոխ)* տիպեր՝ դրանք բաժանելով նաև տարբեր իմաստային խմբերի և անփոփոխու փոփոխված ձևերի:

Կայուն բառակապակցությունների մեջ Է. Աղայ անը առանձնացնում է *բաղադրական (խոսքի մաս)* և *դարձվածային կապակցությունները (անսրչ գդալ)*:

Հատվածական են նույնական կամ նույնիմաստ ածանցներով բաղադրողությունների առաջին անդամի ածանցի կրճատմամբ կազմված և իրար հետ ստորադասական, համադասական կամ փոխադարձության հարաբերությամբ կապված կառույցները՝ *հայ-մուսերեն*, *մուս-*

³¹ Տե՛ս Է. Աղայ ան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 221:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 222:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 227-228:

³⁴ Նույն տեղում, էջ 228:

թուրքական և այլն: Է. Աղայանն առանձին-առանձին քննում է բաղադրությունների վերոնշյալ բոլոր տեսակները³⁵:

Ի տարբերություն նախորդ հետազոտողների՝ Է. Աղայանը *բարդություն* է համարում միայն համադրական բարդ բառերը, «որոնք ներկայացնում են երկու կամ ավելի հիմնական ձևության միավորումը մեկ բառում»³⁶: Մեկ բառային իմաստ արտահայտող մնացած բոլոր կարգի կապակցությունները՝ հատկապես վերլուծականները, անվանում է *բաղադրություններ*: Ըստ հեղինակի՝ բարդ բառի առաջին բաղադրիչը սերող հիմքն է, երկրորդը՝ բաղադրող, իսկ ածանցավորներն ունեն միայն սերող հիմքեր՝ անկախ ածանցի դիրքից: Բարդածանցավոր բառերի հիմքը որոշելիս արդեն որոշիչ դեր է խաղում բառակազմական քայլերի հաջորդականությունը. եթե բառակազմական վերջին քայլում վերջաձանց է ավելանում, ապա սերող հիմքը բարդածանցավոր բառի ձախակողմյան մասում է, իսկ եթե վերջին քայլը նախաձանցի կցումն է եղել, ապա սերող հիմքն աջակողմյան մասում է³⁷:

Հայերենի բառակազմությունը յուրահատուկ մոտեցմամբ է ուսումնասիրել Գ. Ջահուկյանը, որն իր «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» մենագրությունում բարդ բառերի մեջ առանձնացնում է *կրկնություններ* և *տարաբաղադրիչ (համադասական և ստորադասական)* բարդություններ³⁸: Համադասական բարդություններում տարբերակվում են համադրական (*անցուդարձ*) և վերլուծական (*շենք ու շնորհք*) տեսակներ: Այս երկուսի միջև միջին դիրք են գրավում այն համադասական բարդությունները, որոնց բաղադրիչները միմյանց հետ կապվում են գծիկով՝ *աչք-ուկք*,

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 229-244:

³⁶ Նույն տեղում, էջ 268:

³⁷ Բարդածանցավոր բառերի կառուցվածքային վերլուծությունը կատարելիս Է. Աղայանը *հիմք* եզրույթի փոխարեն օգտագործում է նաև *հիմույթ* եզրույթը. օրինակ՝ *գործարանատեր և բարձրալեռնային* բառերից յուրաքանչյուրում կա երկու հիմույթ՝ *գործարան* և *տեր*, *բարձր* և *լեռնային*: Հիմույթների որոշման համար պետք է ելնել բառի բաղադրիչների՝ իրար նկատմամբ ունեցած իմաստային հարաբերությունից, լեզվում նրանց անկախ գոյությունից և այլն: *Բարձրալեռնային* բառում *բարձրալեռն*-ը չի կարող հիմույթ լինել, քանի որ լեզվում նման բառ գոյություն չունի (տե՛ս Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը (կառուցվածքային վերլուծություն), Եր., 1967, էջ 111):

³⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 214-215:

*գիշեր-ցերեկ*³⁹: Բարդություն ամենատարածված տեսակը, սակայն, ստորադասական բարդությունն է (*հոդակապակոր* և *անհոդակապ* տեսակներով), որոնց մեջ ևս առանձնանում են *համադրական* և *վերլուծական* տեսակներ:

Հայերենի բառակազմական երևույթների քննությամբ զբաղվել են նաև Ա. Սուքիասյանը⁴⁰ և Ա. Մարգարյանը⁴¹ իրենց հեղինակած հայտնի դասագրքերում: Հայերենի բարդությունների՝ նրանց դասակարգումներին չենք անդրադառնա, քանի որ որոշել ենք կանգ առնել միայն որոշ հայեցակարգային գաղափարների վրա:

Հայերենի բառակազմություն ուսումնասիրությունն է նվիրված Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառակազմությունը» մենագրությունը, որում հեղինակը բառաբարդումը ներկայացնում է որպես մեկից ավելի հիմքերի և նրանց միացնող տարրերի (*հոդակապեր* և *այլն*) բաղադրություններ⁴²: Լ. Հովսեփյանի կողմից հստակեցվել են նաև հայերենի բառակազմական որոշ եզրույթների իմաստները 2009թ. հրատարակված «Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ» հոդվածում⁴³: Նույն հոդվածում բարդությունների տեսակներն առանձնացնելիս հեղինակը, ի տարբերություն միշտ քիչ հետազոտողների, վերլուծական կառույցները չի անվանում բարդություններ, քանի որ դրանք առաջանում են «բառակազմական բոլորովին այլ, անկախ եղանակի՝ հարադրման հետևանքով, որի արդյունքում ստացվող բաղադրությունները պետք է կոչել հարադրություններ (ի տարբերություն բարդությունների և ածանցյալների), իսկ բաղադրիչները՝ հարադիրներ»⁴⁴: Դրանց բաղադրիչները գրվում են անջատ, ունեն հարաբերական ինքնություն, բառային շեշտ, տեղափոխելի են, կարող են ենթարկ-

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 218:

⁴⁰ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզուն (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Եր., 1982:

⁴¹ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզուն (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990:

⁴² Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 61:

⁴³ Ըստ հեղինակի՝ *տիպ* եզրույթով պետք է նկատի առնել բաղադրիչների կցման սկզբունքը՝ տեխնիկան: *Եղանակ* եզրույթը բնութագրում է այն գործընթացը, որի արդյունքն են բաղադրյալ բառերը, իսկ *միջոցներ* եզրույթով նշանակում են լեզվի կոնկրետ նյութական միավորները, որոնք բաղադրիչ տարր են հանդիսանում տվյալ բառակազմական եղանակով որոշակի կառույցներ ստանալու համար (տե՛ս Լ. Հովսեփյան, Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ, «Ջահուկյանական ընթերցումներ» (4), Եր., 2009, էջ 105-106):

⁴⁴ Նույն տեղում, էջ 107:

վել հնչյունական և քերականական ձևավորման, դրանց միջև կարելի է ներմուծել այլ բառեր, օրինակ՝ նախդիրներ, սակայն, միևնույնն է, նմանատիպ վերլուծական կառույցները դիտվում են որպես բառակազմական և ոչ թե շարահյուսական իրողություններ (բառակապակցություններ), քանի որ իբրև արդյունք կազմվում են մեկ բառի արժեք ունեցող միավորներ: Փաստորեն դրանք դառնում են միջանկյալ օղակ բարդության ու բառակապակցության միջև⁴⁵:

Այսպիսով, հայերենի բառակազմական համակարգում գործում են երկու՝ *համադրական* և *վերլուծական* տիպեր. համադրական տիպին են պատկանում *բառաբարդման* ու *ածանցման* եղանակները, որոնց արդյունքում ստացվում են միածույլ բառեր՝ հիմնական ու երկրորդական ձևության տարբեր գույքություններով, իսկ վերլուծական տիպին են պատկանում *հարադրում* ու *կրկնում*, որոնց հետևանքով կազմվում են մեկ բառի արժեք ունեցող վերլուծական միավորներ: Համադրական կառույցների մեջ ելակետային միավոր է բառակազմական հիմքը, մինչդեռ վերլուծականներում՝ առանձին բառ-բաղադրիչը⁴⁶:

Լ. Յովսեփյանը նշված հոդվածում տվել է նաև ժամանակակից հայերենի վերլուծական կառույցների մի հետաքրքիր դասակարգում⁴⁷, որն ընդհանուր գծերով հիմնվում է Է. Աղայանի՝ վերլուծական բաղադրությունների դասակարգման վրա՝ միևնույն ժամանակ որոշ առումներով տարբերվելով դրանից: Դասակարգումն ընդգրկում է նաև բայական կառույցները: Դրա՝ միայն անվանական հարադրություններն ընդգրկող մասը տրված է նաև Գ. Վարդանյանի «Ժամանակակից հայոց լեզվի անվանական վերլուծական բառակազմությունը» ուսումնասիրական ձեռնարկում⁴⁸:

Ի տարբերություն Է. Աղայանի դասակարգման, որի մեջ վերլուծական կազմություններն ընդգրկում են նաև կայուն բառակապակցությունները (բաղադրական և դարձվածային կապակցությունները), այստեղ դրանք չեն ներառվում՝ համարվելով ավելի շատ շարահյուսական, քան բառակազմական կառույցներ:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 106-107:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 108:

⁴⁸ Տե՛ս Գ. Վարդանյան, Ժամանակակից հայերենի անվանական վերլուծական բառակազմությունը, Եր., 2010, էջ 24:

Եվ իսկապես, մենք նույնպես դրանք մեր քննության նպատակից դուրս ենք համարում, քանի որ դրանք բուն բառակազմական գործընթացների արդյունք չեն: Բացի այդ՝ դարձվածային կապակցությունների տեղն ու դիրքը երկու լեզուների բառակազմական համակարգում մինչ օրս հստակ չէ. դրանք հաճախ համարում են ոչ թե բառագիտության, առավել ևս բառակազմության քննության առարկան, այլ ուսումնասիրության բոլորովին անկախ բնագավառ:

Հետևաբար անվանական վերլուծական կազմության ունենների քննության մեջ ընդգրկվում են *կրկնավորները* և *հարադրության ունենները*: Հատվածական բաղադրության ունենները համարվում են հարադրության ունենների մի ենթատեսակ, քանի որ դրանց մեջ բաղադրիչների կցման եղանակը հարադրության ունեն է: Կրկնավորների մեջ առանձնացվում են *հարակցական, շաղկապական* ու *նախդրական* տեսակները:

Լ. Հովսեփյանի վերոնշյալ հոդվածում տրված անվանական վերլուծական կազմության ունենները ներկայացվում են հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

Անվանական վերլուծական կազմության ունեններ	
Կրկնավորներ	Հարադրության ունեններ
1. Հարակցական (խումբ-խումբ) 2. Շաղկապական (իսկ և իսկ) 3. Նախդրական (բառ առ բառ)	1. Հարակցական (երկար-բարակ) 2. Շաղկապական (թանկ ու կրակ) 3. Առդրական (տուն-թանգարան) 4. Հատվածական (հայ-ռուսերեն) 5. Կապակցական (ամեն ինչ)

Տրված դասակարգման մեջ *առդրական հարադրության ունեններ* անվանումով նկատի են առնվում մինչ այդ որոշ հայ լեզվաբանների կողմից *նոր տիպի* կոչված կազմության ունենները, ինչպես՝ *խանութ-սրճարան, գեներալ-մայոր*⁴⁹: Այստեղ սրանք առանձնացվում են որպես հարադրության ունենների ինքնուրույն տեսակ: *Առդրական* եզրույթի ընտրությանը հիմնված է դրանց կառուցվածքային

⁴⁹ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 269-271, Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1987, էջ 227-228:

առանձնահատկությունների և բաղադրիչների շարահյուսական ու իմաստային հարաբերությունների վրա, քանի որ սրանցում առարկան, երևույթը, հասկացությունը բնութագրվում են միաժամանակ երկու կողմից, օրինակ՝ *շինարար-ճարտարագետ* հարադրությունը ցույց է տալիս այն անձը, որը և՛ շինարար է, և՛ ճարտարագետ: Երբեմն բաղադրիչներից մեկը նեղացնում, մասնավորեցնում է մյուսի իմաստը, ինչպես՝ *լեզվաբան-բառակազմագետ*⁵⁰:

Ելնելով մեր հետազոտության նպատակից՝ վերոնշյալ անվանական վերլուծական կառույցներից մենք ընտրել ենք միայն նրանք, որոնք կազմված են կա՛մ երկու գոյական բաղադրիչներով, կա՛մ գոյական բաղադրիչի և այլ խոսքի մասի պատկանող բաղադրիչի հարադրությամբ: Յետևաբար մենք քննելու ենք **գոյական բաղադրիչով (ներով) կրկնալոր** (շարան-շարան), **հարակցական** (ծեռով-ոտով), **ադրական** (ալբոմ-բառարան), **շաղկապական** (կրակ ու ծուխ), **հատվածական** (սոցիալ-շովինիստ) և **կապակցական** (ըստ երևույթին) հարադրությունները: Կապակցական վերլուծական կազմությունների մեջ ընդգրկել ենք նախկին շարահյուսական կառույցներից առաջացած և հետագայում առավելագույնս կայունացած ու բառայնացած միավորները, ինչպես՝ *ոտից գլուխ ըստ երևույթին, իշահ* և այլն:

Է. Աղայանի կողմից *կապակցական* համարվող *ոտից գլուխ տակից գլխից* (դուրս տալ), *ոտով-ծեռով* (կորչել), *բեռով-բարձով*, *ծեռով-ոտով* (անել), *շարքով-կարգով*⁵¹ հարադրություններից միայն առաջին օրինակը՝ *ոտից գլուխ* կապակցությունն է այսպիսին, իսկ մնացածը, մեր ընդունած մոտեցման համաձայն, հոլովված բաղադրիչով (ներով) հարակցական հարադրություններ են:

Մեր առանձնացրած կապակցական հարադրությունները միայն մասամբ համընկնում են Է. Աղայանի առանձնացրած կայուն բառակապակցություններին, սակայն նադրանց մեջ ներառում է նաև *դարձվածային* (անհոտ ծաղիկ, կրակի կտոր) և *բաղադրական կայուն բառակապակցությունները* (աշխատանքի հասարակական բաժանում, գյուղատնտեսական ինստիտուտ), որոնք մեր քննության նպատակից դուրս են:

⁵⁰ Տե՛ս Գ. Վարդանյան, Ժամանակակից հայերենի «նոր տիպի» անվանական հարադրությունները, ԶԶԼ, պրակ Դ, Եր., 2004, էջ 53-54:

⁵¹ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 228:

Ինչ վերաբերում է N 1 աղյուսակում նշված *հատվածական բաղադրություններին*, դրանք միայն մասամբ են մեր քննության առարկան, որովհետև հիմնականում կազմվում են երկու ածականներով՝ *լեզվական-գրական* > *լեզվագրական*: Հետևաբար դրանցից մեր քննության մեջ ընդգրկվել են միայն իրենց կազմում նաև գոյական բաղադրիչ ունեցողները, ինչպես՝ *Նացիոնալ-շովինիստ, սոցիալ-դեմոկրատ* ալն:

Սույն ուսումնասիրության մեջ անդրադարձել ենք միայն բառաբարդմամբ և հարադրմամբ կազմված բառային միավորներին և ոչ ածանցմանը ու հապավմանը, առանձին դեպքերում՝ նաև այն բաղադրյալ բառերին, որոնց բաղադրմանը մասնակցում են բառաբարդումն ու ածանցումը միաժամանակ (խառը տիպի կաղապարներ):

Ատենախոսության մեջ անվանական գոյականական հիմքերով բաղադրություններին քննությունը կատարելիս առաջնորդվել ենք Է. Աղայանի և Լ. Հովսեփյանի առաջադրած սկզբունքներով՝ հաշվի առնելով թե՛ բարդ բառերի դասակարգման և թե՛ բառակազմական եզրույթների ընտրության առանձնահատկությունները: Այսպիսով, *բարդություն* եզրույթը կիրառում ենք միայն *համադրական*, իսկ *բաղադրություն* եզրույթը՝ հիմնականում վերլուծական տիպի կառույցների դեպքում, թեև *բաղադրություն* ընդհանուր եզրույթը կարող է ընդգրկել նաև համադրական բարդությունները:

Անգլերենի վերլուծական բաղադրությունները կքննենք հայերենում առանձնացված տեսակներին զուգահեռելով՝ ըստ հնարավորին հաստատելով ընդհանրություններ և տարբերություններ երկու լեզուների վերլուծական բաղադրությունների միջև:

Հնարավորինս համառոտ ներկայացնելով հայերենում բարդ բառերի դասակարգումն ու հայերենի բառակազմության հիմնական հասկացությունները՝ անդրադառնանք նաև անգլերենի բառակազմությանը, դրա՝ որպես լեզվի ուսումնասիրության առանձին բնագավառի առանձնացմանը և բառակազմական հիմնական հասկացություններին ու խնդիրներին:

1.2 Անգլերենի բառակազմագիտության հիմնական խնդիրներն ու հասկացությունները

Անգլերենի բառակազմությունը քննելիս Վ. Ադամսը «Ժամանակակից անգլերենի բառակազմության ներածություն» գրքում նկատում է, որ բառակազմությունն իրեն նախորդած և իր ժամանակաշրջանի նկարագրական քերականությամբ զբաղվող գիտնականների կողմից մեծ ուշադրության չի արժանացել⁵²։ Մի շարք լեզվաբանների աշխատությունների քերականությանը նվիրված բաժիններում, ըստ հեղինակի, բառակազմությանն ընդամենը մեկ կամ երկու գլուխ է հատկացվում։ Դրա պատճառը մասամբ Սոսյուրի կողմից սինխրոնիայի ու դիախրոնիայի տարբերակումն էր, որը, սկսած 1916թ., խոր ազդեցություն էր թողել լեզվական ուսումնասիրությունների վրա և մեծապես խանգարում էր բառակազմության՝ որպես առանձին բնագավառի քննությանը, որում լեզվի ուսումնասիրության այս երկու հայեցակետերն արդյունավետորեն համատեղվում են։ Եվ չնայած որոշ գիտնականների հաջողվել էր բառակազմության ուսումնասիրության մեջ համատեղել համաժամանակյա և տարաժամանակյա մոտեցումները, այնուամենայնիվ լեզվաբանների մեծ մասը բառակազմական հարցերի քննությանը մոտենում էր կամ միայն սինխրոնիկ (Բլումֆիլդ), կամ դիախրոնիկ հայեցակետով (Կոզիոլ)⁵³։

Ըստ Վ. Ադամսի՝ նոր բառեր կազմելու և հասկանալու ունակությունը մեր լեզվական կարողության նույնքան կարևոր մասն է, որքան նոր նախադասություններ կազմելն ու դրանք հասկանալը⁵⁴։

Անգլերենի բառակազմությունը և դրա հիմնական եղանակներն ու միջոցները ամբողջությամբ ներկայացնող առաջին աշխատությունը՝ «Անգլերենի բառակազմության ձեռնարկ»⁵⁵, որն ավելի շատ նկարագրական բնույթ էր կրում, հեղինակել է Զ. Կոզիոլը⁵⁶։ 1972 թ. այս գիրքը վերահրատարակվում է։

⁵² Տե՛ս V. Adams, An Introduction to Modern English Word-Formation, London, 1973, էջ 3:

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 4-5, L. Bauer, English Word-Formation, Cambridge, 1983, էջ 3:

⁵⁴ Տե՛ս V. Adams, նշվ. աշխ., էջ 6:

⁵⁵ H. Koziol, Handbuch der Englischen Wortbildungslehre, Heidelberg, 1937:

⁵⁶ Տե՛ս O. Мешков, Словообразование в современном английском языке, М., 1985, էջ 5:

1960թ. լույս է տեսնում Յ. Մարչանդի «Ժամանակակից անգլերենի բառակազմության կարգերը և տեսակները. համաժամանակյա-տարածամանակյա մոտեցում» գիրքը⁵⁷: Յ. Մարչանդը եվրոպայում բառակազմության տեսության՝ այդ ժամանակի հիմնադիր-նախահայրն է համարվում, և նրա աշխատությունը իսկապես բեկումնային դարձավ բառակազմության ուսումնասիրության մեթոդների զարգացման առումով⁵⁸: Նա առանձնացնում է բառակազմությունը՝ որպես լեզվաբանական ուսումնասիրության առանձին բնագավառ և տալիս բառակազմական միջարժեքի հիմնախնդիրների ամբողջական նկարագրությունը համա-ժամանակյա և տարածամանակյա հայեցակետերով: 1969թ. վերահրատարակված այս գիրքը⁵⁹, որը զգալիորեն տարբերվում է առաջինից, ամենաշատն է մեջբերվում անգլերենի բառագիտության և բառակազմությանը նվիրված աշխատություններում:

Ըստ հեղինակի՝ բառը խոսքի ամենափոքր, այլևս անբաժանելի, ինքնուրույն կիրառություն ունեցող միավորն է, իսկ բառակազմության ուսումնասիրության առարկան են այն կաղապարները, որոնցով լեզուն ստեղծում է նոր բառային միավորներ՝ բառեր: Յեղինակի մոտեցմամբ բառակազմությունը զբաղվում է միայն բաղադրությունների (composites) քննությամբ, որոնք թե՛ ձևային և թե՛ իմաստային տեսանկյունից վերլուծելի են. ստացվում է, որ պարզ բառերը դուրս են բառակազմության ուսումնասիրության սահմաններից: Այսինքն՝ *do-er* «կատարող», *un-do* «չեղյալ համարել», *rain-bow* «ծիածան» բառերը բառակազմության ուսումնասիրության առարկան են՝ ի տարբերություն *do* «անել», *rain* «անձրև», *bow* «աղեղ, կամար» բառերի⁶⁰:

Բնական է, որ Յ. Մարչանդի այս տեսակետը չէր ընդունվի նրանից հետո բառակազմությամբ զբաղվող այլ լեզվաբանների

⁵⁷ H. Marchand, The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach, Wiesbaden, 1960.

⁵⁸ Տե՛ս [https://books.google.am/books?id=79BV7ZOxl1AC&pg=PA481&lpg=PA481&dq=English+WordFormation,+A+History+of+Research+\(1960-1995\)](https://books.google.am/books?id=79BV7ZOxl1AC&pg=PA481&lpg=PA481&dq=English+WordFormation,+A+History+of+Research+(1960-1995)) P. Štekauer, English Word-Formation, A History of Research (1960-1995), Tübingen, 2000, էջ 29:

⁵⁹ H. Marchand, The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach, München, 1969.

⁶⁰ Տե՛ս H. Marchand, The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach, Wiesbaden, 1960, էջ 2:

կողմից: Օրինակ՝ Վ. Ադամսը բառակազմության քննության առարկան է համարում ոչ միայն բաղադրյալ, այլև պարզ բառերը: «Անգլերենում բառը կարող է լինել պարզ՝ բաղկացած միայն մեկ բաղադրիչից, ինչպես՝ *bat* «չղջիկ», *hammer* «մուրճ» կամ *sycamore* «սպիտակ թխկի», կամ բաղադրյալ՝ բաղկացած մեկից ավելի բաղադրիչներից, ինչպես՝ *blackbird* «սև կեռնեխ», *fourth* «չորրորդ»⁶¹:

Ըստ հեղինակի՝ բաղադրյալ բառի բաղադրիչները կարող են լինել այլ համատեքստերում անկախ գործածություն ունեցող բառեր, ինչպես՝ *blackbird* «սև կեռնեխ», *devil-may-care* «անշրջահայաց» բառերի բաղադրիչները, ինչպես նաև անկախ գործածությունից զուրկ կախյալ ձևույթներ՝ նախածանցներ ու վերջածանցներ, ինչպես *uneatable* «ուտելու համար ոչ պիտանի» բառի առաջին և վերջին բաղադրիչները և *fourth* «չորրորդ» բառի *th*-ն: Սովորաբար բարդ են համարվում անկախ ձևույթների միացությամբ կազմված այն բառերը, որոնց բաղադրիչները բառի սահմաններից դուրս նույնպես հանդես են գալիս ինքնուրույնաբար, ինչպես՝ *frostbite* «ցրտահարություն», *tape-measure* «չափերիզ», *grass-green* «վառ կանաչ գույն (խոտի նման)»⁶²: Թեև այս բառերը բաղկացած են առանձին բաղադրիչ մասերից, սակայն դրանք ունեն մեկ բառին բնորոշ բոլոր հատկանիշները՝ բաղադրիչները չեն կարող ընդհատվել այլ բառերով, չի կարող խախտվել նաև բաղադրիչների հերթականությունը և այլն:

Ի տարբերություն բարդ բառերի՝ ածանցավոր բառերում բաղադրիչներից գոնե մեկը՝ ածանցը, կախյալ ձևույթ է և արտահայտում է ոչ թե բառային, այլ քերականական իմաստ: Այսպիսով, ըստ Վ. Ադամսի, բառաբարդումը կարող է ածանցումից տարբերվել ինչպես ձևի (ձևական) տեսանկյունից՝ բառի մեջ կախյալ ձևույթի առկայությամբ կամ բացակայությամբ, այնպես էլ իմաստի (բովանդակության) տեսանկյունից՝ ըստ նրա, թե արդյոք բառի երկու բաղադրիչ մասերը «բառային» իմաստ ունեն, թե ոչ⁶³: Մյուս կողմից, սակայն, հեղինակը նկատում է, որ այս տարբերակումն այդքան միանշանակ չէ, քանի որ «բառային» իմաստ ունեցող բաղադրիչները միշտ չէ, որ անկախ են, իսկ «քերականական» իմաստ ունեցողները

⁶¹ V. Adams, նշվ. աշխ., էջ 7:

⁶² Տե՛ս V. Adams, *An Introduction to Modern English Word-Formation*, London, 1973, էջ 30:

⁶³ Տե՛ս նույն տեղում:

միշտ չէ, որ կախյալ ձևույթներ են: Հետևաբար հաճախ դժվար է որոշել՝ բարդ բառի բաղադրիչի իմաստը բառային է, թե՞ քերականական: Օրինակ՝ *ironmonger* «երկաթեղեն վաճառող», *playwright* «թատերագիր» բառերի երկրորդ բաղադրիչները լեզվի զարգացման տվյալ փուլում անկախ գործածություն չունեն, իսկ *seaworthy* «նավագնացության համար պիտանի» բառի վերջին բաղադրիչը, ունենալով անկախ գործածություն, բարդության մեջ, սակայն, այլ նշանակություն է ձեռք բերում⁶⁴: Նման բաղադրիչները, փաստորեն, միջանկյալ տեղ են գրավում հիմքերի և ածանցների միջև՝ կոչվելով *semi-affixes* (կիսաածանցներ կամ ածանցակերպներ)⁶⁵:

Առհասարակ, բառաբարդումը ժամանակակից անգլերենի ամենագործուն բառակազմական եղանակներից է: Բարդ բառերը գործածական են եղել անգլերենում դեռևս հնագույն ժամանակներից, սակայն լեզվի պատմական զարգացման ընթացքում դրանք փոխարինվել են ֆրանսերենից ու լատիներենից կատարված փոխառություններով, հմմտ. *gold-hoard* «ոսկու պահուստ»> *treasure* «գանձ», *leech-craft* «բժշկի արհեստ»> *medicine* «բժշկություն» և այլն, բայց քանի որ ֆրանսերենը, մասամբ նաև լատիներենը չունեն անգլերենի բառաբարդման լայն հնարավորությունները, այդ լեզուներից արված փոխառությունները չնչին նպաստ ունեցան բառակազմական այս եղանակի զարգացման հարցում: Այնուամենայնիվ, ցանկացած ծագման հիմքերի բարդումը եղել և մնում է անգլերենի բառակազմության կարևոր եղանակը⁶⁶:

Ժամանակակից անգլերենի բառակազմության ուսումնասիրության ասպարեզում մեծ ավանդ ունի Լ. Բաուերը, որը 1983թ. հրատարակած իր «Անգլերենի բառակազմություն» գրքում⁶⁷ քննում է բառակազմությանն առնչվող հնչյունական, շարահյուսական, իմաստային հարցերը, բառաբարդումը, ածանցումը, տարբեր խոսքի մասերից սերված բարդ բառերի կաղապարները և այլն:

Անգլերենի բառակազմությունն ուսումնասիրել են նաև ռուս լեզվաբաններ Ա. Սմիռնիցկին, Ի. Առնոլդը, Ռ. Գինզբուրգը, Վ. Արակինը, Տ. Արբեկովան, Օ. Մեշկովը և այլք, ովքեր մանրամասնորեն

⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

⁶⁵ Տե՛ս Ի. Առնոլդ, *Лексикология современного английского языка*, М., 1986, էջ 117:

⁶⁶ Տե՛ս Ե. Бортничук, Ի. Василенко, Л. Пастушенко, *Словообразование в современном английском языке*, Киев, 1988, էջ 127.

⁶⁷ L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983:

նկարագրել ու քննել են դրան առնչվող հիմնական հարցերը, տվել բառակազմական կարևոր հասկացությունների (արմատ, հիմք, ածանց, բառ) բացատրությունն ու սահմանումը, ուսումնասիրել անգլերենի բառակազմության ինչպես հիմնական եղանակները՝ բառաձևացումը (affixation), բառաբարդումը (compounding/composition), խոսքիմասային փոխանցումը (conversion), հետադարձ բառակազմությունը (backformation), կրճատումը (clipping/shortening), հապավումը (abbreviation), բառ-ձուլումը (blending), այնպես էլ երկրորդական եղանակները՝ հնչյունափոխությունը (sound interchange), շեշտափոխությունը (stress interchange) և նմանաձայնությունը (sound imitation):

Բարդ բառի և բառակապակցության տարբերակման խնդիրը:

Անգլերենի բառակազմական հարցերի քննությամբ զբաղվող էզվաբանների առաջ հաճախ ծառացել է մի կարևոր հարց՝ բարդ բառի և բառակապակցության տարբերակման խնդիրը: Անգլերենի բառակազմագիտական գրականության մեջ այս խնդիրը կոչում են «stone wall» problem՝ «քարե պատ» խնդիր, քանի որ հատկապես վիճելի է երկու գոյականներով կազմված այս տիպի վերլուծական կապակցությունների բարդ բառ ինքնը: Ա. Սմիռնիցկին սրանք համարում է անկայուն կապակցություններ⁶⁸, որոնք ազատորեն կարող են վերածվել բառակապակցության, քանի որ առաջին՝ գոյական բաղադրիչը, սովորաբար հասկացվում է որպես գոյականի կոնվերսիայի⁶⁹ եղանակով ստացված ածական:

⁶⁸ Տե՛ս А. Смирницкий, Лексикология английского языка, М., 1998, էջ 114-134:

⁶⁹ Կոնվերսիան ամենազործուն բառակազմական եղանակն է անգլերենում, որը կոչում են նաև զրոյական ածանցում (zero derivation). այն մի խոսքիմասից անցումն է մեկ այլ խոսքիմասի, որի հիմքում ընկած են նաև բառիմաստի փոփոխության որոշակի գործոններ (տե՛ս Լ. Խաչատրյան, Էզվաբանության ներածություն, Եր., 2008, էջ 161-162): Կոնվերսիայի եղանակով անցում է տեղի ունենում գոյականից բայի՝ *fish > (to) fish* «ձուկ-ձուկ որսալ», բայից՝ գոյականի՝ *(to) jump > jump* «ցատկել-ցատկ» (տե՛ս R. Ginzburg et al., A Course in Modern English Lexicology, М., 1979, էջ 131-132), ածականից՝ գոյականի՝ *poor > the poor* «աղքատ-աղքատներ», գոյականից՝ ածականի՝ *cotton > cotton* «բամբակ-բամբակյա», ածականից՝ մակբայի՝ *low-low* «ցածր-ցածր (ստոր) կերպով»: Կոնվերսիայի եղանակով, սակայն, ամենից հաճախ գոյականներից են բայեր կազմվում (տե՛ս А. Cowie, Semantics, Oxford, 2009, էջ 19): Բառը որևէ ձևական փոփոխության չի ենթարկվում իր խոսքիմասային իմաստը փոխելիս. բառի հիմքը, արմատն ու քերականական ձևը լիովին համընկնում են արտասանությամբ, գրել աձևով, և միայն արտաքին միջոցները, օրինակ՝ հոդերը կամ համատեքստը կարող են օգնել՝ տարբերել ու, ենթադրենք, բայը գոյականից կամ ածականից գոյականից և այլն: Կոնվերսիական կան հայերենում, սակայն այնքան գործուն չէ, որքան անգլերենում. օրինակ՝ այդ եղանակով *կուլյր*, *ադեղնավոր*, *ծերունի* ածականներից ստացվել են համապատասխան գոյականները, *բարձր*, *մեղմ* ածականներից՝ համապատասխան մակբայները և այլն (տե՛ս Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 162):

Ա. Սմիռնիցկին և այլ լեզվաբաններ բարդությունը բառակապակցությունից տարբերակելիս առաջնորդվում են բարդությանը բնորոշ մի շարք հատկանիշներով՝ հնչյունական, կառուցվածքային, իմաստային և այլն: Նրանք հիմնականում նկատի ունեն հետևյալ չափանիշները.

1. Բառի մեջ *շեշտի* դիրքը. անգլերենի բարդությունների մեծ մասում *շեշտն* ընկնում է բարդ բառի առաջին՝ ձախակողմյան բաղադրիչի վրա, հատկապես երբ բառը կազմված է երկու գոյական բաղադրիչներից, ինչպես՝ *‘mankind* «մարդկային ցեղ», *‘pigeon-hole* «հեշտ խաբվող մարդ» և այլն: Ըստ Լ. Բլումֆիլդի, եթե *ice-cream*-ը արտասանվում է առաջին բաղադրիչի վրա հիմնական *շեշտով*՝ [*‘ajs-krijm*], ապա այն բարդ բառ է, իսկ եթե երկու հավասարապես *շեշտով* բաղադրիչներով է արտասանվում, ինչպես՝ [*‘ajs-‘krijm*], ապա բառակապակցությունն է, չնայած որևէ իմաստային տարբերություն չկա առաջինի և երկրորդի միջև⁷⁰:

Ձախակողմյան *շեշտի* կանոնը, սակայն, հիմնականում գործում է գոյական բարդությունների դեպքում (այն էլ՝ ոչ միշտ), այնինչ նույնը չի կարելի ասել ածական բարդությունների մասին, որոնց երկու բաղադրիչներն էլ *շեշտով* են, ինչպես՝ *‘easy-going* «հարմարվող բնավորությամբ», *‘ill-tempered* «դժուրաբորբոք» և այլն: Երբեմն էլ նույն բառը կարող է ունենալ տարբեր արտասանություններ, և կախված *շեշտի* դիրքից՝ կարող է փոխվել նաև բառի իմաստը, ինչպես՝ *‘bookcase* «գրապահարան» և *‘book ‘case* «գրքի թղթե կազմ»⁷¹:

Ըստ որոշ լեզվաբանների՝ անգլերենի բարդ բառերում կարող է լինել երեք տիպի *շեշտ*⁷².

• **Միավորիչ կամ հիմնական *շեշտ*** որն ընկնում է բարդ բառի առաջին բաղադրիչի վրա, ինչպես՝ *‘doorway* «շեմք», *‘honeymoon* «մեղրամիս»,

• **Կրկնակի *շեշտ*** երբ հիմնական *շեշտն* ընկնում է առաջին բաղադրիչի վրա, իսկ երկրորդական *շեշտը*՝ երկրորդի, ինչպես՝ *‘blood-vessel* «արյունատար անոթ», *‘mad-doctor* «հոգեբույժ»,

⁷⁰ Տե՛ս L. Bloomfield, *Language*, Chicago and London, 1984, էջ 228 (*ice-cream* բառի տառադարձությունը՝ ըստ Լ. Բլումֆիլդի):

⁷¹ Տե՛ս И. Арнольд, *Лексикология современного английского языка*, М., 1986, 113:

⁷² Տե՛ս R. Ginzburg et al., նշվ. աշխ., էջ 141-142:

• **Հավասար շեշտ** երբ բարդ բառի երկու բաղադրիչները հավասարապես շեշտված դիրքում են, ինչպես՝ *‘arm-‘chair* «բազկաթոռ», *‘icy-‘cold* «շատ սառը» և այլն:

Այս ամենով հանդերձ՝ կան բազմաթիվ բարդ բառեր, որոնցում շեշտն ընկնում է բառի երկրորդ բաղադրիչի վրա, բայց դա բնավ չի նշանակում, որ դրանք դադարում են բարդ բառեր լինելուց: Այսպիսիք են, օրինակ՝ մի շարք համադասական բարդություններ (coordinative/copulative compounds)⁷³, ինչպես՝ *geologist-astrónomer* «աշխարհագրագետ-աստղագետ», *scholar-philósopher* «գիտնական-փիլիսոփա» և այլն: Փաստորեն այս տիպի բարդությունները համակարգային բացառություններ են բարդ բառերում առաջնային շեշտի վերոնշյալ կանոնից⁷⁴:

Բարդ բառերի արտասանությունը կարող է տարբեր լինել՝ կախված նաև որոշ բարբառային առանձնահատկություններից, օրինակ՝ *red light* «կարմիր լույս» բարդության մեջ սովորաբար շեշտվում է երկրորդ բաղադրիչը, սակայն որոշ տարածաշրջաններում այն արտասանվում է առաջին բաղադրիչի շեշտով, ինչպես՝ *re’d light* «կարմիր լույս»⁷⁵: Ավելին, հաճախ չմիայն տարբեր մարդիկ են տարբեր շեշտադրությամբ արտասանում այս կամ այն բարդ բառը, այլև միևնույն մարդը կարող է տարբեր իրավիճակներում տարբեր կերպ արտասանել միևնույն բառը⁷⁶:

Այս ամենը նկատի ունենալով, իհարկե, դարձյալ, չի կարելի չնկատել, որ բազմաթիվ բարդություններում՝ հատկապես *N+N* կաղապարով, շեշտն ընկնում է բառի առաջին բաղադրիչի վրա, սակայն, ինչպես տեսնում ենք, դալիարժեք ընդունելի նախապայման չէ և չի կարող որոշիչ լինել բարդ բառի ու բառակապակցության սահմանազատման հարցում:

2. Բարդ բառի ու բառակապակցության տարբերակման հաջորդ չափանիշն այն է, որ, ի տարբերություն բառակապակցության, որը կարող է արտահայտել երկու կամ ավելի առանձին իմաստներ, բարդ բառի իմաստը սովորաբար դրա բաղադրիչների իմաստային

⁷³ Տե՛ս նույն տեղում, էջ 146:

⁷⁴ Տե՛ս I. Plag, *Word-Formation in English*, Cambridge, 2003, էջ 138:

⁷⁵ Տե՛ս M. E. Ryder, *Ordered Chaos. The Interpretation of English Noun-Noun Compounds*, Vol. 123, Berkeley, Los Angeles, London, 1994, էջ 13:

⁷⁶ Տե՛ս L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 103:

միաձուլումն է, համակցումը (semantic cohesion): Օրինակ՝ *tallboy* բառի ընդհանուր իմաստն է «բարձր կոմոդ (արկղերով պահարան)», մինչդեռ եթե դիտարկենք *tall boy* բառն իբրև բառակապակցություն, ապա այն կունենա երկու տարբեր իմաստներ՝ «1. երիտասարդ տղա, 2. բարձրահասակ»⁷⁷: Մյուս կողմից, սակայն, առաջին դեպքում բարդ բառը որևէ առնչություն չունի մարդու հետ. այն կահույքի տեսակի անվանում է, մինչդեռ երկրորդ դեպքում այն վերաբերում է մարդուն: Սրանից ելնելով՝ պետք է եզրակացնենք, որ եթե բառն արտահայտում է ոչ ուղիղ, այլ փոխաբերական իմաստ, ապա կարող է համարվել բարդ բառ, իսկ ուղիղ իմաստ արտահայտելու դեպքում՝ բառակապակցություն: Սակայն այդ դեպքում անգլերենի բոլոր դարձվածային կապակցությունները բարդ բառեր կհամարվեն, քանի որ դրանց բաղադրիչների իմաստից չի բխում դրանց արտահայտած ընդհանուր իմաստը: Հետևաբար իմաստային այս չափանիշը նույնպես բառի ու բառակապակցության տարբերակման հարցում չի կարող համարվել լիարժեք ընդունելի:

3. Ա. Սմիռնիցկին բարդ բառի ու բառակապակցության տարբերակման չափանիշ է համարում առաջինի ունեցած ձևակառուցվածքային ամբողջականությունը (*formal integrity-цельнооформленность*)⁷⁸: Հեղինակն իր դրույթն ապացուցելու համար *shipwreck* «նավաբեկություն» բարդ բառը հակադրում է *(the) wreck of a ship* «նավի խորտակում» բառակապակցությանը և նշում, որ չնայած դրանք երկուսն էլ նույն իմաստն ունեն և նույն բառային կազմը, վերաբերում են օբյեկտիվ իրականության միևնույն երևույթին, սակայն միաժամանակ էապես միմյանցից տարբերվում են: *Shipwreck* բառի հոգնակին, օրինակ, կազմվում է ամբողջ բառի վերջում *s* մասնիկի ավելացմամբ, և ստացվում է *shipwrecks* բառը, իսկ *the wreck of a ship* բառակապակցության դեպքում *s* մասնիկն ավելանում է կա՛մ բառակապակցության յուրաքանչյուր բաղադրիչին առանձին՝ *(the) wreck-s of (the) ship-s*, կա՛մ երկրորդ բաղադրիչին՝ *(the) wreck of (the) ship-s*: Հետևաբար, մինչդեռ բարդ բառն (*shipwreck*) ունի ձևակառուցվածքային ու գործառնական ամբողջականություն, բառակապակցության (*the wreck of the ship*) բաղադրիչները, ընդհակառակն, առանձին-առանձին են եւ-

⁷⁷ Տե՛ս Գ. Антрушина, О. Афанасьева, Н. Морозова, Лексикология английского языка, М., 1985, էջ 86-87:

⁷⁸ Տե՛ս А. Смирницкий, Лексикология английского языка, М., 1998, էջ 33:

թարկվում քերականական փոփոխությանն են: Նույնը երևում է նաև *shipwreck* գոյականին համապատասխան՝ *to shipwreck* բայի դեպքում. քերականական փոփոխության է ենթարկվում բառը՝ որպես մեկ ամբողջություն՝ *shipwreck-ed, shipwreck-ing* և այլն:

4. Լ. Բլումֆիլդը բարդ բառը բառակապակցությունից տարբերակող հատկանիշ է համարում նաև առաջինի անընդհատելիությունը՝ անընդմիջարկելի լինելը (*indivisibility*)⁷⁹: Որպես օրինակ՝ հեղինակը հակադրում է *blackbird* «սև կեռնեխ» բարդ բառը *black bird* «սև թռչուն» բառակապակցությանը: Առաջին դեպքում մենք բարդ բառի բաղադրիչների միջև այլ բառ չենք կարող դնել, իսկ երկրորդ՝ բառակապակցության դեպքում այն կարող ենք ընդմիջել, ինչպես՝ *black and white birds* «սև և սպիտակ թռչուններ»: Սրա հետմեկտեղ, սակայն, հեղինակը նշում է, որ կան նաև այնպիսի բարդ բառեր (նախդիրներով և այլն), որոնք ենթակա են ընդմիջարկման, սակայն այլ հատկանիշներով, միևնույնն է, դասվում են ոչ թե բառակապակցությունների, այլ բարդ բառերի շարքին:

5. Լ. Բլումֆիլդը առաջ է քաշում նաև բառը բառակապակցությունից տարբերակելու շարահյուսական չափանիշը (*syntactic criterion*)՝ նշելով, որ *black birds* բառակապակցության մեջ *black* «սև» բառը կարող է ստանալ *very* լրացումը (*very black birds*՝ «շատ սև թռչուններ»), որը չի կարող ստանալ *blackbird* «սև կեռնեխ» բարդ բառի *black* բաղադրիչը⁸⁰: Այս չափանիշը, սակայն, մյուսների նման չի կարող հաստատապես ընդունելի լինել, քանի որ *very* լրացումը չեն կարող ստանալ նաև մի շարք բառակապակցությունների առաջին բաղադրիչները:

Անգլերենում բարդությունը բառակապակցությունից տարբերակելիս չի կարելի լիովին հենվել նաև դրանց գրության ձևի վրա. միևնույն բարդությունը կարող է գրվել տարբեր կերպ՝ գծիկով, միասին և անջատ, ինչպես՝ *air-conditioning/air conditioning* «օդակարգավորիչ համակարգ», *easy-going/easy going/easygoing* «համակերպվող» և այլն: Բարդ բառերի գրությունը միատեսակ չէ տարբեր բառարաններում, հաճախ նույնիսկ միևնույն հեղինակը նույն բառը մի

⁷⁹ Տե՛ս L. Bloomfield, *Language*, Chicago and London, 1984, էջ 232:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում:

դեպքում գրում է միասին, մի ուրիշ դեպքում՝ անջատ կամ միացման գծիկով:

Այսպիսով, անգլերենում բարդ բառը բառակապակցությունից տարբերակելիս պետք է հենվել ոչ թե մեկ, այլ միանգամից մի քանի չափանիշների վրա՝ բառի մեջ շեշտի դիրքի, բառի արտահայտած իմաստային, քերականական ու շարահյուսական, գործառական ամբողջականության վրա: Այսպես, *blackboard* բառի դեպքում շեշտն ընկնում է բառի առաջին բաղադրիչի վրա, բառն ունի միասնական գրություն, մեկ ընդհանուր իմաստ՝ «գրատախտակ», գործառական միասնություն (քերականական փոփոխությունների է ենթարկվում բառն ամբողջությամբ՝ *blackboards* «գրատախտակներ»), այն անընդմիջարկելի է (դրա առաջին բաղադրիչը չի կարող ստանալ լրացում՝ *very black board*) և այլն: Այս բոլոր հատկանիշները միասնաբար վկայում են *blackboard* բառի բարդություն, այլ ոչ թե բառակապակցություն լինելու մասին:

Այնուամենայնիվ, անհասկանալի է, թե ինչու է լեզուն նույնատիպ բառերի կապակցությամբ մերթ քառակապակցություն ստեղծում, մերթ քառ. օրինակ՝ ամենևին տրամաբանական չէ, որ *Madison Street* «Մեդիսոն փողոց»-ը բարդություն է, իսկ *Madison Avenue* «Մեդիսոն պողոտա»-ն՝ բառակապակցություն, քանի որ երկուսի գերադաս անդամն էլ աջակողմյան բաղադրիչն է, երկուսն էլ գոյականական կապակցություններ են, երկուսի բաղադրիչների միջև նույն իմաստային և շարահյուսական հարաբերություններն են և, փաստորեն, միայն շեշտի դիրքից կախված է սրանցից առաջինը համարվում բարդություն, երկրորդը՝ բառակապակցություն⁸¹:

Բարդության իմաստային կենտրոնի (semantic head)

հասկացությունը: Չուգադրվող լեզուներում հաճախ բարդ բառերի իմաստն անմիջականորեն բխում է դրանց կազմի մեջ մտնող բաղադրիչներից, ինչպես՝ *բարձրաշենք* «բարձրակառույց շենք», *nobleman* «ազնվական»: Սակայն կան բարդություններ, որոնց մեջ կատարվել են բաղադրիչների իմաստային փոփոխություններ, և այդ բառերի իմաստները ճիշտ արտահայտելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուրի համար տալ լրացուցիչ բացատրություն: Այսպես, *մեծատուն* բառի իմաստն է «հարուստ, մեծ կարողություն տեր», ոչ թե

⁸¹Տե՛ս I. Plag, *Word-Formation in English*, Cambridge, 2003, էջ 139:

տան տեսակ է (*մեծ, փոքր*), կամ, ասենք, անգլերենում *redhead* բառը նշանակում է «կարմրահերմարդ», ոչ թե մատնանշում է գլխի տեսակ⁸²: Մյուս կողմից, օրինակ՝ *headache* բառի իմաստն ամբողջությամբ բխում է բառի բաղադրիչներից՝ «գլխացավ», բայց *bigwig* բառի բաղադրիչներին նայելով՝ դժվար է գուշակել, որ այն նշանակում է «մեծանուն մարդ»:

Անգլերենում առաջին տիպի բարդ բառերը, որոնց իմաստային կենտրոնը բառի ներսում է, կոչվում են *endocentric compounds* (*ներկենտրոն բարդություններ*). օրինակ՝ *doorframe* «դռան շրջանակ», *file cabinet* «փաստաթղթերի պահարան» բառերի դեպքում *frame* «շրջանակ», *cabinet* «պահարան» բառերը դրանց իմաստային կենտրոններն են, ողջ բաղադրության ենթանիշերը (*hyponyms*)՝ բառեր, որոնց իմաստն ընդգրկվում է ընդհանուր բաղադրության կամ բարդության իմաստի մեջ, իսկ երկրորդ խմբի բառերը, որոնց իմաստային կենտրոնը բառի մեջ չէ, կոչվում են *exocentric compounds* (*արտակենտրոն բարդություններ*), ինչպես՝ *daredevil* «խիզախ», *rubberneck* «հետաքրքրասեր մարդ» և այլն⁸³: Վերջիններում ակնհայտ իմաստային կենտրոն չկա, քանի որ դրանք վերաբերում են մարդկանց, սակայն բարդությունների երկրորդ՝ հիմնական իմաստն արտահայտող բաղադրիչը, ինչպես տեսնում ենք, *մարդ (man)* բառը չէ:

Լ. Բլումֆիլդը ներկենտրոն է համարում այն բարդությունները, որոնց իմաստային կենտրոնն ունի ամբողջ բարդ բառին հատուկ գործառնություն և խոսքիմասային պատկանելությունը: Օրինակ՝ *door-handle* «դռան բռնակ»-ը բռնակի մի տեսակ է. դրավերջին բաղադրիչը՝ *handle* «բռնակ»՝ բառի իմաստային կենտրոնը, ունի նույն գործառնություն և խոսքիմասային պատկանելությունը, ինչ ամբողջ բաղադրությունը. երկուսն էլ գոյական են, իսկ *turnkey* «բանտապահ» բառի իմաստային կենտրոնը *turn* «պտտել» անորոշ դերբայն է, մինչդեռ բարդությունն ամբողջությամբ գոյական խոսքի մաս է: Հետևաբար վերջինս արտակենտրոն բարդություն է, այսինքն՝ արտակենտրոնությունը բնորոշվում է նաև այս տեսանկյունից⁸⁴:

⁸² Տե՛ս D. G. Miller, *English Lexicogenesis*, Oxford, 2014, էջ 54:

⁸³ Տե՛ս И. Арнольд, *Лексикология современного английского языка*, М., 1986, էջ 124:

⁸⁴ Տե՛ս L. Bloomfield, *Language*, Chicago and London, 1984, էջ 235:

Կան լեզվաբաններ, որոնք հակված են կարծելու, թե *loudmouth* «գոռգոռան մարդ» տիպի բարդությունները միայն իմաստային տեսանկյունից են արտակենտրոն (*loudmouth* բառը չի մատնանշում «բերանի տեսակ», այլ ունի «գոռգոռան մարդ» իմաստը), մինչդեռ քերականական տեսանկյունից ներկենտրոն են, այսինքն՝ բարդությունը գոյական է՝ այնպես, ինչպես դրա աջակողմյան բաղադրիչը, հետևաբար քերականական տեսանկյունից կենտրոնը բառի ներսում է⁸⁵:

Մենք, սակայն, արտակենտրոնությունը որոշելիս հակված ենք ելնել տային համարելու իմաստային արտակենտրոնությունը և կարծում ենք, որ, այնուամենայնիվ, *loudmouth* «գոռգոռան մարդ» տիպի բոլոր բարդություններն արտակենտրոն են, քանի որ թեև *mouth* «բերան» բառը գոյական է, այնպես ինչպես ամբողջ բարդությունը, սակայն բարդության իմաստային կենտրոնը՝ «մարդ» բառը, բարդության մեջ ձևական արտահայտություն չունի:

Բարդությունների այս տիպը սանսկրիտի քերականության մեջ կրում է «բահուլվրիհի» անունը՝ *bahuvrihi compounds*⁸⁶, ինչպես՝ *highbrow* «գիտակ ձևացող մարդ», *lionhearted* «առյուծասիրտ», *egghead* «գիտուն», որոնք ժամանակակից անգլերենում կոչվում են *possessive exocentric compounds* «ստացական արտակենտրոն բարդություններ»⁸⁷, քանի որ սրանցում առարկան փոխաբերաբար անվանվում է՝ իր ամենացայտուն (արտաքին կամ ներքին) հատկանիշից ելնելով:

Բարդ բառի և դարձվածքի տարբերակման խնդիրը: Անգլերենում հաճախ բառն ու դարձվածքը տարբերակելը դժվար է, օրինակ՝ *mental hospital* բառը ոչ թե նշանակում է «մտավոր հիվանդանոց», այլ «հոգեբուժարան»: Չարց է ծագում՝ սա փոխաբերական իմաստով բարդություն է, թե՞ դարձվածք⁸⁸:

Ա. Սմիռնիցկին, օրինակ, *man-of-war* «ռազմական», *son-in-law* «վեսա» տեսակի կազմությունները համարում է ոչ թե բարդ բառեր, այլ դարձվածային կապակցություններ՝ իր տեսակետը հիմնավորելով

⁸⁵ Տե՛ս I. Plag, նշվ. աշխ., էջ 146:

⁸⁶ Տե՛ս И. Арнольд, նշվ. աշխ., էջ 125:

⁸⁷ Տե՛ս G. Kovalenko, *Lexicology of the English Language*, K., էջ 123:

⁸⁸ Տե՛ս https://books.google.am/books?id=eK8R61s_gwQC&pg=PR2&lpg=PR2&dq=R.+Benczes,+Creative+Compounding+in+English:+The+Semantics+of+Metaphorical+and+Metonymical+Noun-Noun+Combinations
R. Benczes, *Creative Compounding in English: The Semantics of Metaphorical and Metonymical Noun-Noun Combinations*, Amsterdam/Philadelphia, 2006, էջ 78:

նրանով, որ դրանք փոխաբերական իմաստ ունեն, և, ի տարբերություն բարդ բառերի, դրանց առաջին բաղադրիչն է ստանում հոգնակիակերտ վերջավորություն՝ *mans-of-war* «ռազմանավեր», *sons-in-law* «փեսաներ», ու թեև սեռական հոլովի իմաստն արտահայտող *s* մասնիկը դրվում է վերջին բաղադրիչի վրա՝ *man-of-war's* «ռազմանավի», *son-in-law's* «փեսայի», սակայն դա էլ, ըստ հեղինակի, բավարար չէ կազմությունը բարդ բառ համարելու համար, քանի որ անգլերենում սեռականի *s* մասնիկը միանում է ոչ միայն բարդ բառերին, այլև բառակապակցություններ հիշեցնող տարբեր կազմությունների և անգամ նախադասությունների, ինչպես՝ *Tom's book* «Թոմի գիրքը», *Ann and Mary's toys* «Աննայի ու Մերիի խաղալիքները», *somebody else's car* «մեկ ուրիշի մեքենան», *the man I saw yesterday's son* «երեկ տեսածս տղամարդու որդին» և այլն⁸⁹:

Մեր համոզմամբ, սակայն, *bread and butter* «հանապազօրյա հաց», *man-of-war* «ռազմանավ», *son-in-law* «փեսա» տիպի կազմությունները դասվում են բարդ բառերի, ոչ թե դարձվածքների շարքին, և այս առումով հակված ենք հետևելու Լ. Բաուերին, որը սրանք բառակապակցական բարդություններ է համարում, քանի որ դրանք մի կողմից ունեն բարդ բառին, իսկ մյուս կողմից՝ բառակապակցությանը բնորոշ հատկանիշներ⁹⁰: Այս բառերը տեղ են գտել նաև Կ. Սադիկի «Բարդ բառեր. 7000 բարդ և միացման գծիկով բառեր» բառարանում⁹¹:

Ի. Առնոլդը դարձվածային կապակցությունների մեջ ընդգրկում է այնպիսի կառույցներ, ինչպիսիք են, օրինակ՝ *cat's paw* «շահագործվող մարդ», *lord and master* «ամուսին», *maiden name* «օրիորդական ազգանուն», *ways and means* «որևէ նպատակի հասնելու միջոցներ» և այլն⁹²: Ի. Առնոլդի առանձնացրած դարձվածային կապակցությունների որոշ օրինակներ արդեն իսկ վիճելի են, քանի որ մի կողմից դրանք կարող են դիտարկվել որպես անվանական հարադրություններ՝ փոխաբերական իմաստով, մյուս կողմից դրանցից շատերը կարելի է գտնել նաև անգլերենի դարձվածաբանական

⁸⁹ Տե՛ս A. Смирницкий, Лексикология английского языка, М., 1998, 219-220:

⁹⁰ Տե՛ս L. Bauer, English Word-Formation, Cambridge, 1983, էջ 206-207:

⁹¹ Տե՛ս C. Sadik, The Compound Words; 7000 Compound and Hyphenated Words, United States, 2013:

⁹² Տե՛ս И. Арнольд, նշվ. աշխ., էջ 172-174:

բառարաններում⁹³: Այսպես, *lord and master* «ամուսին», *ways and means* «որևէ նպատակի հասնելու միջոցներ» կապակցություններն ըստ L. Բաուերի՝ բառակապակցական բարդությունների մի տեսակն են՝ շաղկապական համադասական հարադրությունները⁹⁴, մինչդեռ Ի. Առնոլդը սրանք համարում է դարձվածային կայուն կապակցություններ: Ստացվում է, որ Ի. Առնոլդը փոխաբերական իմաստ ունեցող ցանկացած կայուն կապակցություն համարում է դարձվածային միավոր:

Երբեմն նաև հայերենում հստակ չէ՝ այս կամ այն բաղադրությունը բա՞ռ է, թե՞ դարձվածք: Օրինակ՝ Ա. Մարգարյանը մի կողմից *աղ ու հաց, թուք ու մուր, շուն ու կատու* վերլուծական կառույցները համարում է *բաղիյ ու սական բարդություններ*՝ դրանք ընդգրկելով իր «Հայերենի բաղիյ ու սական բարդությունները» գրքի ընդարձակ բառարանում⁹⁵, իսկ մյուս կողմից, հաշվի առնելով դրանց փոխաբերականությունը, զետեղում է մեկ ընդհանուր նշանակություն արտահայտող երկու տարանջատ բաղադրիչներից կազմված անվանական (ոչ բայական) դարձվածքների մեջ⁹⁶:

Դարձվածքները և բարդ բառերը տարբերակող մի շարք չափանիշներ են առաջ քաշվել, սակայն դրանք լիովին վստահելի չեն բարդ բառի ու դարձվածքի սահմանազատման հարցում: Դարձվածքների ընդգրկման սահմանները լայն են և ոչ հստակ, բացի այդ՝ դրանք լեզվում գոյություն ունեցող արդեն կայուն, պատրաստի միավորներ են, որոնց առաջացումը բուն բառակազմական գործընթաց չէ:

Անգլերենի բարդությունների դասակարգումը՝ հայերենի գուգադրությամբ: Ե՛վ անգլերենում, և՛ հայերենում բարդությունները սովորաբար դասակարգվում են ըստ կառուցվածքի, դրանց բաղադրիչների կապակցման ձևի, իմաստային և շարահյուսական հարաբերությունների:

⁹³ Տե՛ս Ս. Սեֆերյան, Ա. Լազարյան, Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան, Եր., 2005, Пархамович Т. В. Англо-русский, русско-английский словарь фразеологизмов, Минск, 2011 և այլն:

⁹⁴ Տե՛ս L. Bauer, նշվ. աշխ., էջ 207:

⁹⁵ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի բաղիյ ու սական բարդությունները, Եր., 1986, էջ 87-300:

⁹⁶ Տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզուն (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 305:

Երկու լեզուներում բարդ բառերի իմաստային վերլուծությունը ցույց է տալիս, որ բարդություն բաղադրիչների փոխհարաբերությունները լինում են համադասական (*coordinative or copulative, additive*) և ստորադասական (*subordinative or determinative*): Հետևաբար բարդությունների բաղադրիչների միջև իմաստային կապի տեսակից կախված՝ տարբերում ենք *համադաս* և *ստորադաս* բաղադրիչներով բարդություններ:

Համադաս բաղադրիչներով բարդություններում բաղադրիչներից ոչ մեկը մյուսին ստորադասված չէ, այսինքն՝ մյուսի լրացումը չէ, ինչպես՝ *Anglo-American* «1. անգլոամերիկացի, 2. անգլոամերիկյան», *house and home* «տուն ու տեղը, ունեցվածքը», *singer-composer* «երգիչ-երգահան» և այլն: Բաղադրիչների միջև համադասական հարաբերությունը կարող է արտահայտվել համադասական շաղկապներով, ինչպես՝ *ահ ու դող, arts and crafts* «արվեստներ ու արհեստներ», նախդիրներով՝ *ճյուղ առ ճյուղ, eyeball-to-eyeball* «երես առ երես», հոդակապով՝ *ազգաւոր հմ:* Բաղադրիչները կարող են կապվել նաև իմաստային նույնությամբ՝ *ալյակ-ալյակ, երփն-երփն, ստեպ-ստեպ* և այլն. սրանք կրկնավոր բաղադրություններ են: Անգլերենում ևս համադաս բաղադրիչներով բարդությունների շարքին են դասվում նաև կրկնավոր բարդությունները (*reduplicative compounds*), ինչպես՝ *hurry-scurry* «իրարանցում», *tohubohu* «թոհուբոհ (թոհ և բոհ)՝ քառս, խառնաշփոթություն»⁹⁷ և այլն:

Համազոր հարաբերությամբ բաղադրությունների մի առանձին տեսակ են *restaurant-car* «ռեստորան-ավտոմեքենա», *scientist-philosopher* «գիտնական-փիլիսոփա» տիպի կառույցները, որոնք անգլերենում կոչվում են նաև *appositional compounds* (*առդրական բարդություններ*)⁹⁸: Սրանք և համադաս բաղադրիչներով մյուս բարդությունները սանսկրիտի քերականության մեջ կոչվում են *dvandva compounds*⁹⁹: *Scientist-philosopher* բաղադրությունը վերաբերում է մարդու, որը և՛ գիտնական է, և՛ փիլիսոփա, *restaurant-car* բաղադրությունը նշանակում

⁹⁷ Հայերենում և անգլերենում այս կրկնավորը փոխառությունն է եբրայերենից՝ *tōhū wa-bōhū* «ամայի և անապատ» նշանակությամբ (տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 270, <http://www.oxforddictionaries.com/definition/english/tohubohu>-Oxford Dictionaries):

⁹⁸ Տե՛ս L. Bauer, նշվ. աշխ., էջ 203:

⁹⁹ Տե՛ս L. Bloomfield, *Language*, Chicago and London, 1984, էջ 235:

Է «ռեստորան, որ նաև ավտոմեքենա է»: Սրանք նման են հայերենի առօրական հարադրություններին՝ *գրող-երգիծաբան, տուև-թանգարան* և այլն:

Ինչ վերաբերում է ստորադաս բաղադրիչներով բարդություններին, հայերենում դրանց գերադաս բաղադրիչը կարող է լինել *անվանական* կամ *բայական*: Հայերենի բարդությունների մեծ մասում գերադաս բաղադրիչը բարդության երկրորդ եզրում է: *Անվանական* գերադաս բաղադրիչով բարդությունների գերադաս բաղադրիչներն արտահայտված են գոյականով, իսկ ստորադասները՝ տարբեր խոսքի մասերով: Այդ բարդություններում բազմաթիվ են բաղադրիչների **որոշիչ-որոշյալ** շարահյուսական հարաբերությամբ բարդ բառերը, որոնցում երկրորդ բաղադրիչը առաջինի նկատմամբ իմաստային առումով գերադաս է, ինչպես՝ *մեծարժեք, նորիմաստ, ոսկեդրվագ, չարասիրտ, սրահամ* և այլն:

Կենսունակ են նաև **հատկացուցիչ-հատկացյալ** շարահյուսական հարաբերությամբ բարդ բառերը, որոնցում երկրորդ բաղադրիչը՝ հատկացյալն է բարդության իմաստային միջուկը, իսկ առաջինը՝ հատկացուցիչը, «ցույց է տալիս գոյականով արտահայտված հատկացյալի վերաբերումը, պատկանելությունը մի այլ առարկային...»¹⁰⁰, ինչպես՝ *դռնագլուխ, լեռնալանջ, ծաղկաման, ծովեզերք, հարսնաքույր* և այլն:

Անգլերենում **որոշիչ-որոշյալ** կապակցությամբ բարդություններ են՝ *high court* «գերագույն դատարան», *kindhearted* «բարեսիրտ», *lowland* «դաշտավայր», *sweetheart* «թանկագին անձ», *mainstreet* «մայրուղի» և այլն: **Հատկացուցիչ-հատկացյալ** կապակցությամբ բարդություններ են, օրինակ՝ *eyelash* «թարթիչ», *horsehair* «ծիու մազ», *raindrop* «անձրևի կաթիլ», *shipboard* «նավի տախտակամած», *devil's claw* «գորտնուկ», *cat's cradle* «կատվի օրորոց (խաղի տեսակ)»:

Բայական գերադաս բաղադրիչով բարդ բառերի բաղադրիչների միջև հիմնականում առկա են ենթակայական (*այգաքաց, waterfall* «ջրվեժ»), խնդրային (*հացավաճառ, sighsee* «տեսարժան վայրեր դիտել») և այլ շարահյուսական հարաբերություններ:

¹⁰⁰ Ռ. Մկրտչյան, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԼՈՅ, IV, Եր., 1977, էջ 135-136:

Թեև սովորաբար հայերենի բարդությունների մեջ գերադաս բաղադրիչը երկրորդ եզրում է, սակայն կան բարդություններ, որոնցում, ընդհակառակն, գերադաս բաղադրիչն ընկնում է առաջին եզրում, ինչպես՝ *արժանահավատ, արժանապատիվ, երանգաշատ, ծիածնաբորբ* և այլն: Այդ պատճառով սրանք դիտարկվում են որպես սխալ կազմությամբ և մերլեզվի բառաբարդման կանոններին խորթ կառույցներ: Նման կազմությունները Մ. Աբեղյանը համարում է հունարենի ազդեցության հետևանք՝ օտարաբան կազմություններ¹⁰¹: Յ. Աճառյանը նշում է, որ հունաբան դպրոցում կազմված «սիրաբան» բառի փոխարեն, ըստ օրենքի, պետք է լիներ «բանասեր (բանասեր)», որ նշանակում է «բան սիրող», մինչդեռ «սիրաբան» բառը պետք է նշանակեր «սիրո խոսք»¹⁰²:

Անգլերենում, ըստ բարդությունների բաղադրիչների միջև եղած իմաստային կապերի, կարող են դիտվել տեղի/ուղղության, ժամանակի, նպատակի, պատճառի, ձևի, չափ ու քանակի և այլ հարաբերություններ: Այսպես, բարդությունները հիմնականում արտահայտում են հետևյալ իմաստները. ա) **տեղի և ուղղությամբ**՝ *marketplace* «առևտրի հրապարակ», *uphill* «սարնիվեր», բ) **ժամանակի**՝ *summer school* «ամառային դպրոց», *winter holidays* «ձմեռային արձակուրդ», գ) **նպատակի**՝ *bottle-opener* «խցանահան», *fishhook* «ձկնորսական կարթ»¹⁰³, դ) **ձևի**՝ *broadsheet* «լայնաֆորմատ լուրջ թերթ՝ լրագիր», *roundworm* «կլոր ճիճու», ե) **չափ ու քանակի**՝ *twopence* «երկպենսանոց», *long-term* «երկարատև», զ) **նյութի և դրանից պարաստված առարկայի**՝ *cotton dress* «բամբակյա զգեստ», *silver medal* «արծաթե մեդալ», է) **նմանողական կամ համեմատական**՝ *bellflower* «զանգակածաղիկ», *goldfish* «*ոսկե ձկնիկ*» և այլն:

Լ. Բլումֆիլդը, ըստ բարդության համապատասխան բառակապակցություն ունենալու, դրա բաղադրիչների շարադասության և այլնի, առանձնացնում է *շարահյուսական* (*syntactic*),

¹⁰¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Յայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 164:

¹⁰² Տե՛ս Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Եր., 1957, էջ 125:

¹⁰³ Սրանք հաճախ կոչվում են նաև գործառական (\$ուկցիոնալ) բարդություններ, քանի որ ցույց են տալիս առարկայի կատարած գործառույթը (տե՛ս Յ. Дубенец, Современный английский язык; Лексикология, М., Ростов-на-Дону, 2010, էջ 46):

կիսաշարահյուսական (semi-syntactic) և ոչ շարահյուսական (asyntactic) տեսակներ¹⁰⁴:

Շարահյուսական բարդություններին բաղադրիչները միմյանց նկատմամբ ունեն քերականական այն նույն հարաբերությունը, ինչպիսին առկա է դրանց համապատասխան բառակապակցություններում: Օրինակ՝ *blackbird* «սև կեռնեխ» բարդությունը նույն A+N կաղապարով է կազմված, որով և բնութագրվում է *black bird* «սև թռչուն» բառակապակցությունը, ընդ որում, երկու դեպքում էլ նույնն է նաև բաղադրիչների շարադասությունը, այսինքն՝ բարդությունն իր կառուցվածքով համապատասխանում է տվյալ լեզվի շարահյուսական կառույցներին և բառակապակցություններին կազմության կանոններին:

Կիսաշարահյուսական բարդությունները (semi-syntactic compounds) թեև ունեն իրենց համապատասխան բառակապակցությունները, սակայն դրանց բաղադրիչների շարադասությունը չի համընկնում համապատասխան բառակապակցության բաղադրիչների շարադասությանը, կամ դրանց մեջ բացակայում է շարահյուսության մակարդակում անհրաժեշտ այս կամ այն միավորը, օրինակ՝ *the* հոդը կամ *and* շաղկապը, ինչպես՝ *to housekeep* «տնտեսվարել» vs. *to keep the house, bittersweet* «դառնաքաղցրավուն» vs. *bitter and sweet* և այլն:

Իսկ ընդհանրապես համապատասխան բառակապակցություններ չունեցող բարդությունները կոչվում են ոչ շարահյուսական բարդություններ՝ *asyntactic compounds* (չեն ենթարկվում անգլերենի շարադասական կանոններին), օրինակ՝ *bookstore* բարդությանը համապատասխանում է *store for books* և ոչ թե *book for store* բառակապակցությունը¹⁰⁵:

Ըստ բաղադրիչների միացման ձևի՝ բարդ բառերն անգլերենում բաժանվում են հետևյալ տեսակների.

1. Բարդ բառեր, որոնցում բաղադրիչները պարզապես դրվում են մեկը մյուսի կողքին՝ առանց միավորիչ մասնիկների՝ գրվելով միասին, անջատ կամ գծիկով, ինչպես՝ *rainstorm* «անձրևամրրիկ», *crime prevention* «հանցադործության կանխում», *fair-trade* «արդար առևտուր» և այլն:

¹⁰⁴ Տե՛ս L. Bloomfield, նշվ. աշխ., էջ 233-234:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 233-235:

2. Բաղադրական ձևեր (ձայնավորով կամ բաղաձայնով) բարդություններ (morphological compounds with a vowel or a consonant as a linking element), որոնց կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերը միացած են կամ *o*, *i* ձայնավորներով, կամ *s* բաղաձայնով, ինչպես՝ *bridesmaid* «հարսնաքույր», *neurobiology* «նյարդակենսաբանություն», *sociolinguistics* «հանրալեզվաբանություն», *tragicomic* «ողբերգակատակերգական» և այլն: *O*, *i* ձայնավորներով բառերը հիմնականում գիտական եզրույթներ են՝ հունարենից և լատիներենից փոխառյալ բաղադրիչներով, իսկ *s* բաղաձայնով բարդությունները մնացուկային ձևեր են՝ ավանդված լեզվի զարգացման ավելի հին շրջանից¹⁰⁶: Բաղադրական ձևեր (ձայնավորով կամ բաղաձայնով) բարդությունները թեև բնորոշ են անգլերենին, սակայն խորքային իմաստով անգլերենի բառակազմական գործընթացներին չեն մասնակցում, դիպվածային բնույթ են կրում¹⁰⁷:

3. Բարդություններ, որոնք կարծես խոսքաշարից պոկված հատվածներ լինեն: Դրանք քարացած շարահյուսական կառույցներ են, օրինակ՝ *dyed-in-the-wool* «ամբողջովին», *jack-in-the-box* «դուրս ցատկոդ տիկնիկով տուփ (խաղալիք)», *lily-of-the-valley* «հովտաշուշան»: սրանց հատուկ են այլաբանական, փոխաբերական իմաստները:

Ըստ բաղադրիչների կառուցվածքի՝ անգլերենի բարդությունները բաժանվում են հետևյալ տեսակների.

1. «Բուռ» կամ «իսկական բարդություններ» (compound words proper)¹⁰⁸, որոնք կազմված են կամ պարզ արմատների՝ անաձանց հիմքերի միացմամբ, կամ հիմքերից մեկն ածանցավոր է, բայց երկու բաղադրիչներն էլ կարող են ինքնուրույն գործածություն ունենալ, ինչպես՝ *baggage claim* «ուղեբեռի ստացման կետ», *lifetime* «կյանքի տևողություն», *time-consuming* «ժամանակատար», *looking-glass* «հայելի», *window-shopper* «ցուցափեղկեր դիտելու սիրահար» և այլն:

2. Բաղաձանցավոր բառեր (derivational compounds), որոնցում պարզ հիմքերի հետ միասին առկա է նաև ածանց, ինչպես՝ *bow-legged* «ծուռոտանի», *old-timer* «հին բնակիչ», *teenager* «դեռահաս» և այլն, սակայն, ի տարբերություն վերոնշյալ «բուռ» կամ «իսկական» բարդությունների, սրանց բաղադրիչներից մեկը չի կարող հանդես

¹⁰⁶ Տե՛ս R. Ginzburg et al., A Course in Modern English Lexicology, M., 1979, էջ 149:

¹⁰⁷ Տե՛ս B. Аракин, Сравнительная типология английского и русского языков, M., 2005, էջ 211-212:

¹⁰⁸ Տե՛ս R. Ginzburg et al., նշվ. աշխ., էջ 149:

գալ որպես ինքնուրույն բառ, այսինքն՝ *legged, timer, ager* բառեր առանձին գոյությունն չունեն։ Սրանք առաջացել են հիմքերի և ածանցների միաժամանակյա կցումով՝ համակցական եղանակով։

3. Բարդություններ, որոնք իրենց կազմում կրճատ բաղադրիչ ունեն՝ (*compounds with a shortened/clipped base*). վերջինս հիմնականում տառային հապավում է, ինչպես՝ *A-bomb* «ատոմային ռումբ», *H-bag* (*handbag*) «ձեռնապայուսակ», *three-D* (*three-dimensional*) «եռաչափ», *Xmas* (*Christmas*) «Սուրբ ծնունդ», *TV-series* «հեռուստաշարք» և այլն։

4. Երեք կամ ավելի անդամներից բաղկացած բարդ բառեր, ինչպես՝ *singer-songwriter* «երգիչ-երգահան», *wastepaper-basket* «թղթազամբյուղ» և այլն։

Ժամանակակից անգլերենում այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը պարունակում է բայակերտ ածանց՝ *-ing, -ed, -er* կամ անցյալ դերբայ է, ինչպես՝ *breath taking* «հոգեպարար», *watch maker* «ժամագործ», *long-tailed* «երկարագի», *man made* «մարդու կերտած» և այլն, կոչվում են *synthetic compounds* «համադրական բարդություններ»՝ ի հակադրություն *առաջնային կամ արմատական* բարդությունների (*primary or root compounds*), որոնք կազմվում են արմատական բառերի բարդմամբ կամ հարադրմամբ, ինչպես՝ *guestroom* «հյուրասենյակ», *high court* «գերագույն դատարան» և այլն¹⁰⁹։ Փաստորեն, ի տարբերություն հայերենի, անգլերենում *համադրական* եզրույթը կիրառվում է ոչ միայն բարդությունների կապակցման տիպը, այլև նշված բայակերտ ածանցներով կամ երկրորդ դերբայով բարդությունները ցույց տալու համար։

Այսպիսով, ընդհանուր գծերով ներկայացնելով հայերենում և անգլերենում բարդ բառերի դասակարգումները, անդրադառնալով բարդ բառի ու բառակապակցության, բարդ բառի ու դարձվածքի տարբերակման խնդիրներին՝ անցնենք երկու լեզուների համադրական և վերլուծական տիպի բաղադրությունների քննությանը՝ ըստ դրանց բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, դրանց միջև շարահյուսական հարաբերության և բարդությունների արտահայտած իմաստների։

¹⁰⁹ Տե՛ս J. Jensen, *Morphology: Word Structure in Generative Grammar*, Amsterdam/Philadelphia, 1990, էջ 99։

Ինչպես արդեն նշել ենք, թե՛ անգլերենում և թե՛ հայերենում կան և՛ համադրական, և՛ վերլուծական տիպի կառույցներ: Քանի որ անգլերենում հնարավոր են նույն բառի գրության՝ միասին, անջատ, գծիկով տարբերակներ, սույն աշխատանքում մենք համադրական և վերլուծական տիպի կառույցների միջև բաժանումը կատարել ենք՝ առաջնորդվելով նրանով, թե այս կամ այն բառն առավել հաճախ ինչպիսի գրությունն ունի բառարաններում, օրինակ՝ *railway* «երկաթուղի» բառը միշտ հանդիպում է միասնական գրությամբ և ոչ երբեք *rail way* ձևով:

Գոյականական հիմքերով բաղադրությունների քննությունը կատարելիս մեզ հետաքրքրում է ոչ միայն այն, թե գոյականը որ խոսքի մասի հետ է հանդես գալիս այս կամ այն կաղապարում, այլ և այն, թե որպես արդյունք ինչ է ստացվում նման կապակցություններից: Հայերենում բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելության որոշումը դժվարություններ չի առաջացնում այն դեպքերում, երբ բաղադրիչները նաև անկախ գործածությամբ են հանդիպում, և չկան փոխանցումներ խոսքի մասերի միջև: Դժվարություններ են առաջանում այն դեպքում, երբ խոսքի մասերի միջև փոխանցումներ կան, և առկա է անվանաբայական արմատական համանունություն, այսինքն՝ համընկնում են բայական մաքուր արմատն ու գոյականը¹¹⁰: Նման դեպքերում հիմքերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս պետք է հաշվի առնել բաղադրիչների բառակազմական իմաստները և դրանց միջև եղած շարահյուսական հարաբերությունը. օրինակ՝ *երջանկաշող* բառում համընկնում են *շող* գոյականը և *շող* բայական մաքուր արմատը, սակայն այս բառի մեջ *շող-ը* ոչ թե գոյական է, այլ բայարմատ, քանի որ նշանակում է *երջանկությունն* *ից* *շողացող՝ փայլող*, և բացի այդ՝ *երջանկություն* և *շողալ* բառերը միմյանց հետ խնդրային հարաբերության մեջ են:

Անգլերենում առավել ևս, քանի որ գործուն բառակազմական եղանակ է կոնվերսիան, գոյականական ու բայական արմատները հաճախ դժվար է տարբերակել համանունության կամ տարարժեքության պատճառով¹¹¹: Օրինակ՝ *cookbook* բառում *cook* արմա-

¹¹⁰ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 138:

¹¹¹ Տե՛ս Լ. Bauer, English Word-Formation, Cambridge, 1983, էջ 202:

տից առաջին հայացքից դժվար է հասկանալ՝ արդյոք ունենք «եփել ու մասին գիրք», թե՞ «խոհարարի գիրք» իմաստը: Փաստորեն երկու լեզուներում խոսքիմասային փոխանցմամբ «ստեղծվում է «նոր» բառ, որը, ճիշտ է, արտահայտության պլանում մնացել է անփոփոխ, սակայն բովանդակության պլանում կրել է տարաբնույթ ու խորքային փոփոխություններ, որոնք պատճառ են հանդիսացել նոր խոսքիմասային ընդհանուր իմաստի ձևավորման և ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների ձեռքբերման»¹¹²:

¹¹² Ա. Չայրապետյան, Ոչ գծային բառաստեղծումը հայերենում, Եր., 2011, էջ 4:

ԳԼՈՒԽ 2. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Գոյականը բարդություններում հանդես է գալիս կա՛մ որպես գերադաս, կա՛մ ստորադաս անդամ: Գոյական բաղադրող հիմքով կաղապարներ են գոյական+գոյական (noun+noun), ածական+գոյական (adjective+noun), թվական+գոյական (numeral+noun), դերանուն+գոյական (pronoun+noun), բայ+գոյական (verb+noun), դերբայ+գոյական (participle+noun), մակբայ+գոյական (adverb+noun), նախդիր+գոյական (preposition+noun) կաղապարները:

Որպես բարդության սերող հիմք՝ գոյականը հանդես է գալիս հետևյալ կաղապարներում՝ գոյական+ածական (noun+adjective), գոյական+բայ (noun+verb), գոյական+դերբայ (noun+participle), գոյական+նախդիր (noun+preposition):

2.1 Գոյականական բաղադրող հիմքով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում

Գոյական+գոյական (Noun+Noun)

Հայերենում և անգլերենում բառակազմական տեսակետից բավականին արդյունավետ են Գ+Գ (N+N) կաղապարով բարդությունները: Առհասարակ, այս կամ այն կաղապարը բառակազմական տեսակետից «կենսունակ» է այն դեպքում, երբ դրանով կազմված նոր բառերը հեշտությամբ են ըմբռնվում տվյալ լեզվով խոսող հանրության բոլոր անդամների կողմից, բոլոր դեպքերում «ընդունելի» են և ճանաչվում են որպես տվյալ լեզվին պատկանող միավորներ¹¹³:

Որպես արդյունք՝ այդ կաղապարով հիմնականում կազմվում են նոր *գոյականներ* և *ածականներ*՝ բաղադրիչների համագործակցության հարաբերությամբ, երբեմն նաև՝ *մակբայներ*:

Համագործակցության հարաբերությամբ Գ+Գ բաղադրություններ են, օրինակ՝ *առասպելներ*, *աղուհաց*, *արդու զարդ*, *բերնեբերան*, *երփներանգ*, *թուքումուր*, *ժամառժամ*, *լացուկոծ*, *կահկարասի*, *նկարապատկեր*, *քարուքացախ* և այլն:

¹¹³ Տե՛ս O. Akhmanova (ed.), Patterns and Productivity, M., 1973, էջ 11:

Անհամագործ կամ ստորադասական հարաբերությամբ Գ+Գ բաղադրությունների բաղադրիչների միջև մեծ մասամբ առկա է հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն, սակայն կան նաև որոշիչ-որոշյալ շարահյուսական հարաբերությամբ կազմություններ:

Ինչպես հայտնի է, բարդության մեջ բաղադրիչները կարող են միանալ հոդակապով և առանց հոդակապի, «ըստ որում, որևէ կանոն չկա, որով կարողանայինք որոշել, թե երբ պետք է բարդ բառի սերող և բաղադրող հիմքերը կապակցվեն հոդակապով, իսկ երբ՝ առանց հոդակապի: Կամասամբ գործող մի կանոն, որի համաձայն հոդակապ չի դրվում, եթե երկրորդ բաղադրիչը ձայնավորով է սկսվում: Բայց ունենք՝

Էլ եկտրաախտորոշում, Էլ եկտրաարդուկ, ինքնաապահովագրել, ինքնաարդարացում և այլն»¹¹⁴:

Ժամանակակից հայերենում հոդակապի դեր է կատարում հիմնականում *ա* ձայնավորը, սակայն հոդակապի դերով հանդես է գալիս նաև *ե* ձայնավորը¹¹⁵, որը մի դեպքում հայտնի ի+ա>ե հնչյունափոխության արդյունքն է, երբ առաջին բաղադրիչի վերջին ձայնավորը, ձուլվելով *ա* հոդակապին, տալիս է *ե*, ինչպես՝ *այ-գի+ա+գող=այ գեգող*, *գինի+ա+տուկ=գինետուկ*, *ոսկի+ա+վարս=ոսկեվարս* և այլն, իսկ մյուս դեպքում այն առաջանում է համաբանության արդյունքում՝ վերոնշյալ ձևերի նմանակությամբ, ինչպես՝ *բաժնեգին*, *բաժնետեր*, *ծաղկեպսակ*, *հաշվեմատյան* և այլն: «Նման բաղադրությունները սերող հիմքում չունեն *ի* վերջնահնչյունը, հետևաբար հիշյալ հնչյունափոխությունը պետք է որ անհնար լիներ, սակայն մի շարք դեպքերում դրանք ոչ միայն գիտակցվում են որպես կանոնական և ընդունելի ձևեր, այլ և դուրս են մղել սպասելի ճիշտ ձևերը»¹¹⁶:

¹¹⁴ Ս. Գալստյան, Բուն (իսկական) բարդ և ածանցավոր բառերի կազմության քայլերի բանաձևման փորձ, ԲԵՅ N 1 (106), Եր., 2002, էջ 107:

¹¹⁵ Գրաբարի մի շարք բարդություններում բացի *ա* ձայնավորից՝ հոդակապի դերով առերևույթ հանդես են եկել նաև *ե*, *ո* և մյուս ձայնավորները (*օր.*՝ *հնգետասան*, *երկոտասան*, *ընդոճին* և այլն), որոնք, սակայն, ոչ թե հոդակապ են, այլ հնագույն շրջանից պահպանված ձայնավոր բներ (տե՛ս Լ. Յովսեփյան, Նշվ. աշխ., Եր., 1987, էջ 55, Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր. 1984, էջ 263-265):

¹¹⁶ Ռ. Սաքապետյան, Արևմտահայերենի դասագիրք, Եր., 2006, էջ 111:

Մեկ այլ դեպքում *ե (է)* ձայնավորը նույնանում է հոդակապի հետ գրաբարի բացառական հոլովով կազմված կրկնավորներում, ինչպես՝ *դարեդար, դռնեդռն, տնետուն, քարեքար* և այլն¹¹⁷:

Հոդակապը մեծ դեր է խաղում հայերենի բառակազմության գործընթացում: Գ+Գ կաղապարով բարդությունների շարքում բազմաթիվ են **հոդակապվոր** տեսակները, օրինակ՝ *ազռավազի, գարեջուր, կապարագույն, հարցատարափ, մայրագորով, մտապատկեր, նավաբանտ, նարնջահյուր, սփյուռքահայ, րոպեսալաք* և այլն:

Անհոդակապ բարդությունները լինում են երկու տեսակի. 1) ձայնավորասկզբ երկրորդ բաղադրիչներով, ինչպես՝ *ազռավազի, ազռավաք, ականջօղ, բախորնկեր, եղջերոսկր, ընծառյուծ, ժամերգ, լուսնեղջյուր, կատակերգ* և այլն, 2) բաղաձայնասկզբ երկրորդ բաղադրիչով, ինչպես՝ *անտառալուրակ, ամպիովանոց, աներծագ, արևկաթ, արևկող, ձնծաղիկ, շեմսյուն, ջրհոր, վզկապ* և այլն:

Գ+Գ կաղապարով բարդությունների մեջ առանձնանում են *որոշիչ-որոշյալի* և *հատկացուցիչ-հատկացյալի* շարահյուսական կապակցությամբ տեսակները:

Բաղադրիչների **որոշիչ-որոշյալ** շարահյուսական հարաբերությամբ բարդություններն ամենագործունեն են եղել հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքում: Այդպիսիք են, օրինակ՝ *ածխանկար, արյունածեռք, բազալ տաքար, ժամագոտի, ծովամարտ, կանեփածոպան, նշտարած և, քարատող* և այլ բարդությունները:

Հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական հարաբերությամբ բարդություններ են, օրինակ՝ *ադամախնձոր, անձրևաջուր, բայահիմք, բանտախուց, գագաթամաս, գայլահաչ, գետնախորշ, զգեստապահարան, ծնրակապ, կամրջանեցուկ, քաղաքագլուխ, քարոզգիրք* և այլն:

Գ+Գ կաղապարով, ինչպես արդեն վերևում նշել ենք, կազմվում է.

ա) **գոյական**, որն արտահայտում է մի նոր առարկայի իմաստ, ինչպես՝ *գետնախորշ, դաշտանկար, եղեգնաքար, հատակամաքրիչ,*

¹¹⁷ Բացի նշվածներից՝ Է. Աղայանը առանձնացնում է *ե* հոդակապով բարդությունների ևս մեկ խումբ, որոնցում *ե* հոդակապը կապվում է *ե* ալկամյա (գրբ. եայ) վերջածանցի հետ, որը հետագայում ուղղակի կցվել, միացել է գոյականին, ինչպես՝ *բրոնզյա փայլ > բրոնզեփայլ* (տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 264):

հացաբաժին, ձայնադարան, մարդակապիկ, մեղրամոմ, մտապատրանք և այլն,

բ) **ածական**, որն արտահայտում է մի նոր հատկանիշ, ինչպես՝ *եղեգնիրան, լուսաբիր, լուսաբոց, կամրջածև, կայծակնաթուր, ծյուռնազգեստ, մարմնագույն, վարդերանգ* և այլն,

գ) **մակբայ**. դրանք հիմնականում կրկնավոր համադրական բարդություններ են, որոնք բաժանվում են երկու խմբի¹¹⁸. 1. միևնույն գոյականի **ուղիղ** ձևի կրկնությամբ կազմված կրկնավոր մակբայներ՝ *գուռդագուռդ, դեզադեզ, դողիդող, կերպակերպ, շեղջաշեղջ* և այլն, 2. միևնույն գոյականի **տարբեր** հոլովածների կրկնությամբ կազմված կրկնավոր մակբայներ՝ *գյուղեգյուղ, դարեդար, դռնեդռն, ծայրեծայր, կուզեկուզ, շարեշար, պատեպատ, տարեցտարի, տնետուն, օրըստօրե* և այլն:

Գ+Գ կադապարով կազմությունները գերազանցապես երկբաղադրիչ են, սակայն կան նաև եռաբաղադրիչ կազմություններ՝ իբրև կանոն *երկբաղադրիչ լրացում+գերադաս անդամ* և *լրացում+երկբաղադրիչ գերադաս անդամ* կադապարներով¹¹⁹:

Եռաբաղադրիչ բարդություններ են, օրինակ՝ *ածխաբեռնանավ, երկրաջրոլորտ, ծխախոտատերև, ծխախոտափող, հանքագործարանատեր, հովտածիծաղասաղարթ, հորեղբորորդի, մորաքեռաղջիկ, մորաքեռորդի* և այլն, սակայն, միևնույնն է, եռաբաղադրիչ բարդությունները ևս հանգում են երկբաղադրիչ տեսակի, քանի որ բառի մեջ ամեն դեպքում առանձնանում են երկու հիմքեր՝ *ածխաբեռնանավ=ածուխ+բեռնանավ, հանքագործարանատեր=հանքագործարան+տեր*: Այս առումով, ինչպես իրավացիորեն նշում է Յ. Աճառյանը, հայերենը «թեև շատ հարուստ է բարդության կողմից, բայց պահում է չափավորություն»¹²⁰, որը նշանակում է, որ երկուսից ավելի բաղադրիչներով բարդ բառերը սակավաթիվ են: Ուշագրավ է նաև Գ. Ջահուկյանի դիտարկումը. «...բարդության, հատկապես հայերենի բարդության, բնական տիպը երկբաղադրիչությունն է. եթե բարդ բառն իր կազմում ունենում է երկուսից ավելի արմատական

¹¹⁸ Տե՛ս Ա. Կարապետյան, Արդի համադրական կրկնավոր բարդությունների գնահատման հարցի շուրջ, ԲԵՅ N 1 (115), Եր., 2005, էջ 71:

¹¹⁹ Տե՛ս Ա. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կադապարները, Եր. 2007, էջ 81:

¹²⁰ Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Եր., 1957, էջ 141:

բաղադրիչ, ապա դրանք բաղադրվում են ոչ թե միաժամանակ, այլ երկանդամորեն...»¹²¹:

Անգլերենում N+N կաղապարով և՛ համադրական, և՛ վերլուծական կառույցները, ինչպես հայերենում, գործառական մեծ բեռնվածությամբ ունեն¹²²: Որպես կանոն՝ անգլերենի բառակազմության մեջ ամենագործունե են երկու գոյականներից, երկու ածականներից կամ գոյականից ու ածականից բաղադրված կաղապարները, քանզի դրանք հեշտ են կազմվում ու հեշտությամբ ընկալվում, իսկ ասենք՝ նախդիրներ և բայեր պարունակող բարդություններից մեծ թվով նոր բարդություններ չեն կազմվում¹²³:

N+N կաղապարով կազմվում են մեծ մասամբ գոյական բարդություններ, ինչպես նաև դրանց կոնվերսիայի եղանակով առաջացած բայեր, կան նաև փոքրաթիվ ածականներ: Այսպես՝ նշված կաղապարով կազմվում են.

ա) բարդ **գոյականներ**՝ *airline* «օդուղի», *applesauce* «խնձորախյուս», *benchmark* «չափանիշ», *goalkeeper* «դարպասապահ», *handwriting* «ձեռագիր», *headline* «վերնագիր», *keyword* «բանալի բառ», *necktie* «վզկապ», *needlework* «ասեղնագործություն», *tablespoon* «ճաշի գդալ» և այլն: Հետաքրքիր են *bookseller* «գրավաճառ», *timeserver* «իշխանություններին քծնանքով ծառայող մարդ», *brainstorming* «մտագրոհ», *handwriting* «ձեռագիր» տիպի բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչները բայանուն գոյականներ են (deverbal nouns)¹²⁴: Նման բարդությունների համար կունենանք հետևյալ կաղապարները՝ $[[book]_N[sell_V+er]_N]_N$, $[[hand]_N[write_V+ing]_N]_N$ և այլն: *Ing* վերջածանցով բառերը պատկանում են **(գոյական+գերունդ (գերունդիում))** կաղապարին, որը N+N կաղապարի ենթակաղապարն է, ինչպես՝ *glassmaking* «ապակեգործություն», *gunrunning* «զենքի ապրիլի ներմուծում», *peacekeeping*

¹²¹ Գ. Ջահուկյան, ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 214:

¹²² Տե՛ս R. Lieber, English Word-Formation Processes, "Handbook of Word-Formation", Dordrecht, 2005, էջ 378:

¹²³ Տե՛ս J. Jensen, Morphology: Word Structure in Generative Grammar, Amsterdam/Philadelphia, 1990, էջ 99:

¹²⁴ Տե՛ս И. Арнольд, Лексикология современного английского языка, М., 1986, էջ 124:

«խաղաղության պահպանում», *painstaking* «ջանադրություն» և այլն: Հայերենում գերունդով կառույցներ չկան¹²⁵:

բ) Այս կաղապարով փոքրաթիվ բարդ **բայեր** են կազմվում և հիմնականում՝ բարդ գոյականների կոնվերսիայի¹²⁶ եղանակով, ինչպես՝ *handcuff* «ձեռնաշղթա հագցնել», *honeymoon* «մեղրամիս անցկացնել», *pitchfork* «եղանով բարձրացնել», *sandbag* «բալաստով բեռնել», *sandpaper* «հղկաթղթով հարթեցնել», *shipwreck* «նավաբեկություն ենթարկվել», *snowball* «ձնագնդի խաղալ», *wisecrack* «սրամիտ դիտողություն անել» և այլն:

գ) Բարդ **ածականների** թիվն ավելի քիչ է, օրինակ՝ *shipshape* «վայելուչ», *homestyle* «պարզ, անպաճույճ», *hourglass* «ավազի ժամացույցի ձև ունեցող», *saltwater* «ծովային, աղի ջրերի» և այլն:

N+N կաղապարով բարդությունների շարքում առանձին խումբ են կազմում բաղադրական *s* ձևությամբ տեսակաները, որոնք փոքրաթիվ են և որպես մնացուկային տարրեր՝ անգլերենում պահպանվել են լեզվի զարգացման ավելի հին շրջանից: Տարածամասակյա հայեցակետով դիտարկելիս պարզ է դառնում, որ դրանց մի մասը ծագել է անգլերենի սեռական հոլովի հնագույն ձևի հիման վրա, ինչպես՝ *guardsman* «գվարդիական», *kinswoman* «ազգականուհի», *statesman* «պետական գործիչ», *swordsman* «սուսերամարտիկ», *tradespeople* «առևտրականներ», կամ էլ հոգնակի թվի ձևից, ինչպես՝ *beeswax* «մեղրամոմ», *plainsman* «դաշտաբնակ», *salesman* «վաճառող», *woodsman* «անտառապահ»: Վերջիններն ավելի քիչ են հանդիպում անգլերենում: Ժամանակակից անգլերենում այս բառերում առկա *s* մասնիկը կորցրել է իր նախնական իմաստը՝ չարտահայտելով ո՛չ սեռական հոլովի¹²⁷ և ո՛չ էլ հոգնակի թվի իմաստ¹²⁸: Այսպիսի բարդություններում որպես երկրորդ բաղադրիչներ հաճախեպես *man*,

¹²⁵ Գերունդը (գերունդիումը) կազմվում է բայի հիմքին *-ing* վերջածանցն ավելացնելով, օրինակ՝ *make-making* «պատրաստել-պատրաստելը»: Այն ունի և՛բայական, և՛ գոյականական հատկանիշներ (տե՛ս Զ. Թոքմաջյան, Ժամանակակից անգլերենի քերականություն, Եր., 1995, էջ 143):

¹²⁶ Տե՛ս V. Adams, An Introduction to Modern English Word-Formation, London, 1973, էջ 108:

¹²⁷ Սեռականի ձևն անփոփոխ պահպանվել է միայն որոշ վերլուծական կառույցներում: Դրանցից կարելի է հիշատակել *death's head* «մահվան (մեռած) գլուխ» թիթեռի անունը, ինչպես նաև որոշ փոխաբերական բուսանուններ, ինչպես՝ *lion's snout* «առյուծի դունչ», *bear's ear* «արջի ականջ» և այլն (տե՛ս Е. Бортничук, И. Василенко, Л. Пастушенко, Словообразование в современном английском языке, Киев, 1988, էջ 134):

¹²⁸ Տե՛ս V. Adams, նշվ. աշխ., էջ 70-71:

woman և վերջերս շատ տարածված *person* «անձ» գոյականները, որոնք կարող են դիտարկվել նաև որպես կիսածանց/ածանցակերպ, քանի որ բոլոր համանման բառերում դրանք իրենց կատարած դերով համարժեք են *-er*, *-or* գոյականակերտ վերջածանցներին, ինչպես՝ *spokesperson* «հռետոր», *sportsman* «մարզիկ», *sportswoman* «մարզուհի» և այլն: *Man* բաղադրիչով այս բառերում *man-ը* արտասանվում է որպես [mən], այսինքն՝ շեշտված դիրքում չէ՝ ի տարբերություն, օրինակ, *mán-eater* «մարդակեր գազան» բառի, որում *man-ը* ոչ թե գործողություն կատարողին կամ նրա զբաղմունքն է մատնանշում, այլ ունի բուն «մարդ» իմաստը: Հայերենի բարդություններում անգլերենի *man*, *woman*, *person* բառերի դերում կարող է գործածվել *բան* գոյականը, որը նույնպես որոշ լեզվաբանների կողմից ընկալվում է որպես ածանցակերպ, ինչպես՝ *արվեստաբան*, *բուսաբան*, *մարդաբան*, *ոճաբան*, *սրտաբան* և այլն¹²⁹:

Անգլերենի N+N կաղապարով կազմված բարդությունները մեծ մասամբ ներկենտրոն են, ինչպես՝ *armchair* «բազկաթոռ», *battlefield* «մարզադաշտ», *copyright* «հեղինակային իրավունք», *countryside* «քաղաքից դուրս գտնվող վայր», *cupboard* «պահարան», *daylight* «ցերեկվա լույս», *earring* «ականջօղ», *limestone* «կրաքար», *postbox* «փոստարկղ», *teapot* «թեյաման» և այլն:

Կան նաև նույն կաղապարով արտակենտրոն բարդություններ, որոնք, համեմատած ներկենտրոն տեսակների հետ, փոքրաթիվ են և մեծ մասամբ արհամարհական, ծաղրական իմաստներ ունեն, ինչպես՝ *birdbrain* «հիմար, հավի խելքով մարդ»¹³⁰, *blockhead* «բթամիտ», *bonehead* «անուղեղ մարդ», *egghead* «գիտուն», *hunchback* «սապատավոր մարդ», *skinhead* «սափրագլու խ» և այլն:

Հայերենում ներկենտրոն են *դահուկավազք*, *նավաբանտ*, *նիզակամարտ*, *ծաղկակոթուն*, *ճոպանասանդուղք* և այլն, իսկ

¹²⁹ Տե՛ս Դ. Գյուրջինյան, Արդի հայերենի վերջածանցակերպները, ԲԵՀ, 2 (95), Եր., 1998, էջ 73:

¹³⁰ Նման բառերի կազմավորման մեջ բառակազմական վերջին քայլը գրո ածանցի ավելացումն է. դրանք Հ. Մարջանդը ներկայացնում է հետևյալ բանաձևով՝ «հիմար, հավի ուղեղով մարդ»-*birdbrain*-[[bird+brain]Ø], այսինքն՝ [[հիմք+հիմք]+գրո ձևությ] կաղապարով. գրո ձևությն այստեղ հավասարագոր է, օրինակ՝ *pigtailer* [[pig+tail]er] «հյուսք ունեցող» բառի *-er* վերջածանցին: *Birdbrain* տիպի բարդություններն այդ պատճառով ոչ թե իրական, այլ «կեղծ (շինծու)» բարդություններ են, քանի որ դրանց կազմությանը մասնակցում է նաև ածանցումը, թեև ածանցը արտահայտված չէ (տե՛ս H. Marchand, The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach, München, 1969, էջ 13-14):

արտակենտրոն են, օրինակ՝ *բոցակն, բոցահեր, ծաղկահասակ* և այլ բարդություններ:

Կաղապարի բաղադրիչների միջև շարահյուսական-իմաստային կապի տեսանկյունից դրսևորվում են այն նույն հարաբերությունները, որոնք կարելի կլիներ դիտել համապատասխան բառակապակցությունների անդամների միջև: Այսպես, այս կաղապարով համադրական բարդությունների բաղադրիչները կարող են ունենալ.

ա) **որոշիչ-որոշյալի** շարահյուսական հարաբերությունն՝ *cheesecake* «շոռակարկանդակ», *housework* «տնային գործ», *schoolboy* «դպրոցական տղա», *stoneware* «կավե ամանեղեն», *tearoom* «թեյասենյակ», *waxwork* «մոմարձան», *weeknight* «աշխատանքային օրվաերեկո»,

բ) **հարկացուցիչ-հարկացյալի** շարահյուսական հարաբերությունն՝ *bottleneck* «շշի խցան», *doorpost* «դռան կողակից», *eggshell* «ձվի կճեպ», *eyeball* «ակնախնձոր», *fingertip* «մատի ծայր», *fishtail* «ձկան պոչ», *horseshoe* «ծիսապայտ», *seashore* «ծովափ», *sheepskin* «ոչխարի մորթի», *shoelace* «կոշկաքուղ» և այլն,

գ) **խնդրային հարաբերությունն**՝ *dressmaker* «դերձակ», *haymaker* «հնձվոր», *potholder* «խոհանոցային կտորե բռնիչ», *shoemaker* «կոշկակար», *storyteller* «հեքիաթասաց» և այլն:

Ինչ վերաբերում է Գ+Գ կաղապարով բարդությունների արտահայտած իմաստներին, ապա երկու լեզուներում կարելի է առանձնացնել դրանց իմաստային հետևյալ խմբերը՝ բարդություններ, որոնք արտահայտում են.

ա) տեղային, տարածական իմաստ. հայերենում՝ *գետահովիտ, գետահուն, դաշտաբերան, լեռնալանջ, լեռնադաշտ, սարաժայռ, սարատեղ* և այլն, անգլերենում՝ *campground* «ճամբարատեղի», *forestland* «անտառապատ տարածք», *homestead* «կալվածատուն», *riverbank* «գետափ», *seashore* «ծովափ», *spacewalk* «ելք բաց տիեզերք», *staircase* «սանդուղք» և այլն,

բ) ժամանակային իմաստ. հայերենում՝ *այգաշաղ, այգացող, գիշերաբուր, գիշերաթռչուն, լուսածեղ, տարեսկիզբ, ցերեկազգեստ* և այլն, անգլերենում՝ *daylight* «ցերեկվա լույս», *daytime* «ցերեկ», *nightclothes* «գիշերազգեստ», *nightlife* «գիշերվա կյանք», *nightmare* «մղձավանջ», *noonday* «կեսօր, միջօրե», *summertime* «ամառ» և այլն,

գ) նյութի ու դրանից պատրաստված առարկայի իմաստ. հայերենում՝ *բամբակագործվածք*, *բրդաթել*, *երկաթագամ*, *երկաթազլան*, *մետաքսագորգ*, *պղնձաբռնիչ* և այլն. սրանց դիմաց, ի տարբերություն հայերենի, անգլերենում մեծ մասամբ վերլուծական կառույցներ են՝ *leather glove* «կաշվե ձեռնոց», *paper bag* «թղթե տոպրակ», *silk stocking* «մետաքսե գուլպա», *steel door* «պողպատյա դուռ», *straw hat* «ծղոտե գլխարկ», *wood fiber* «փայտաթելք» և այլն: Միևնույն ժամանակ, եթե նշված վերլուծական կառույցներն անգլերենում համարվում են բարդ բառեր, ապա հայերենում, ընդհակառակն, դրանց համապատասխանությունները բառակապակցություններ են:

դ) Կենդանիներին և բույսերին առնչվող իմաստներ՝ *բադաճուտ*, *բազենածագ*, *գայլագռավ*, *եղեգնախուկ*, *լորաճուռակ*, *ծաքզեզ*, *մկնաքագե*, *շնագայլ*, *շխաղող*, *ռնգեղջյուր*, *սալորաչիոր*, *ուղտայծ*, անգլերենում՝ *buttercup* «հրանուկ», *cornflower* «տերեփուկ», *dogfish* «ծովաշուկ», *dogwood* «հոնենի», *earthworm* «անձրևորդ», *earwig* «ականջմտուկ», *jellyfish* «մեդուզա», *mayflower* «մայիսյան ծաղիկ», *snowdrop* «ձնծաղիկ», *sunflower* «արևածաղիկ» և այլն,

ե) նմանության կամ համեմատության իմաստներ, երբ երկրորդ գոյականը բնորոշվում է առաջինի հետ ունեցած նմանությամբ, ինչպես՝ *ալիքածև*, *գդալածև*, *խարտոցածուկ*, *նշտարածև*, *շնածուկ*, *սողոցածուկ*, *վագրակատու*, *թրածուկ*, անգլերենում՝ *catfish* «կատվածուկ», *dragonfly* «վիշապանճ», *frogman* «գորտանման մարդ», *goldchild* «ոսկի երեխա (փխբ.)», *goldfish* «ոսկե ձկնիկ», *wiregrass* «լարանման թերթերով եղեգ», *swordfish* «թրածուկ» և այլն:

Մեր թվարկած կառույցների մեծ մասում առաջին գոյական բաղադրիչները կարող են ընկալվել նաև որպես ածական, ինչպես՝ *daylight* «ցերեկային լույս», *goldfish* «ոսկե ձկնիկ», *paper bag* «թղթե տոպրակ», *mayflower* «մայիսյան ծաղիկ», *nightlife* «գիշերային կյանք» և այլն:

Անգլերենի N+N կաղապարով շատ բարդություններ փոխառու է գոլներում արդեն ոչ թե որպես բարդություններ են ընկալվում, այլ որպես պարզ բառեր: Օրինակ՝ անգլերեն չիմացողը ռուսերենում *кобод* և հայերենում *կովբոյ* բառերը կարդալիս չի հասկանա, որ դրանք անգլերեն *cowboy* «կովարած, նախրապան» (կազմված *cow* «կով» և *boy* «տղա» բաղադրիչներից) բառի պատճենումն են: Նույն կերպ, եթե

անգլերեն իմացողին *football* «ֆուտբոլ» բարդություն *foot* «ոտք» և *ball* «գնդակ» բաղադրիչները հուշում են, որ բարդության իմաստն է «խաղ, որում ոտքով հարվածում են գնդակին», իսկ *basketball* բառի *basket* «զամբյուղ» և *ball* «գնդակ» բաղադրիչները ցույց են տալիս, որ բարդությունը նշանակում է «խաղ, որի ժամանակ գնդակը նետում են զամբյուղի մեջ», ապա փոխառում է գոլներում, օրինակ՝ ռուսերենում և հայերենում, *футбол* (*ֆուտբոլ*), *баскетбол* (*բասկետբոլ*) բառերն արդեն ոչ թե բարդություններ են համարվում, այլ պարզ բառեր, քանի որ *фут* (*ֆուտ*) և *бол* (*բոլ*) կամ *баскет* (*բասկետ*) և *бол* (*բոլ*) բաղադրիչները որևէ իմաստ չեն արտահայտում ո՛չ ռուսերենում և ո՛չ էլ հայերենում¹³¹:

Ածական+գոյական (Adjective+Noun)

Չուգադրվող էգոլներում գործառական մեծ բեռնվածություն ունի նաև Ա+Գ (A+N) կաղապարը: Հայերենում այս կաղապարով հիմնականում կազմվում են բաղադրիչների ստորադասական հարաբերությամբ *գոյականներ* և *ածականներ*: Տարբերակվում են ինչպես հոդակապակոր, այնպես էլ անհոդակապակառույցներ:

Հոդակապակոր՝ *մանրավեպ, մեծաբուրդ, մերկամարմին, մնջաթատրոն, նորակնունք, չարագույժ, սևազգեստ, սրբակենցաղ, ցածրատեսակ, փափկաբուրդ* և այլն:

Անհոդակապ՝ *երկարագի, ծանրոտք, հարթուղի, մանրաշխարհ, մեծոսկր, նրբուղի, ջերմադրյուն, սևափտն* և այլն:

Այս կաղապարով կազմություններն արտահայտում են **որոշիչ-որոշյալի** հարաբերություն, ինչպես՝ *մեծարժեք, մնջախաղ, նորատարագ, նրբանկար, պնդամկան, ջերմաջուր, սևամորթ, սրբերգ, վատաբախտ, քնքշաթրթիռ* և այլն:

Գ. Ջահուկյանը ստորադասական բարդությունները գործառական առումով երկու տեսակի է բաժանում՝ *համագործառական* (*համակաղապարային*) և *փոխգործառական* (*փոխկաղապարային*): Առաջին դեպքում բարդությունն ունի խոսքիմասային նույն արժեքը, ինչ նրա հիմքային (վերջին) բաղադրիչը, ինչպես՝ *մայթեզր*, իսկ փոխկաղապարային բարդությունների դեպքում այն

¹³¹ Տե՛ս Օ. Мешков, Словосложение в современном английском языке, М., 1985, էջ 87:

ու նի դերբայ ական ածանցի կամ դերբայի լրացուցիչ գործառական արժեք, ինչպես՝ *շիկահեր* «շեկ մազեր ունեցող»¹³²: Հետևաբար Ա+Գ կաղապարի դեպքում, երբ որպես արդյունք կազմվում է գոյական, ապա ունենք համագործառական բարդություն, իսկ երբ կազմվում է ածական, ունենք փոխգործառական բարդություն:

Առաջին հերթին որպես այս կաղապարի արդյունք կազմվում են գոյականներ, սակայն ավելի շատ են ածականները.

ա) **գոյականներ**՝ *բարձրաշենք, գեղարվեստ, զազրաբան, լիալ ուսին, խառնազանգված, կիսաթաթ, կիսամեզ, հեղձագագ, մեկուսաբանտ, ցածրավայր, ուժգնաբարբառ* և այլն,

բ) **ածականներ**՝ *ահեղադեմ, բազմաժանր, գեղածաղիկ, երկարադուռ, զվարթածայն, թավասաղարթ, լայնաբիթ, խաղաղասյունք, համրածայն, նմանահանգ* և այլն:

Ածականի և գոյականի շարահյուսական կապակցությամբ կազմված ածականներից շատերը սկզբում գոյական են եղել: Օրինակ՝ այս կաղապարով կազմված *մեծատուն* բառը, ըստ Մ. Աբեղյանի, սկզբնապես նշանակել է «մեծ տուն», սակայն հետո նշանակության փոփոխությամբ դարձել է «մեծ տուն ունեցող», ինչպես որ *ծումբերան, ծումբիթ* բարդությունները, որոնք նախապես նշանակել են «ծումբ բերան», «ծումբ քիթ», իսկ հետո իմաստի փոփոխությամբ ձեռք են բերել «ծումբ քիթ ունեցող», «ծումբ բերան ունեցող» նշանակությունը¹³³: Սանշանակում է, որ օրինակ՝ *բարեսիրտ, հորդաջուր, պարարտահող* և նման այլ բարդությունները նախապես նշանակել են «բարի սիրտ», «հորդ ջուր», «պարարտ հող» և այլն, սակայն իմաստի հետագա փոփոխությամբ սկսել են նշանակել «բարի սիրտ ունեցող», «հորդ ջուր ունեցող», «պարարտ հող ունեցող» և այլն¹³⁴: Սակայն չի կարելի պնդել, որ իմաստային այսպիսի անցում տեղի է ունեցել նման բոլոր բարդություններում:

Անգլերենում A+N կաղապարով, ինչպես և հայերենում, կազմվում են գլխավորապես համադրական **գոյականներ** ու **ածականներ**: Հազվադեպ են այս կաղապարով կազմված **բայերը**, և դրանք

¹³² Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 220:

¹³³ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2., Եր., էջ 154:

¹³⁴ Տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 234-235:

հիմնականում ոչ թե համադրական, այլ վերլուծական կառույցներ են:

Հատկապես A+N կաղապարով բաղադրություններն անգլերենում դժվար է տարբերել նույն կաղապարով բառակապակցություններից, քանի որ նման կազմությամբ շատ բառակապակցություններ ընդամենը շեշտի դիրքի փոփոխությամբ վերածվում են բարդությունների: Այդ անցումը կարելի է ցույց տալ աղյուսակ 2-ում տեղ գտած օրինակներով.

Աղյուսակ 2

ա) Բառակապակցություն	բ) Բարդ բառ
a black board «սև տախտակ»	blackboard «գրատախտակ»
a black shirt «սև վերնաշապիկ»	blackshirt «ֆաշիստ»
a blue bird «կապույտ թռչուն»	bluebird «կապտավզիկ (թռչնի տեսակ)»
a green house «կանաչ տուն»	greenhouse «ջերմոց»

Իհարկե, կան նաև այնպիսի բարդություններ, որոնցում հիմնական շեշտը բառի առաջին բաղադրիչի վրա է, իսկ երկրորդական՝ ավելի թույլ շեշտը՝ երկրորդ բաղադրիչի, ինչպես՝ *mad, man* «հոգեկան հիվանդ»:

A+N կաղապարով կազմվում են, ինչպես, նշեցինք, գոյականներ և ածականներ.

ա) **գոյականներ**՝ *busywork* «անօգուտ աշխատանք», *blacklist* «սև ցուցակ», *blueprint* «նախագիծ», *deadline* «վերջնաժամկետ», *highchair* «մանկական բարձր աթոռ», *flatboat* «հարթահատակ նավակ», *lowland* «ցածրավայր», *madwoman* «խելագար կին», *mainland* «մայրցամաք», *shorthand* «սղագրություն», *strongman* «ուժեղ անհատականություն», *tenderfoot* «սկսնակ»,

բ) **ածականներ**՝ *freehand* «ձեռակերտ», *freestyle* «ազատ ոճի», *longhand* «ձեռագիր», *longwinded* «երկարաշունչ», *thickset* «թիկնավետ», *truehearted* «հավատարիմ», *worthwhile* «արժեքավոր», *slimline* «բարակ» և այլն,

գ) խիստ հազվադեպ ստացվում են նաև **բայեր**, այն էլ՝ բարդ գոյականների կոնվերսիայով, ինչպես՝ *doubleclick* «երկու անգամ

կտկտացնել (համակարգչի մասին)», *tightrope* «լարախաղացությունն անել», *softland* «փափուկ վայրէջք կատարել», *wrongfoot* «հանկարծակիի բերել» և այլն:

Երկու լեզուներում առանձնահատուկ ուշադրության են արժանի խառը տիպի կաղապարները: Ինչպես հայտնի է, երբ բաղադրյալ բառերը վերլուծում ենք ըստ անմիջական բաղադրիչների, ստացվում են **հիմք+հիմք** կամ **հիմք+ածանց** հիմնակաղապարները, ըստ որի էլ առանձնանում են բարդ և ածանցավոր կազմությունները: Սակայն կան նաև այնպիսի կառույցներ, որոնք հնարավոր չէ միանշանակ հատկացնել բարդ կամ ածանցավոր կաղապարների թվին, քանի որ նման կազմություններում բառակազմական քայլերի հաջորդականությունն չի դիտվում¹³⁵: Դրանք բարդ և բարդածանցավոր բառերի միջև միջին դիրք են գրավում, կազմվել են բաղադրիչների միաժամանակյակ ցումով՝ բառակազմական մեկ քայլի ընթացքում:

Նման կառույցներն անմիջական բաղադրիչների տրոհելու դեպքում ստացվում են բառակազմական և շարահյուսական միավորներ՝ *ածանց և բառակապակցություն*, և որպես սերող հիմք այս բառերում հանդես է գալիս բառակապակցությունը: Օրինակ՝ *դեղնաչյա* բառի անմիջական բաղադրիչներն են *դեղին* և *աչք* բառակապակցությունը և *յավերջածանցը*, *վատատոհմիկ* բառինը՝ *վատտոհմ* բառակապակցությունը և *իկ* վերջածանցը և այլն: Այսպիսի կաղապարները կոչվում են **խառը տիպի** կաղապարներ: Այդպիսիք են, օրինակ՝ *բազմաժամանակյա*, *երկարաժամանակյա*, *սակավաժամանակյա*, *վատատոհմիկ* և այլն, որոնց կաղապարները կային նաև գրաբարում (հմմտ. *բազում ժամանակեան*, *երկայ նաժամանակեայ*, *սակաւ ժամանակեայ*, *վատտոհմիկ* և այլն)¹³⁶:

Նույն բացատրությունը կարելի է տալ նաև անգլերենի *kindhearted* «բարեսիրտ» տիպի բարդությունները քննելիս: *Kind heart* բառակապակցությանը միանում է *-ed* վերջածանցը՝ կազմելով *kindhearted* բարդածանցավոր բարդությունը: Այս բարդության կառուցվածքային կաղապարն է՝ *[(kind+heart)+ed]*: Այստեղ *-ed* ածանցը, փաստորեն, դառնում է կաղապարի՝ քերականական և իմաստային

¹³⁵ Տե՛ս Լ. Յոզսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 287-288:

¹³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 288-289:

տեսանկյունից դոմինանտ (տիրապետող) բաղադրիչը, որ նշանակում է՝ ածանցն է որոշում բառի խոսքիմասային և բառային իմաստը՝ վերածելով այն ածականի՝ «մի բան ունենալ ու նշանակությամբ»¹³⁷: Նշանակում է՝ երկու լեզուններում կան որոշակի ածանցներ, որոնք կատարում են բաղադրյալ բառի կազմիչները (տվյալ դեպքում բառակապակցության անդամները) ի մի ձուլող գործոնի դեր¹³⁸:

Նմանատիպ այլ կառույցներ են, օրինակ՝ *դեղնաչյա թխաչյա կապտաչյա, հրաչյա, սևաչյա* և այլն: Անգլերենում սրանց համազոր կառույցները հիմնականում վերլուծական բաղադրություններ են, ինչպես՝ *beautiful-eyed* «գեղաչյա», *black-eyed* «սևաչյա», *green-eyed* «կանաչաչյա», *blue-eyed* «կապտաչյա», *goggle-eyed* «դուրս արծած աչքերով» և այլն:

A+N բարդությունների բաղադրիչների միջև, ինչպես և հայերենում, մեծ մասամբ առկա է **որոշիչ-որոշյալի** շարահյուսական հարաբերությունն. օրինակ՝ *strongman* «ուժեղ տղամարդ», *highland* «բարձրավանդակ», *softcover* «փափուկ կազմ» բառերում առաջին բաղադրիչներն արտահայտում են երկրորդների հատկանիշը:

A+N կաղապարով բարդությունների կազմում եղած ածականները հաճախ գերմանական ծագման միավանկ բառեր են, ինչպես՝ *highroad* «մայրուղի», *hothouse* «ջերմոց», *redhead* «կարմրահեր», *stronghold* «պատվար», կամ վաղ շրջանի ռոմանական փոխառություններ, ինչպես՝ *doubletalk* «դատարկաբանություն», *grandfather* «պապիկ», *nobleman* «ազնվական», *tenderloin* «սուկի (անասունի մեջքի միս)» և այլ բարդություններում¹³⁹:

Բազմաթիվ են *free, green, long, low, super* սերող հիմքերով համադրական բարդությունները, ինչպես՝ *freeway* «արագընթաց ավտոճանապարհ», *greensward* «մարգասեղ», *longterm* «երկարամեկետ», *lowbrow* «ցածր խավի մարդ», *supermarket* «հանրախանութ» և այլն:

A+N կաղապարով կազմվում են նաև «բահուլվրիհի»¹⁴⁰ տիպի բառեր՝ ստացական արտակենտրոն բարդություններ (*possessive exocentric*

¹³⁷ Տե՛ս R. Ginzburg et al., *A Course in Modern English Lexicology*, M., 1979, էջ 150:

¹³⁸ Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 288:

¹³⁹ Տե՛ս Լ. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 91-92:

¹⁴⁰ Պանինին ու մյուս հնդիկ քերականները տարբերում էին երեք տիպի բարդություններ՝ *կցական* (*dvandva-*), *որոշչային* (*tatpurusa-*) և *ստացական* (*bahuvrīhi-*): Բարդության այս տարբեր տեսակների անվանումներն ընտրված են դրանց համար առնված օրինակներից՝ *dvandva*-«*գույգ*», *tatpurusa*-«*նրա ծառան*», *bahuvrīhi*-«*բազմաբրինձ*» (տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Եր., 1960, էջ 28):

compounds), որոնք մեծ մասամբ արհամարհական, ծաղրական երանգավորում ունեն¹⁴¹, ինչպես՝ *addlebrained* «անուղեղ», *bigheaded* «պարծենկոտ մարդ», *deadhead* «ձանձրալի անձնավորություն», *bigmouth* «բացբերան մարդ», *faintheart* «թուլամորթ մարդ», *fathead* «հաստագլուխ մարդ», *greenhorn* «խակմիտ մարդ», *sorehead* «նվնվան, դժգոհ մարդ»: Կան նաև արտակենտրոն ոչ ծաղրական իմաստով բարդություններ, ինչպես՝ *greybeard* «տարեց մարդ», *redcap* «1. ռազմական ոստիկան, 2. երկաթուղու բանվոր», *redcoat* «բրիտանական բանակի զինվոր», *sweetheart* «սիրելի անձ» և այլն:

Մարդկանց վերաբերող այս արտակենտրոն բարդություններին շատերում երկրորդ բաղադրիչը մարմնամասի անուն է՝ *mouth* «բերան», *neck* «պարանոց», *head* «գլուխ» և այլն: Հայերենում ևս ունենք մարմնամասերի անուններով կազմված արտակենտրոն բարդություններ, որոնց մի մասի միջոցով արտահայտվում է արհամարհական, ծաղրական վերաբերմունք, ինչպես՝ *ծուռքերան*, *ծուռթաթ*, *կախգլուխ*, *հաստագլուխ*, *հաստավիզ*, *մեծաբերան*, *մեծագլուխ*, *մեծաչուրթ*, *չորագլուխ* և այլն:

Հայերենի և անգլերենի Ա+Գ (A+N) կաղապարով բարդությունների միջև ընդհանրություններ կան նաև դրանց արտահայտած իմաստների առումով: Այդ բարդությունները կարող են ցույց տալ.

ա) արտաքին գնահատողական հատկանիշներ՝ *գեղագանգուր*, *զվարթահայաց*, *թթվադեմ*, *ժանտադեմ*, *խաժաչ*, *խատահայաց*, *հարթերես*, *մերկամարմին*, *տխրաժպիտ*, *ուրախադեմ*, *սպիտակամարմին*, *սպիտակավարս* (անգլերենում մարդու արտաքինը բնութագրող A+N կաղապարով բառերը հիմնականում ոչ թե համադրական, այլ գծիկով միացած բաղադրյալ վերլուծական կառույցներ են՝ *ed* կամ *ing* վերջածանցներով, ինչպես՝ *bright-eyed* «պայծառաչ», *left-handed* «ձախլիկ», *middle-aged* «միջին տարիքի», *right-handed* «աջլիկ») և այլն,

բ) կենդանանուններ և բուսանուններ, ինչպես՝ *գորշագռավ*, *դեղնածաղիկ*, *դեղնաշխետ*, *թխակակաչ*, *կապտաթիթեռ*, *կապտածուկ*, *կարմրաբանջար*, *կարմրախնձոր*, *ճերմակածուկ*, *սպիտակախայտ*, անգլերենում՝ *blackberry* «մոշ», *bluebell* «զանգակածաղիկ», *blueberry*

¹⁴¹ Տե՛ս H. Marchand, *The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach*, Wiesbaden, 1960, էջ 44:

«կապույտ հապալաս», *bluebird* «կապտալճիկ», *flatfish* «տափակ աձուկ», *greengage* «ռենկլոդ (սալորի ընտիր տեսակ)», *redbreast* «շիկահավ», *redwood* «սեքվոյա, կարմիր ծառ», *silkworm* «շերամ» և այլն,

գ) հոգեմտավոր, բարոյական հատկանիշներ, ինչպես՝ *ազատամիտ*, *բարեհոգի*, *լրջախոհ*, *մեծաշնորհ*, *ծանծաղամիտ*, *սրալեզու*, *վատահամբավ*, *վսեմիմաստ*, *տաքսիրտ*, *փափկերես* և այլն, անգլերենում՝ *hardheaded* «համառ», *hardhearted* «քառսիրտ», *hothead* «տաքզլուկ», *kindhearted* «բարեսիրտ», *lighthearted* «ուրախ անհոգ» և այլն:

Հետաքրքիր է Ա+Գ կաղապարով բարդությունների *առաջին՝ որոշիչ բաղադրիչների* կապը իմաստային տարբեր դաշտերի հետ, օրինակ՝

ա) զգայարաններով ընկալելի հատկանիշներ արտահայտող, ինչպես՝ *բոսորերանգ*, *գարշահամ*, *դեղնածամ*, *թթվահամ*, *կծկահամ*, *խաժաքար*, *կարմրավիզ*, *սևաբադ*, *սևագեղմ*, *քաղցրահամ* և այլն, անգլերենում՝ *redhead* «կարմրահեր», *redskin* «կարմրամորթ», *sourdough* «թթխմոր», *sweetcorn* «քաղցր եգիպտացորեն», *whiteboard* «սպիտակ գրատախտակ» և այլն,

բ) առարկաների և երևույթների ծավալային ու ձևային հատկանիշներ արտահայտող՝ *բարձրագագաթ*, *երկարագի*, *թեթևաքաշ*, *լայնաբիբ*, *ծուռթաթ*, *կարճոտն*, *նեղաբերան*, *շեղանկյուն*, *սրադուռ* և չ, *փոքրածավալ* և այլն, անգլերենում՝ *broadsheet* «լայն ձևաչափի թերթ», *broadsword* «լայնաշեղք սուր», *longbow* «մեծ աղեղ», *narrowboat* «նեղ, երկար նավակ» և այլն:

Թվական+գոյական (Numeral+Noun)

Թ+Գ կաղապարով անգլերենում և հայերենում կազմվում են հատկանշային իմաստ արտահայտող բարդություններ: Հիմնականում քանակական թվականներն են մասնակցում այս կաղապարով բառերի կազմությանը: Կան Թ+Գ կաղապարով հոդակապվոր և անհոդակապ կառույցներ.

ա) **հոդակապվոր՝** *եռատարր*, *երկագմբեթ*, *երկամարտ*, *հազարագանձ*, *հարյուրաբերան*, *ինգաթև*, *միաբլեն*, *միաքիչ*, *յոթնաբլուր*, *քառագագաթ* և այլն,

բ) **անհոդակապ՝** *եռամուսին*, *եռոստան*, *երկանդամ*, *երկաչք*, *երկառեջ*, *երկզույզ*, *ինգանդամ*, *ինգօղակ*, *քառերգ*, *քառուղի* և այլն:

Այս կառույցների բաղադրիչների միջև առկա է **որոշիչ-որոշյալի** շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ *երկթի, երկխոփ, հազարամրմուռ, հարյուրակն, միամիտ, յոթնաջար, յոթնաջահ, ութատող, վեցաչք, քառաստիճան*։ սրանցում գոյականով արտահայտված առաջին բաղադրիչն արտահայտում է երկրորդի նշանակած առարկաների կամ երևույթների քանակը։

Որպես արդյունք՝ այս կաղապարով հիմնականում կազմվում են.

ա) **ածականներ**՝ *եռանիշ, եռարմատ, երկդեմ, երկեղջյուր, հազարերազ, հազարաթև, յոթնալույս, տասնահարկ, քառազլուխ քառածալ*,

բ) **գոյականներ**՝ *եռամարտ, եռանվազ, եռապետ, եռացատկ, երկհայելի, երկհնչյուն, հազարաթերթիկ, հնգամարտ, հնգաքայլ, քառանվազ* և այլն։ Սրանց մեջ կան այնպիսիք, որոնք միաժամանակ ունենև՝ ածականի, և՛ գոյականի արժեք։

Բազմաթիվ են *մի* սկզբնաբաղադրիչով կազմությունները, ինչպես՝ *միասեր, միասերմ, միատառ, միատող, միարժեք, միամիտ, միաջարք, միածայն, միատեսակ* և այլն։

Հաճախ թվական անունները միանում են ժամանակի իմաստ արտահայտող գոյականներին *-յա* և *-յակ* ածանցներով, ինչպես նաև՝ այլ գոյականների՝ *-անի* ածանցով՝ կազմելով ածական և գոյական անուններ, ինչպես՝ *եռամյա երկերեսանի, հազարամյա հինգդոնանի, հնգամյակ, միաչքանի, յոթզլխանի, ութամյակ, չորսձեռնանի, քսանհինգամյա* և այլն։ Առանց ածանցների *միաչք, ութամ, չորսձեռք* և այլ ձևերը գործածվել չեն կարող և ինքնուրույն, առանձին գոյություն ունենալ։ Եթե *ութամյա* բառը բաժանենք բաղադրիչների, կունենանք *ութամ* բառակապակցությունը և *յավերջ* ածանցը։ Նշված կաղապարները խառը տիպի են։

Անգլերենում Num.+N կաղապարով կառույցները՝ հատկապես խառը տիպի կաղապարները, ավելի շատ վերլուծական բաղադրություններ են, ինչպես՝ *three-cornered* «եռանկյունի», *two-sided* «երկկողմանի» և այլն, որոնց կանոնադրաբանաբար վերլուծական բաղադրություններին նվիրված գլխում։

Թվականի և գոյականի միացումից անգլերենում ստացվում են հիմնականում գոյականներ ու ածականներ.

ա) **գոյ ականներ**, ինչպես՝ *hundredweight* «անգլիական ցենտներ (կշռի միավոր)», *twopence* «երկպենսանոց», *threepence* «երեքպենսանոց», *sixpence* «վեցպենսանոց, կես շիլինգ» և այլն,

բ) **աճականներ**, ինչպես՝ *ninepenny* «ինը պենսի արժեք ունեցող», *twopenny* «երկու պենսի արժեք ունեցող», *threepenny* «երեք պենսի արժեք ունեցող» և այլն:

Երկու լեզուներում կան ոչ միայն քանակական¹⁴², այլև դասական թվականներից ածանցված կաղապարներ, ինչպես՝ *առաջնաձեռք*, *երկրորդական*, *երրորդամաս*, *քառորդամաս*, անգլերենում՝ *firsthand* «առաջին ձեռքից», *secondhand* «երկրորդ ձեռքից», *thirdhand* «երրորդ ձեռքից» և այլն:

Դերանուն+գոյական (Pronoun+Noun)

Դ+Գ կաղապարով հայերենում կազմվում են աճականներ, մակբայներ, նաև գոյականներ և դերանուններ: Սրանց բաղադրիչների միջև կա հատկացուցիչ-հատկացյալի և որոշիչ-որոշյալի հարաբերություն: Ընդհանրապես դերանունները բառակազմությանը քիչ են մասնակցում և հավասարաթեք կիրառություն չունեն: Դրանք հազվադեպ են հանդես գալիս որպես ածանցելի հիմքեր՝ «լինելով ցուցադրական և ոչ անվանողական բառեր»¹⁴³: Այդպիսիք են անձնական *ես*, ստացական *յո՛ւր*, ցուցական *նույն*, հարցադարձական *ո՛ւր*, *երբ*, *ինչ*, *քանի* դերանունները:

Հայագիտության մեջ կարծիք կա, որ դերանունները բարդությունների կազմությանը որպես բաղադրիչներ իրենց բուն կիրառությամբ չեն մասնակցում, քանի որ դրանց մի մասը բառակապակցություններում հանդես է գալիս որպես գոյական (*ես*, *դու*, *սա* *ով* և այլն), մյուս մասը՝ որպես աճական (*այս*, *այսպիսի*,

¹⁴² Հաճախ քանակական թվականների հետ որպես երկրորդ բաղադրիչ հանդես է գալիս *-fold* ածանցը, որը կարող է առաջին հայացքից ընկալվել գոյականական «ծալք» իմաստով, սակայն իրականում դա համապատասխանում է հայերենի *-պատիկ* ածանցին, օրինակ՝ *eightfold* «ութապատիկ», *hundredfold* «հարյուրապատիկ» և այլն: Շփոթություն կարող է առաջանալ հատկապես անգլերենը որպես երկրորդ լեզու սովորողների համար:

¹⁴³ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 206:

ինչ պիսի, ո՞ր և այլն), երրորդ մասն էլ՝ որպես մակբայ (այսպես, այսչափ և այլն)¹⁴⁴:

Այդ իսկ պատճառով հայ բառակազմագիտության մեջ հաճախ առհասարակ չի առանձնացվում Դ+Գ կաղապար, սակայն մեր համոզմամբ ինչպիսի նշանակությունամբ էլ որ դերանունները հանդես գան բարդության մեջ՝ իրենց բուն խոսքիմասային իմաստով, թե ոչ, այնուամենայնիվ, դրանք որպես խոսքի մաս մասնակցում են բարդությունների կազմությանը, հետևաբար Դ+Գ կառույցները չեն կարող անուշադրության մատնվել և չքննվել:

Այսպես, ներկայացնենք Դ+Գ կաղապարով կազմված բարդություններն ըստդերանունների համապատասխան տեսակների:

Անձնական դերանուն+գոյական կաղապարը կազմվում է հիմնականում *ես*, *ինքը* (*ինքն*), *յուր* դերանուններով: *ես* անձնական դերանունը բարդություններում առկա է ոչ թե որպես առաջին դեմք ցույց տվող բառ, այլ ունի «անհատ, անձ» իմաստը, ինչպես՝ *եսամուշտուրում*, *եսակենտրոն*¹⁴⁵:

Ի տարբերություն *ես* դերանվան՝ *ինքն* դերանունը բառակազմական տեսանկյունից ավելի կենսունակ է: Բազմաթիվ բարդություններ են կազմվում *ինքն* դերանվան և գոյականի կապակցությամբ, ինչպես՝ *ինքնաբոցավառում*, *ինքնաբուժում*, *ինքնաբուհ*, *ինքնաբուսակ*, *ինքնագարշանք*, *ինքնագիտակցություն*, *ինքնագլուխ*, *ինքնագյուտ*, *ինքնագնահատում* և այլն: Այս բարդություններում *ինքն* դերանունը կամ ցույց է տալիս, որ երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողությունն ինքնուրույն է կատարվել, կամ այն, որ երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողությունն իրեն է ուղղված: *ինքն* առաջնաբաղադրիչով կազմություններում որոշիչ-որոշյալ հարաբերությունը մթափնած է¹⁴⁶: *ինքն* դերանունից բացի՝ գոյականների հետ կապակցության մեջ է մտնում նաև *յուր* դերանունը: Այն բառակազմության մեջ արդեն գործուն է, սակայն դրանով և գոյականով կազմված որոշ բարդություններ գոյություն ունեն, ինչպես՝ *յուրաժամ*, *յուրակերպ*, *յուրահաշիվ*, *յուրահնար*,

¹⁴⁴ Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայ երենում, Եր., 1978, էջ 26:

¹⁴⁵ Տե՛ս Ս. Աբրահամյան, Արդի հայ երենի դերանունները, Եր., 1956, էջ 255:

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 27:

յուրաջահ, յուրապատու մ, յուրատեսակ, յուրատիպ, յուրօրինակ և այլն:

Բարդություններին կազմությանը մասնակցում է նաև **ցուցական դերանունների** մի մասը, օրինակ՝ *այս, այդ, այն, նույն, սույն* դերանուններով և գոյականներով կազմվում են հետևյալ բարդությունները՝ *այնկողմ, այնպահ, այսկողմ, այսօրինակ, դույնչափ, դույնօրինակ, նույնաբնույթ, նույնաջերմություն, նույնասեռ, սույնօրինակ* և այլն: Ցուցական դերանուններից բառակազմական տեսանկյունից ամենագործունն է *նույն* դերանունը:

Փոխադարձ դերանուն+գոյական կաղապարի կազմությանը մասնակցում է *իրար* դերանունը, ինչպես՝ *իրարանցում, իրարամարտ, իրարահասկացողություն* բառերում:

Որոշյալ դերանուն+գոյական կաղապարով բարդություններ են կազմվում *ամեն*¹⁴⁷, *ողջ, բոլոր, համայն* դերանուններով, ինչպես՝ *ամենազորություն, ամենապոեմ, ամենասիրտ, բոլորադեզ, բոլորալուսին, համայնապետ, համայնափոս, ողջախորհուրդ, ողջակիզում, ողջամարմին* և այլն:

Անորոշ դերանուն+գոյական կաղապարի իրացմանը մասնակցում է հիմնականում *այլ* դերանունը: **Այլ+գոյական** կաղապարով բարդություններ են, օրինակ՝ *այլ աբան, այլ աբարբառ, այլ աբնույթ, այլ աբուն, այլ ագույն, այլ ադականություն, այլ աժամանակ, այլ ալեգու, այլ ախոհ, այլ ախու մբ* և այլն:

Հարցադարձական դերանունների և գոյականի կապակցությամբ կազմված բարդություններ քիչ են հանդիպում: Կաղապարը կազմվում է *ինչ* և *որ* դերանունների միջոցով՝ *ինչչափ, որչափ*:

Ժխական դերանուն+գոյական կաղապարի իրացմանը մասնակցում է *ոչինչ* դերանունը՝ հնչյունափոխված ձևով՝ *ոչնչառեսիլ*:

¹⁴⁷ *Ամեն* դերանվամբ բարդությունները կարող են երկակի ըմբռնում ունենալ: Լեզվաբանների մի մասը *ամեն* բառին վերագրում է միայն ածանցական իմաստ՝ գերադրական աստիճանի նշանակությամբ (տե՛ս Ա. Մուրվալյան, Հարց լեզվի բառային կազմը, Եր., 1955, էջ 241-242), սակայն եթե *ամեն*-ը բարդության մեջ պահպանում է իր նյութական իմաստը, ապա այն պետք է ընկալել «բոլոր, համայն» նշանակությամբ (հմմտ. ամենապետ=ամենաբի պետ): *Ողջ, ամեն, բոլոր* դերանունները և *այլ*-ը գրաբարում ածականներ էին, և բարդությանը մասնակցում էին իբրև ածականներ. *այլ*-ը նաև մակբայ էր (տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 27):

Հետևյալ օրինակներում դերանուն+գոյական կաղապարով կազմված են.

ա) **գոյականներ`** *ամենաբանտ, այլ ագրոնոմ, ինքնաբաշխում, ինքնաբարձիչ, ինքնաբացարկ, ինքնաբացում, ինքնաբեռնիչ, ինքնաբնութագրոնոմ* և այլն,

բ) **ածականներ`** *ամենաբախտ, ամենագույն, ամենալույս, ամենածաղիկ, ամենապատում, բոլորածայր, բոլորածիր, նույնաթույր, նույնանիշ, ողջամիտ* և այլն,

գ) **մակբայներ`** *այ դժամ, այ դկերաք, այլ ակերաք, այ նժամ, այ սկերաք, այ սկոյս* և այլն,

դ) **դերանուններ`** *այ նչ ափ, այ սչ ափ, ինչչ ափ, նույնչ ափ, որչ ափ* և այլն:

Այս կաղապարով բարդությունների մեջ ևս առանձնանում են հոդակապվոր և անհոդակապ տեսակները: **Հոդակապվոր** են, օրինակ` *ինքնադավադրոնոմ, ինքնադատապարտյալ, համայնակենցադ, համայնապատկեր, համայնապատում, նույնադեր, նույնասեռ, նույնասկիզբ, նույնավերջ, նույնավիճակ* և այլն:

Անհոդակապ են *այլ աղանդ, այլ անուն, ամենաշխարհիկ, այ նպահ, այ սժամ, այ նտեղ, բոլորաք, սույնօրինակ, ողջանդամ, ողջերթ* և այլն:

Անգլերենում ևս կարող ենք առանձնացնել **Pron.+N** կաղապարի ենթակաղապարներ: Այս կաղապարի իրացմանը մասնակցում են անձնական (personal), ստացական (possessive), որոշյալ (defining), անորոշ դերանունները (indefinite) և ժխտական (negative) *no* դերանունը:

Համադրական բարդությունների կազմությանը մասնակցում են **անձնական դերանունների (personal pronouns)** ոչ թե ուղղական, այլ խնդրային հոլովով¹⁴⁸ դրված ձևերը: *Him, her, them* դերանունների և *self* «ինքը» գոյականի ու դրա հոգնակի թվի ձևից` *selves* կապակցությունից կազմվում են *himself/herself* «նա ինքը», *ourselves*

¹⁴⁸ Անգլերենի քերականության մեջ անձնական դերանունների հոլովական երկու ձևեր են տարբերակում` ուղղական հոլովով և (օբյեկտային) խնդրային հոլովով դրված դերանուններ: Ուղղական հոլովով դրված դերանուններն են *I, he/she, it, you, we, they*, իսկ խնդրային հոլովով դրված ձևերն են` *me, him/her, it, you, us, them*. Վերջիններս նախադասության մեջ հանդես են գալիս խնդրի շարահյուսական պաշտոնով (տե՛ս В. Каушанская и др., Грамматика английского языка, Л-град, 1973, էջ 54, Ү. Mkhitarian, A. Chubaryan, Theoretical English Grammar /seminars/, Եր., 2013, էջ 141):

«մենք ինքներս», *themselves* «նրանք իրենք» **անդրադարձ դերանունները (reflexive pronouns):**

Ստացական դերանուն+գոյական (possessive pronoun+noun) կաղապարով ևս կազմվում են **անդրադարձ դերանուններ**, ինչպես՝ *myself* «ես ինքս», *yourself* «դու ինքդ», *ourselves* «ինքներս», *yourselves* «ինքներդ», որոնք համադրական բարդություներ են:

Ցուցական դերանուն+գոյական (demonstrative pronoun+noun) միայն *this* և *that* դերանունների և *way* գոյականի միջոցով *thisaway* «այս ուղղությամբ», *thataway* «այդ ուղղությամբ» **մակբայներն** են կազմվում:

Որոշյալ դերանուն+գոյական (defining pronoun+noun) կաղապարով բարդություներ են կազմվում *every* դերանվան և տարբեր գոյականների կապակցությամբ, ինչպես՝ *everybody* «ամեն ոք», *everyplace* «ամենուր», *everything* «ամեն ինչ» և այլն: Այս կաղապարով մի կողմից կազմվում են **գոյականներ**՝ *everyman* «սովորական էակ (տղամարդ)», *everywoman* «սովորական էակ (կին)», մյուս կողմից՝ **որոշյալ դերանուններ**՝ *everybody* «բոլորը, ամենքը», *everything* «ամեն ինչ», *մակբայներ*՝ *everyplace* «ամենուր», **ածականներ**՝ *everyday* «ամենօրյա» և այլն: *All* «բոլոր, ողջ» որոշյալ դերանվան և գոյականի կապակցությամբ ոչ թե համադրական, այլ վերլուծական տիպի բաղադրություներ են կազմվում: Կան նաև *other* որոշյալ դերանվամբ և գոյականի միացությամբ կառույցներ՝ **գոյականներ**՝ *otherworld* «հանդերձյալ աշխարհ», *otherworldliness* «չնաշխարհիկություն», **ածականներ**՝ *otherguess* «տարբեր, ուրիշ», *մակբայներ*՝ *otherwhile* «այլ անգամ» և այլն:

Անորոշ դերանուն+գոյական (indefinite pronoun+noun) կաղապարով բարդություների կազմությանն են մասնակցում *any*, *some* և *one* դերանունները: Որպես արդյունք մեծ մասամբ կազմվում են **մակբայներ**՝ *anyplace* «ցանկացած տեղ», *anywise/anyways* «ցանկացած ձևով», *someday* «օրերից մի օր», *somedeal* «որոշ չափով, մասամբ», *someplace* «ինչ-որ մի տեղ», *sometimes* «երբեմն», *someway* «ինչ-որ կերպ», երբեմն նաև **ածականներ**՝ *onetime* «երբեմնի», **դերանուններ**՝ *anybody* «որևէ մեկը», *anything* «որևէ բան», *somebody* «ինչ-որ մեկը», *something* «ինչ-որ բան», *oneself* «ինքնիրեն» և այլն:

Ժխտական դերանուն+գոյական (negative pronoun+noun) կաղապարի իրացմանը մասնակցում է *no* դերանունը, որով կազմվում են նոր ժխտական դերանուններ՝ *nobody* «ոչ ոք», *nothing* «ոչ ինչ»։ «One» որոշյալ և «no» ժխտական դերանուններից ավելի շատ կազմվում են վերլուծական բաղադրություններ, որոնց կանդիդատներն են մեր աշխատանքի համապատասխան գլխում։

Բայ +գոյական (Verb+Noun)

Ժամանակակից հայերենում **բայ սիմբ** կամ **բայ արմատ+գոյական** կաղապարով կազմվում են հիմնականում գոյականներ, երբեմն նաև ածականներ, որոնց որոշ մասը գոյականների հետագա իմաստային զարգացման հետևանք է։

Այսպես, Բ+Գ կաղապարով կազմվում են.

ա) **գոյականներ**՝ *աշխատանք, գաղթական, գրատախտակ, դրդապատճառ, լսագործիք, խեղդահազ, հավաքասրահ, ճեմողի, շարժասարք* և այլն,

բ) **ածականներ**՝ *խեղամիտ, խեղդածայն, խեղդամահ, հայհոյաբան, հանդուրժամիտ, հավաքատիպ վաճառքահ* և այլն։

Բ+Գ կաղապարով կարող են կազմվել և՛ **հոդակապով**՝ *գրոսահանգրվան, ընթերցադահլիճ, լսաչափում, խոստովանահայր, հերձադանակ, ձուլազործարան, ճեմասրահ, սահաբլուր, սահադաշտ* և այլն, և՛ **անհոդակապ** բարդություններ՝ *աշխտընկեր, դիտապակի, երգարվեստ, խեղդկապ, հավաքարկղ, մարզականք, շարժառիթ, ստուգայց, ցայտադրյուն* և այլն։

Այս կաղապարով կազմված բարդություններում բայական մաքուր արմատի և գոյականի համընկնման հետևանքով շատ դեպքերում դժվար է դառնում որոշել՝ առաջին բաղադրիչը բայական, թե՞ գոյականական ծագում ունի։ Օրինակ՝ *երգասեր* բառի դեպքում անհասկանալի է՝ խոսքը վերաբերում է *երգ սիրողի*՞ն, թե՞ *երգել սիրողին*, պարագետտ բառը նշանակում է *պարի*՞ զգեստ, թե՞ *պարելու զգեստ*։ Կարելի է ասել, որ այսպիսի կառույցները կրկնակի պատճառավածություն ունենեն։

Բ+Գ կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև հիմնականում առկա է **որոշիչ-որոշյալի** կամ **հանկսցուցիչ-հանկսցյալի** հարաբերություն, և դրանք շարահյուսական կապակ-

ցույթյան վերածելիս առաջին անգամը դառնում է անորոշ դերբայ կամ բայ անուն գոյական՝ սեռական հոլովով դրված, նաև հարակատար ու ենթակայական դերբայներ¹⁴⁹:

Այսպես, այս կաղապարով բարդություններում բայահիմքը համարժեք բառակապակցության մեջ կարող է արտահայտվել.

ա) անորոշ դերբայի կամ բայ անուն գոյականի սեռականով՝
ինչպես՝ *գրանցամատյան=գրանցելու (գրանցման) մատյան*,
զվարճավայր=զվարճանալու վայր, *հավաքատեղի=հավաքվելու տեղ*,
հղկահաստոց=հղկելու հաստոց, *ճեմադահլիճ=ճեմելու դահլիճ*,
մարզասրահ=մարզվելու սրահ, *մրցադաշտ=մրցման դաշտ*, *ննջասենյակ=քնելու սենյակ*, *նստատեղ=նստելու տեղ* և այլն,

բ) հարակատար դերբայով, ինչպես՝ *զինաբախում=զինված բախում*, *կարծրահող=կարծրացած հող*, *հատկադեր=հատկացված դեր*,
հատկացագիր=հատկացված գիր, *հյուսագամբյուղ=հյուսած գամբյուղ*,
հյուսացանկապատ=հյուսած ցանկապատ, *շրջերես=շրջված երես* և այլն,

գ) ենթակայական դերբայով, ինչպես՝ *արգելապատ=արգելող պատ*,
թափառախումբ=թափառող խումբ, *ծալաթոռ=ծալվող աթոռ*, *ծածկապակի=ծածկող ապակի*,
ծաղրանկար=ծաղրող նկար, *ծաղրապատկեր=ծաղրող պատկեր*,
նվագախումբ=նվագող խումբ, *սփռաբույս=սփռվող բույս*,
ցայտաղբյուր=ցայտող աղբյուր և այլն:

Անգլերենում V+N կաղապարը հաճախ նշվում է նաև Verbal stem+Noun (բայահիմք+գոյական) ձևով, որպեսզի տարբերվի Particip.I+N, Particip. II+N կաղապարներից: V+N կաղապարով բարդությունների մեջ գերակշռում են համադրական կառույցները, որոնցում առանձնանում են մի շարք արտակենտրոն բարդություններ: Դրանց մեծ մասը վերաբերում է մարդկանց, ինչպես՝ *cutpurse/pickpocket* «գրպանահատ», *daredevil* «խիզախ», *pinchpenny* «ժլատ», *lickspittle* «քծնող մարդ», *scatterbrain* «թեթևամիտ մարդ», *scofflaw* «օրինազանց մարդ», *spendthrift* «վատնող մարդ», *telltale* «բամբասկոտ մարդ», *turncoat* «դավաճան», *turnkey* «բանտապահ» և այլն: Անձեր չեն մատնանշում V+N կաղապարով հետևյալ բարդությունները՝ *breakwater* «ծովապատնեշ», *drawbridge* «բացվող կամուրջ», *scarecrow* «խրտվիլակ» (թեև այս բառը երբեմն

¹⁴⁹ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզուն, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 327-328:

վերաբերում է նաև մարդկանց՝ «ծիծաղելի հագնված մարդ» իմաստով), *stopbank* «ամբարտակ», *wagtail* «պոչ խաղուկ» և այլն:

V+N կաղապարով արտակենտրոն բարդություններից շատերի բաղադրիչների միջև առկա է խնդրային շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ *killjoy* «ուրիշների ուրախությունը թուլանալորող մարդ»=*to kill (the) joy* «ուրախությունը փչացնել (բառացի՝ սպանել)»:

Այս կաղապարով բարդությունների առաջին բաղադրիչները իբրև գոյական կամ անորոշ դերբայ դիտարկելու դեպքում կաղապարում առկա է նաև հատկացուցիչ-հատկացյալի կամ որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ *blowtorch* (*blowing torch*) «զոդալամպ՝ զոդման, զոդելու լամպ», *checklist* (*checking list*) «ստուգացուցակ, ստուգման ցուցակ», *playground* (*playing ground*) «խաղահրապարակ», *playtime* (*playing time*) «խաղաժամ», *sawmill* (*sawing mill*) «սղոցարան», *stoplight* (*stopping light*) «լուսակիր», *washbasin* (*washing basin*) «լվացարան», *washboard* (*washing board*) «լվացքի տախտակ», *whetstone* (*whetting stone*) «սրաքար» և այլն: Սրանք, ի տարբերություն խնդրային հարաբերության մեջ V+N բարդությունների, մեծ մասամբ ներկենտրոն են և բառակազմական ավելի մեծ հնարավորություններ ունեն¹⁵⁰:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, այս կաղապարով կազմվում են **գոյականներ** և **ածականներ**, հազվադեպ՝ **բայեր**՝ *shunpike* «ճամփեզրով քայլել»:

Անգլերենում նույնպես այս կառույցով բարդությունների դեպքում բախվում ենք անվանաբայական համանունության խնդրին. օրինակ՝ *bakehouse* «հացատուն», *washday* «մաքրության, լվացք անելու օր» բարդությունները կարող են ընկալվել ոչ թե որպես V+N, այլ N+N կաղապարով կազմություններ, քանի որ կան նաև *bake* «թխելը» և *wash* «լվացք» գոյականները:

Ինչ վերաբերում է V+N կաղապարով բարդությունների արտահայտած իմաստներին, կարելի է նկատել քիչ թե շատ առանձնացվող երկու խմբի բարդություններ՝ մարդկանց վերաբերող, ինչպես՝ *cutthroat* «մարդասպան», *daredevil* «խիզախ», *playboy* «կնամուլ երիտասարդ» և այլն, տարբեր առարկաների վերաբերող, ինչպես՝ *crashpad* «ժամանակավոր քնատեղ», *guidebook* «տեղեկագիրք»,

¹⁵⁰ Տե՛ս L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 205:

grindstone «աղացաքար, երկանաքար», *handlebar* «ղեկ», *hovercraft* «օդաքարձիկով նավ», *playbill* «ազդ, հայտարարություն», *showroom* «ցուցասրահ» և այլն:

Դերբայ +գոյական (Participle+Noun)

Հայերենում համադրական բարդությունների կազմությանը մասնակցում են **անորոշ** և **ենթակայական** դերբայները:

Անորոշ դերբայը բուն (իսկական) բարդությունների մեջ մասնակցում է մերթորպես սերող (ծախակողմյան հիմք)՝ կազմելով ոչ բայ խոսքի մասերի բառեր, մերթորպես բաղադրող (աջակողմյան) հիմք՝ կազմելով բայեր: Տվյալ դեպքում անորոշ դերբայը բարդության սերող հիմքն է¹⁵¹: Սրանց մեջ չկան անհոդակապ կառույցներ. դերբայը միշտ կապված է գոյականին հոդակապի օգնությամբ: Որպես արդյունք՝ այս կաղապարով կազմվում են գոյականներ, օրինակ՝ *աշխատել արժ*, *գործել արժատ*, *խոսել ացավ*, *կանգնել ատել*, *հագնել աճև*, *նստել ավարձ*, *սնվել ակարգ*, *վառել ախայտ*, *վարել աշերտ*, *վարվել ակերպ*, *փոխել ապատճառ*, *քնել ահանգ* և այլն:

Այս կաղապարի սերող հիմքերից բուն (իսկական) բարդություններում ամենագործուն են *խոսել*-ը (*խոսել ախտ*, *խոսել ավախ*), իսկ բաղադրող հիմքերից՝ *-ծև*-ը (*ապրել աճև*, *վարվել աճև*), *-ցավ*-ը (*սիրել ացավ*, *գրել ացավ*) և *-սեր*-ը (*գրել ասեր*, *իշխել ասեր*)¹⁵²:

Գրաքարում կաղապարը վկայված է եզակի՝ **լավ ետղ** «լավ ատել, ողբավայր» բարդ բառով¹⁵³: Հետագայում, սակայն, այս կաղապարն աստիճանաբար կենսունակ ու գործուն է դարձել, և սկսել են կազմվել բարդ բառերի բաց շարքեր՝ անընդհատ նորանոր բաղադրությունների կազմման հնարավորությամբ¹⁵⁴:

Անորոշ դերբայ +գոյական կաղապարով բարդությունների առաջին բաղադրիչները կամ սերող հիմքերն արտահայտում են սեռական հոլովածևի իմաստ. դանշանակում է, որ անորոշ դերբայը պահպանում է իր գոյականական հատկանիշը, երբ բաղադրող հիմքը

¹⁵¹ Տե՛ս Ս. Գալստյան, «Անորոշ դերբայը բառակազմական անփոփոխ հիմք», ԲԵՀ, N 1 (124), Եր., 2008, էջ 99:

¹⁵² Տե՛ս Նույն տեղում, էջ 103:

¹⁵³ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաքարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 80:

¹⁵⁴ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 102-103:

գոյական է, իսկ ամբողջ բարդությունը շարահյուսական կապակցության վերածելիս արտահայտում է հատկացուցիչ-հատկացյալի հարաբերությունը, ինչպես՝ *գործել ակերպգործելու կերպ խոսել ածև-խոսելու ձև* և այլն:

Ենթակայական դերբայ +գոյական կաղապարով հիմնականում կազմվում են ածականներ, ինչպես՝ *զիջողամիտ, ներողամիտ* ավելի քիչ՝ գոյականներ, ինչպես՝ *արարողակարգ, արարողապետ, քերթողահայր* և այլն: Սրանց միջև շարահյուսական հարաբերությունը հանգում է **որոշիչ-որոշյալի**՝ *զիջողամիտ* և հատկացուցիչ-հատկացյալի՝ *արարողապետ*:

Անգլերենում այս կաղապարի իրացմանը մասնակցում են առաջին (Participle 1) և երկրորդ (Participle 2) դերբայները, սակայն դրանցով մեծ մասամբ կազմվում են վերլուծական բաղադրություններ: Partcip. I+N կաղապարով համադրական բարդություններ են, օրինակ՝ *hummingbird* «կոկիբրի՝ ամերիկյան փոքրիկ թռչուն», *mockingbird* «ծաղրասարյակ»¹⁵⁵, իսկ Partcip. II+N կաղապարով՝ *drawnwork* «ձեռագործ», *friedcake* «տապակած փքաբլիթ», *brokenhearted* «կոտրված սրտով, դժբախտ»: Քանի որ անգլերենում բայահիմքն ու անորոշ դերբայի՝ infinitive-ի (առանց to մասնիկի) ձևը համընկնում են, հետևաբար բարդություններ կազմող infinitive (without “to”)+noun կամ noun+infinitive (without “to”) կաղապարներ որպես այդպիսիք չեն քառանդանագրել: Փոխարենը առանձնացրել ենք V+N և N+V կաղապարներ:

Մակբայ +գոյական (Adverb+Noun)

Հայերենում բարդության հիմքերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս դժվարություն է առաջանում ոչ միայն գոյականական հիմքը բայականից, այլև ածականականը մակբայականից տարբերակելիս, քանի որ ածականն ու մակբայը հայերենում հաճախ ձևաբանորեն տարբերակված չեն. սրա պատճառն այն է, որ որակական ածականները միաժամանակ արտահայտում են և՛

¹⁵⁵ Այս բարդություններն առանձնացնում է Օ. Մեշկովը (տե՛ս Օ. Мешков, Семантические аспекты словосложения английского языка, М., 1986, էջ 185-186): Հեղինակը դրանք գրում է գծիկով, սակայն անգլերենի արդի բառարաններում սրանք համադրական բարդություններ են (տե՛ս <http://www.oxforddictionaries.com/definition/english/hummingbird>, <http://www.oxforddictionaries.com/definition/english/mockingbird>-Oxford Dictionaries):

առարկայի հատկանիշի, և՛ գործողության հատկանիշի իմաստ, ինչպես՝ *ուրախ մարդ, գեղեցիկ ծաղիկ* և *ուրախ քայլել, գեղեցիկ ժպտալ*¹⁵⁶: Հետևաբար բարդության կազմի մեջ մտնող բաղադրիչը ածական կամ մակբայ համարելիս կարող է շփոթություն առաջանալ:

Հայագիտության մեջ կարծիք կանան, որ մակբայ խոսքի մասը բառակազմությանն ավելի քիչ է մասնակցում, իսկ գոյականի հետ այն առհասարակ կապակցություն կազմել չի կարող՝ «...մակբայ լրացում վերցնող բոլոր գոյականները կամ բայանուններ են, կամ եղել են բայանուն...»¹⁵⁷: Սակայն դեռևս գրաբարի համար Լ. Հովսեփյանն առանձնացնում է Մ+Գ կաղապարով կազմություններ, ինչպես՝ *յառաջ արածին, յառաջ ադաս, յարածամ, յալ է տաիրաջ* և այլն¹⁵⁸: Բացի այդ՝ Մ+Գ կաղապարով կառույցներ է առանձնացնում նաև Ա. Մարգարյանը, ինչպես՝ *արագածեռն, արագաքայլ, հարածամ, մշտածիծաղ* և այլն¹⁵⁹:

Համադրական բարդություններ կարող են կազմվել ժամանակի, տեղի, ձևի, չափու թանակի մակբայ ներով.

ա) **ժամանակի մակբայ +գոյական**՝ *դեռագյուտ, կանխավաճառք, հաճախագյուտ, հաճախապատում, հավերժավրեժ, հարաքնույթ, մշտածխոր, մշտափողմ, մշտաաղարթ* և այլն,

բ) **տեղի մակբայ +գոյական**՝ *առաջագլուխ, առաջածալուտ, առաջապահակակետ, դրսակողմ, հետակայմ, հեռագիր, հեռապատկեր, ներսակողմ, ներսակար* և այլն,

գ) **չափ ու քանակի մակբայ +գոյական**՝ *առավելակշիռ, բավականաթիվ, կրկնադիտակ, կրկնաթորում, շատագրույց, շատահանճար, սակավաբառ, սակավաժպիտ, սաստկակկիծ, սաստկահարված* և այլն,

դ) **ձևի մակբայ +գոյական**՝ *արագագրություն, արագալուր, արագածեռն, դանդաղերթ, հանկարծակազմ, հանկարծաքրջում, հապճեպաքայլ, շտապաքայլ* և այլն:

¹⁵⁶ Տե՛ս Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզուն: Ձևաբանություն, Եր., 1983, էջ 358:

¹⁵⁷ Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 21-22:

¹⁵⁸ Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 154:

¹⁵⁹ Տե՛ս Ա. Մարգարյան, ժամանակակից հայոց լեզուն (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 130:

Մ+Գ կաղապարով **հոդակապվոր** բարդություններ են՝ *մշտաբնա-կիչ*, *մշտագարուն*, *մշտագթություն*, *հավերժագահ*, *հավերժահարս*, *հեռադեկավարում*, *շատամարդ*, *շատաշնորհ*, *սակավագեն*, *սակավաթերթ* և այլն: **Անհոդակապ** բարդություններ են, օրինակ՝ *արագուսում*, *կամացձայն*, *կանխարգելք*, *մշտադմուկ*, *մշտայցելու*, *մշտարև*, *մոտագդեցություն*, *շառգրություն*, *ցածգլուխ* և այլն:

Մ+Գ կաղապարով կազմվում են.

ա) **գոյականներ**. *կանխավարձ*, *կրկնագրություն*, *կրկնադատում*, *կրկնադուռ*, *հեռադիտակ*, *հեռակառավարում*, *հեռանկար*, *հեռանկյունաչափ*, *մշտաբնակություն* և այլն,

բ) **ածականներ**. *դեռածիլ*, *դեռափետուր*, *կրկնագույն*, *հավերժալույս*, *հավերժանուն*, *հարալուր*, *հեռաբնակ*, *շատաջուր*, *սաստկամուսնի*, *սաստկաշունչ*, *սաստկասարսուռ* և այլն: Կան կառույցներ, որոնք միաժամանակ կարող են լինել և՛ **ածական**, և՛ **մակբայ**՝ *հապճեպաբայ*, *շտապաբայ* և այլն:

Մ+Գ կաղապարով բարդություններում առկա է որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն:

Անգլերենում նույնպես Adv.+N կաղապարի առանձնացումը կապված է որոշակի դժվարությունների հետ: Դրա պատճառն այն է, որ նույն բառը անգլերենում միաժամանակ կարող է լինել մակբայ, նախդիր և ածական, օրինակ՝ *down* բառը հետևյալ նախադասություններում՝ *Ann was running down the street.* (*նախդիր*), *Ann lay down and fell asleep.* (*մակբայ*), *Ann has been feeling rather down lately.* (*ածական*): Adv.+N կաղապարը կարող է նաև չտարբերվել Prep.+N կաղապարից, քանի որ վերջինիս իրացմանը հիմնականում մասնակցում են տեղ ու ժամանակ ցույց տվող նախդիրները, որոնք կարող են նաև որպես տեղի ու ժամանակի մակբայներ ընկալվել¹⁶⁰: Լ. Բաուերը հենց այս հանգամանքով է պայմանավորում Adv.+N կաղապարի՝ բառակազմական տեսանկյունից անկենսունակ լինելը:

Adv.+N կաղապարով (նրանք, որոնցում սերող հիմքը բուն մակբայ է) մեզ հանդիպած փոքրաթիվ համադրական բարդություններ են՝ *everglade* «ճահճուտ», *oftentimes* «հաճախ», *nowadays* «ներկայումս», այս օրերին, հիմա» և այլն:

¹⁶⁰ Տե՛ս L. Bauer, English Word-Formation, Cambridge, 1983, էջ 206:

Կապագոյ ական (Preposition+Noun)

Կ+Գ կառույցները հայերենում խիստ հազվադեպ են, օրինակ՝ **դեմ** կապով և գոյականով՝ *դիմապատ, դիմապակի*, **տակ** կապով և գոյականով՝ *տականոթ, տակաշոր, տակաքար* և այլն: Այս բարդությունների բաղադրիչների միջև առկա է որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն:

Անգլերենում Prep.+N¹⁶¹ կաղապարի իրացմանը մասնակցում են հիմնականում տեղ և ժամանակ ցույց տվող նախդիրները, հետևաբար կարելի է առանձնացնել Prep.+N կաղապարով բարդությունների հետևյալ խմբերը.

ա) **սեղի, ուղղության նախդիր+գոյական (Prep. of place and direction+N)**՝ *aboveground* «գետնից վեր», *belowdecks* «նավի մեջ», *byway* «ոչ բանուկ ճանապարհ», *downhill* «բլուրն ի վար», *inside* «ներսում», *outskirts* «արվարձաններ», *overboard* «նավից դուրս», *throughway* «մայրուղի», *underclothes* «ներքնազգեստ», *upside* «վերնակողմ» և այլն¹⁶²,

¹⁶¹ Վ. Ադամսը Prep.+N կաղապարի մեջ քննում է ոչ միայն նախորդ և բուն գոյականով բարդությունները, այլև այն կառույցները, որոնցում հեղինակի դիտարկմամբ առաջին բաղադրիչը նախդիր է, իսկ երկրորդը՝ կոնվերսիայի եղանակով բայից կազմված գոյական, ինչպես՝ *downslide* «վատթարացում», *upkeep* «նորոգ վիճակում պահպանում», *upturn* «առաջընթաց» և այլն (տե՛ս V. Adams, Complex Words in English, London and New York, 2013, էջ 73): Նման կառույցները կազմվել են հետևյալ կերպ՝ *slide+down* → *downslide* «վատթարանալ» → *downslide* «վատթարացում», *keep+up* → *upkeep* «նորոգ վիճակում պահպանել» → *upkeep* «նորոգ վիճակում պահպանում» և այլն: Փաստորեն սկզբում համապատասխան բառակապակցությունը շրջվել է, դարձել բարդ բայ, այնուհետև բարդ բայն իր հերթին կոնվերսիայի եղանակով գոյականացել է (տե՛ս O. Мешков, Семантические аспекты словосложения английского языка, М., 1986, էջ 188): Եթե հաշվի առնենք դրանց կազմության գործընթացը, ապա սրանք կարող են առհասարակ չվերագրվել նախդիր+գոյական կաղապարին, քանի որ այդ կաղապարի հետևողությամբ չեն կազմվել, սակայն Վ. Ադամսը սրանք այդ կաղապարին է վերագրել՝ ելնելով դրանց կազմության վերջնական արդյունքից և ոչ թե բուն գործընթացից, դիտարկելով դրանք լեզվի համաժամանակյա կտրվածքով: Ինչ վերաբերում է բարդության կազմում եղած նախդրին, բառակապակցություններում դրանք մակբայներ են, իսկ արդեն բարդության ներսում միանալով բայական գոյականին՝ դառնում են նախդիրներ, այսինքն՝ տեղի է ունենում մակբայ-նախդիր գործառնական իմաստափոխություն:

¹⁶² *In, off, out, over, under* և նման բառերով ու գոյականով կազմված կառույցները ոչ թե ածանցավոր, այլ բարդ բառեր համարելու հարցում մենք առաջնորդվել ենք Զ. Մարչանդի մոտեցմամբ (տե՛ս H. Marchand, The Categories and Types of Present-Day English Word-Formation; A Synchronic-Diachronic Approach, Wiesbaden, 1960, էջ 66-79): Ժամանակակից լեզվաբաններից շատերը նույնպես այդ կառույցները դասում են բարդությունների շարքին (տե՛ս L. Bauer, նշվ. աշխ., էջ 206, V. Adams, նշվ. աշխ., էջ 71-77, L. Brinton and D. Brinton, The Linguistic Structure of Modern English, Amsterdam/Philadelphia, 2010, էջ 105): Ըստ այս մոտեցման՝ *in, off, out, over, under* և նման այլ բառերը ածանցներ չեն, քանի որ կարող են նաև ինքնուրույն գործածություն ունենալ կամ հանդես գալ առանձին նախդրավոր բառակապակցություններում և հարադրավոր բայերի կազմում: Իհարկե, խոսքը չի վերաբերում այն կառույցներին, որոնցում նշված նախդիրները հստակ արտահայտված ածանցական իմաստ ունեն, ինչպես՝ *overestimation*

բ) **Ժամանակի նախդիր+գոյական (Prep. of time+N)**՝ *aftereffect* «հետագա-դեցույթ ուն», *afterlife* «հանդերձյալ կյանք», *afterthought* «ուշացած միտք», *afterworld* «հանդերձյալ աշխարհ», *beforehand* «նախօրոք», *beforelife* «նախակյանք» և այլն,

գ) **Նախդիր+գոյական կաղապարով այլ իմաստներ արտահայտող (prepositions expressing other meanings+N)**՝ *byline* «հեղինակի անունը նշող տող (լրագրում)», *byname* «մականուն», *undergraduate* «ավարտական կուրսի ուսանող», *underclass* «ստորին խավ» և այլն,

Prep.+N կաղապարով հիմնականում կազմվում են.

ա) **գոյականներ**՝ *afterheat* «մնացորդային ջերմարտադրություն», *afterword* «վերջաբան», *background* «հետնապլան», *overcoat* «վերարկու», *overclass* «բարձր խավ», *underbrush* «թփուտ» և այլն,

բ) **ածականներ**՝ *indoor* «սենյակային», *inland* «ափից հեռու գտնվող», *offshore* «ափից փչող (քամի)», *overland* «ցամաքային», *nearshore* «ափամերձ», *undercover* «ծածկած», *upcountry* «երկրի սահմաններից հեռու ընկած» և այլն,

գ) **մակբայներ**՝ *beforetime* «Ժամանակից շուտ», *indoors* «ներսում», *outdoors* «դրսում», *overhead* «գլխավերևում», *overseas* «ծովից այն կողմ», *upstairs* «վեր», *upstream* «հոսանքնի վեր» և այլն:

Կան **Prep.+N** կաղապարով արտակենտրոն բարդություններ, ինչպես՝ *backwater* «հեռավոր, խուլ», *oversight* «անփութություն սխալ», *underdog* «թույլ մրցակից» և այլն:

2.2 Գոյականական սերող հիմքով համադրական բարդությունները հայերենում և անգլերենում

Այժմ անդրադառնանք գուցադրվող լեզուներում այն համադրական բարդություններին, որոնցում բարդության սերող հիմքը գոյականն է, իսկ բաղադրող հիմք են դառնում այլ խոսքի մասեր:

Մեր շարադրանքում առանձին չենք անդրադառնում գոյականական սերող հիմքով այն բարդություններին, որոնցում բաղադրող հիմքը նույնպես գոյական է, քանի որ դրանք արդեն քննվել են գոյականական բաղադրող հիմքով բարդությունների մեջ (Գ+Գ): Գոյականի հետ որպես գերադաս բաղադրիչ, թվականը,

«գերազնահատում», *overheat* «գերտաքություն», *underfunding* «թերֆինանսավորում», *overplanning* «գերալանավորում» և այլն:

դերանունը և մակբայը¹⁶³ բարդություններ չեն կազմում: Դա բացատրվում է այդ խոսքի մասերի բառիմաստով և ձևաբանական հատկանիշներով. դրանց բառիմաստը լրացումներ չի պահանջում, ուստի դրանք որպես լրացյալ հանդես չեն գալիս և բարդություններ էլ չեն կազմում¹⁶⁴: Հետևաբար հայերենում չկան Գ+Թ, Գ+Դ և Գ+Մ կաղապարով բարդություններ: Նույն կաղապարներով բարդություններ՝ N+Num., N+Pron., N+Adv.¹⁶⁵, չկան նաև անգլերենում:

Գոյական+ածական (Noun+Adjective)

Ածական վերջնաբաղադրիչով բարդություններում բարդության հիմնական իմաստն արտահայտում է ածականը, իսկ առաջին բաղադրիչն ածականի լրացումն է: Գ+Ա կաղապարով բացառապես կազմվում են ածականներ (եթե նկատի չունենանք դրանց հետագա գոյականացման հավանականությունը), քանի որ երկրորդ անդամը՝ ածականը, իր խոսքիմասային պատկանելությունը հաղորդում է ամբողջ բարդությանը¹⁶⁶: Գ+Ա կաղապարով **ածականներ** են՝ *անագապղնձե, բոքոնանման, երկաթապինդ, ծալ ապակաս, հրաբորբ, մեղսակից, նավաբեկյալ, ջլապինդ, տաճարախիտ, տարրալուծելի, փայլակնահրաշ* և այլն. սրանց որոշ մասը կարող է նաև մակբայական կիրառություն ունենալ, օրինակ՝ «*ոտաբաց աղջիկ*», «*աղջիկը ոտաբաց էր քայլում*», «*արտասվախառն հեկեկոց*», «*Նա արտասվախառն հեկեկաց*» և այլն:

Այս կաղապարով **հոդակապակոր** բարդություններ են, օրինակ՝ *աղապակաս, իրավահավասար, կրոնամոլ, հայալայել, հարկավճարունակ, հոգեզմայլ, մահամերձ, յուզադիմացկուն, շնորհագուրկ,*

¹⁶³ Որպես Գ+Մ կաղապարով բարդություն կարող է ընկալվել, օրինակ՝ *տյառնընդառաջ* բարդությունը, քանի որ *ընդառաջ* բառը մակբայ խոսքի մաս է, սակայն բարդության իմաստն է «տիրոջն ընդառաջ գնալ», որ նշանակում է՝ բարդության բաղադրող հիմքն այստեղ բայական իմաստ ունի: Լ. Հովսեփյանը գրաբարի համար բերում է *ակնյանդիման* և *թոքառաք* (ք) բարդությունները, սակայն միևնույն ժամանակ նշում է, որ վերջինի երկրորդ բաղադրիչը կարող է նաև գոյական համարվել՝ «առաքամա» իմաստով (տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 155):

¹⁶⁴ Տե՛ս Լ. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Եր., 2011, էջ 20:

¹⁶⁵ Անգլերենում որպես մակբայ կարող են ընկալվել N+Prep. կաղապարի իրացմանը մասնակցող նախդիրները, քանի որ մակբայներն ու նախդիրները հաճախ ձևով համըկնում են: Բուն մակբայները որպես բաղադրող հիմք առհասարակ չեն մասնակցում գոյականական սերող հիմքով բարդությունների կազմությանը, հետևաբար չենք առանձնացրել N+Adv. կաղապար:

¹⁶⁶ Տե՛ս Լ. Հովսեփյան, Նշվ. աշխ., էջ 153:

քու նքագանգուր և այլն: **Անհողակալ** են, օրինակ՝ *գու նառատ, կենսուռ նակ, կենսուռ րախ, հերարծակ, ձեռնուռ նայն, ձերբագատ, ձյուռ նառատ, մարտուռ նակ, մրգառատ, պատվարժան* և այլն:

Այս կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև կարող է լինել որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն, ինչպես՝ *բերքառատ, գու նառատ, մարդառատ* և այլն: Այս դեպքում, փաստորեն, սրանց բաղադրիչների միջև առկա է շարահյուսական այն նույն հարաբերությունը, որը բնորոշ է Ա+Գ կաղապարով բարդություններին:

Գ+Ա կաղապարով որոշ բարդություններ իրենց կառուցվածքով հայերենում բարդ բառերի կազմության օրենքներին խորթ են, օրինակ՝ *հողասակալ, ջրասակալ* բառերը: Սրանք համապատասխանաբար նշանակում են «սակալ հող ունեցող» և «սակալ ջուր ունեցող», սակայն գործածվում են նաև *սակալաջուր, սակալահող* ձևերով, որ հայերենի բառաբարդման օրենքներով ավելի ճիշտ է¹⁶⁷:

Գ+Ա կաղապարով կազմված բարդ բառերի բաղադրիչների միջև կարող են լինել նաև պարագայական հարաբերություններ, ինչպես՝ *վարդակարմիր (վարդի նման կարմիր), գինեկարմիր (գինու պես կարմիր), արծաթագորշ (արծաթի պես գորշ)* և այլն: Այս կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև հաճախ առկա է նաև խնդիր-խնդրառու շարահյուսական հարաբերություն: Մենք այդ դեպքում գործ ունենք բարդ բառի սահմաններում ածականի խնդրառության յուրահատուկ դրսևորման հետ¹⁶⁸: Այդ տիպի բարդ բառերում տարբեր ածականներ հանդես են գալիս գերադաս անդամի դերով, օրինակ՝ *ամերիկահպատակ, աստվածավայել, արտասովախառն, հանգագուրկ, մարդահաճո, մարտուռ նակ, մտահասուռ, սիրարժան, վարակազերծ, տերևալիտ* և այլն:

Վերջապես, Գ+Ա կառույցով բարդությունները կարող են արտահայտել զանազան իմաստներ, որոնցից կարելի է առանձնացնել երկու հիմնական խումբ.

ա) մարդկանց արտաքին, հոգեմտավոր և բարոյական հատկանիշներ, ինչպես՝ *ալեխառն, բարոյազուրկ, զգայազուրկ*,

¹⁶⁷ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 330:

¹⁶⁸ Տե՛ս Ռ. Մկրտչյան, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԼՈՅ, IV, Եր., 1977, էջ 146-147:

լ անջաբաց, խել ազոուրկ, կամազոուրկ, հարգարժան, մտամոլոր, սանձարձակ, սրտապինդ և այլն,

բ) բնության երևույթներին, բույսերին վերաբերող բառեր, ինչպես՝ անձրևախառն, անտառախիտ, բուսազոուրկ, ծաղկառատ, ծառախիտ, կանաչ ազոուրկ, հողազոուրկ, ճյուղազոուրկ, մացառախիտ և այլն:

Գ+Ա կաղապարով արտակենտրոն բարդություններ են, օրինակ՝ աջքաբաց, բերանբաց, ձայնազոուրկ, մտամոլոր, սանձաթող, սանձարձակ, սրտաբաց, սրտապինդ և այլն: Սրանք բոլորը բնութագրում են մարդուն, սակայն բնութագրվող առարկան բարդության մեջ ձևական արտահայտություն չունի:

Անգլերենում ևս N+A կաղապարով հիմնականում կազմվում են **ածականներ**, ինչպես՝ *airtight* «օդանթափանց», *bloodthirsty* «արյունռուշտ», *daylong* «շուրջօրյա», *homesick* «հայրենակարոտ», *lifelong* «հարատև», *lovesick* «սիրատոչոր», *seasick* «ծովախտով տառապող», *skintight* «կիպ» և այլն: Սրանք *ոչ շարահյուսական բարդություններ* (*asyntactic compounds*) են, որոնցում բաղադրիչների շարադասությունը խախտված է, օրինակ՝ *homesick* բարդության փոխարեն պետք է լիներ *sickhome*, որը, ի տարբերություն առաջինի, լիովին կհամապատասխաներ անգլերենի շարադասական, բարդությունների կազմության ընդհանուր կանոններին, քանի որ կապակցության վերածելիս կստացվեր *sick of home* բառակապակցությունը:

Փաստորեն երկու լեզուներում այս կաղապարով առկա են այնպիսի կազմություններ, որոնք ընդհանուր առմամբ խորթ են լեզվի ներքին հորինվածքին ու բառաբարդման կանոններին:

Այս կաղապարով կառույցների երկրորդ բաղադրիչները հաճախ *free* «ազատ», *wise* «ձև, կերպ», *like* «նման», *proof* «կայուն» և նմանատիպ բառեր են, որոնցով կազմված բարդությունները երկակի բացատրություն կարող են ունենալ՝ մի կողմից համարվելով բարդություններ¹⁶⁹, մյուս կողմից՝ վերջածանցավոր բառեր, քանի որ, օրինակ՝ *free* բառի իմաստը *carefree* «անհոգ», *heartfree* «անսեր» և նմանատիպ բառերում համարժեք է *less* «ան» վերջածանցին (համապատասխանում է հայերենի «ան» նախածանցին): Հայերենի բարդություններում անգլերենի *free* բաղադրիչին համարժեք է, օրին-

¹⁶⁹ Տե՛ս L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 209:

նակ՝ *զերծ* ածականը կամ ածանցակերպը, որը գործածվում է «այ սինչ քանից ազատ» նշանակությամբ, ինչպես՝ *ածանցազերծ, մաշկազերծ, մորթազերծ, պսակազերծ* և այլ բառերում¹⁷⁰:

Proof բառն ածանցական իմաստ ունի *stormproof* «փոթորկակայուն», *waterproof* «ջրակայուն», *weatherproof* «եղանակային բոլոր պայմանների նկատմամբ կայուն» և այլ բառերում, իսկ իբրև առանձին բառ՝ նշանակում է «անթափանցելի»:

Նույն կերպ *like* բառը *childlike* «երեխայանման», *dreamlike* «հեքիաթանման», *manlike* «մարդանման», *umbrellalike* «անձրևանոցի նման» բառերում ունի *-ish* «նման, պես» ածանցական իմաստը (հմմտ. *childish* «երեխայական», *womanish* «կնանման, կանացիակերպ» նն): *Wise* բառն իբրև առանձին, ինքնուրույն բառ ունի «կերպ, ձև» իմաստը, իսկ *babywise* «երեխայանման», *crabwise* «ծուռումուռ, ոլոր-մոլոր», *crosswise* «խաչանման» բարդություններում այն հանդես է գալիս վերջածանցի դերում՝ «նման» իմաստով: Հայերենում *like, wise* ածանցներով բառերը համապատասխանում են Գ+Ա կառույցին, օրինակ՝ *բերդանման, գազանման, գայլանման, խաբսխանման, մարդանման, տերևանման* և այլն:

Արդի անգլերենի բառագիտությանը նվիրված մի շարք աշխատություններում վերոնշյալ միավորները համարվում են ածանցներ¹⁷¹, թեև սրանք, իրականում, ոչ լիովին ածանցներ են, ոչ էլ բառեր, այդ իսկ պատճառով հաճախ կոչվում են նաև *ածանցակերպներ*: Դրանք կարող են լինել բառեր, քանի որ ունեն նաև ինքնուրույն կիրառություն, և ածանցներ, քանի որ բարդություններում կարող են ունենալ նաև ածանցական իմաստ:

Հայերենում, օրինակ՝ կարելի է ածանցակերպներ համարել Գ+Ա կառույցով բարդությունների *զերծ, նման, մոլ, ունակ* բաղադրիչները: Շատ լեզվաբաններ առհասարակ չեն ընդունում ածանցակերպների գոյությունը, իսկ նրանք, ովքեր ընդունում են, համարում են, որ լեզվի բառակազմական համակարգի փոփոխությունների դրսևորումներից մեկն էլ հենց ածանցակերպների առաջացումն է՝ արմատների ածանցացման գործըն-

¹⁷⁰ Տե՛ս Դ. Գյուրջինյան, Արդի հայերենի վերջածանցակերպները, ԲԵՀ, 2 (95), Եր., 1998, էջ 75-76:

¹⁷¹ Տե՛ս А. Волкова, Е. Тимофеева, English Lexicology: Theory and Practice, Владивосток, 2012, էջ 177:

թացք, որի դեպքում «այս կամ այն հիմնական ձևով թի գործառույթի երկփեղկում է կատարվում. բարդ բառերի հաճախական բաղադրիչը բառական իմաստից զգալի չափով հեռանում է և քիչ թե շատ վերացարկվելով՝ հանդես գալիս բառակազմական-աճանցական նշանակությամբ»¹⁷²:

Եթե հաշվի առնենք N+A կաղապարի իմաստային կենտրոնի ածական խոսքի մաս լինելը, պետք է եզրակացնենք, որ այս բարդությունները հիմնականում ներկենտրոն են, քանի որ կաղապարն ինքն ամբողջությամբ ունի ածականի գործառույթ, և ածական է նաև դրա բաղադրող հիմքը: Սակայն եթե արտակենտրոնությունը դիտարկենք իմաստային տեսանկյունից (երբ բառի իմաստային կենտրոնը բառի ներսում չէ), ապա այդպիսիք կարելի է համարել *carsick* «մեքենայի ընթացքից սրտխառնոց ունեցող», *colourblind* «գունակույր, դալ տոնիկ», *headstrong* «պնդաճակատ, համար» և այլ բարդություններ:

Անգլերենում հաճախ այս կաղապարով բարդությունների բաղադրիչների հարաբերությամբ արտահայտվում են նմանողական կամ համեմատական իմաստներ, ինչպես՝ *bloodred* «արյան պես կարմիր», սակայն այս իմաստներն արտահայտվում են հիմնականում վերլուծական բաղադրությունների միջոցով, ինչպես՝ *rose-red* «վարդակարմիր», *snow-white* «ձյունաճերմակ» և այլն: Առհասարակ, անգլերենում N+A կաղապարով վերլուծական բաղադրություններ ավելի շատ են հանդիպում, քան նույն կաղապարով համադրական բարդություններ:

Գոյական+բայ (Noun+Verb)

Գոյական+բայ արմատ/բայ ահիմք կաղապարն ամենագործունն է ժամանակակից հայերենում. բարդության այս տիպը խիստ կենսունակ է մեր լեզվում: Առհասարակ, բարդությունների կազմության ժամանակ բայական բաղադրիչն ավելի շատ հանդիպում է բաղադրող հիմքի դերում՝ որպես բարդության գերադաս անդամ, իսկ առաջին անգամը՝ գոյականը, նրա լրացումն է: Գ+Բ բաղադրումից

¹⁷² Դ. Գյուրջինյան, Արդի հայերենի նախաձևացված երկփեղք, ՀԶԼՀ, պրակ Ա, Եր., 1998, էջ 51:

կազմվում են հիմնականում **ածականներ**, քանի որ բայ արմատն արտահայտում է գործողության ընդհանուր հատկանիշ, և բարդություններն ունեն «երկրորդ արմատի (բայ արմատի) արտահայտած հատկանիշը (վիճակը) ունեցող, ունեցած» ընդհանուր իմաստը»¹⁷³։ Ստացված բարդությունների գոյականական բաղադրիչները ունենում են խնդրային և պարագայական զանազան պաշտոններ։

Գ+Բ կաղապարով **ածականներ** են, օրինակ՝ *ազգահալած, ալեծուկ, լերդապատառ, ծովածեծ, հազաբույժ, հայրենասպիղծ, ճգնափործալից, մազաթափ, մահատարած, մահուդապատ, օրինաճանաչ* և այլն։

Այս կառույցով կան նաև խիստ սակավաթիվ **գոյականներ**, քանի որ դրանց մի մասը կա՛մ միաժամանակ նաև ածական է, կա՛մ էլ գոյականացել է ածականներից, օրինակ՝ *աղամածին* բառը նախնշանակել է *Աղամից ծնված*, այնուհետև՝ *աղամորդի, մարդ*։ Սրանց երկրորդ բաղադրիչների դերում հաճախակի են *գործ, կիր, կալ, վար* բայահիմքերը (*անվագործ, բեռնակիր, աշխարհակալ, գործիքավար*), որոնք սկսել են ձեռք բերել *ածանցակերպների* արժեք¹⁷⁴։

Գ+Բ կաղապարով կազմված **գոյականներ** են, օրինակ՝ *հատապտղաբույժ, մազաբաժան* և այլն։ Միաժամանակ և՛ **գոյականներ**, և՛ **ածականներ** են, օրինակ՝ *աղեղակիր, բարբառագետ, լուսածագ, ծաղկագարդ, ծառագարդ, ծիրանաքաղ, ծխախոտագործ, ծծկեր, ծնծղահար, հայ տատու, մածնավաճառ* և այլն։

Յոդակապալոր են, օրինակ՝ *արյունածին, ծառապատ, կնամեծար, հիսուսադավան, հյուրասեր, մազակալ, մալուխագործ, մակբայակերտ, ցեղասպան, քրտնաբեր*։ **Անհոդակապ** են, օրինակ՝ *ակնդիր, ազգայնաց, ազգութաց, ախտարգել, ծովընթաց, համտես, հայտնաց, հիմնարկ, ունկնդիր, օրենսգետ* և այլն։

Գ+Բ կաղապարին ենթվերագրում են այն բարդությունները, որոնց առաջին բաղադրիչներն ածականական ծագում ունեն, սակայն բարդության մեջ հանդես են գալիս ոչ թե իրենց բուն խոսքիմասային իմաստով, այլ գոյականացած են, ինչպես՝ *դառնածին (դառնույթյուն ծնող), խորաչափ (խորություն չափող), քաղցրասեր (քաղցրություն սիրող)* և այլն։ Այստեղ հնարավոր կլիներ նաև բառակազմական գաղտնի քայլ վերականգնել, այսինքն՝ գոյականա-

¹⁷³ Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1987, էջ 21։

¹⁷⁴ Տե՛ս Լ. Յովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 151։

կերտ-*ռւթյռւն* կամ որևէ այլ ածանցի կցում և հետագա անկում՝ բառաբարդման հաջորդող քայլի ժամանակ, սակայն քանի որ գոյականացումը կոնվերսիայի ձևով հատուկ է եղել հայերենին նրա զարգացման բոլոր փուլերում, ուստի սապարզապես ածականի կոնվերսիայի՝ գոյականացման արդյունք է¹⁷⁵:

Գ+Բ կաղապարով բարդությունների բաղադրող հիմքում բայական բաղադրիչը տարբեր բերականական ձևավորումներով է հանդես գալիս, ըստ որի՝ բարդությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի¹⁷⁶.

ա) Երկրորդ հիմքային բաղադրիչն արտահայտված է մաքուր բայարմատներով, ինչպես՝ *շղթայ ազարդ, ծաղկածածկ, ծաղկաքաղ, ծարավատանջ, ծիրանաքաղ, ծծկեր, հայել ապատ, հյուրամերժ, մոգապաշտ, մորթեզարդ, մսագործ, ստվերահալ ած* և այլն,

բ) Երկրորդ հիմքային բաղադրիչն արտահայտված է գրաբարի պատճառական բայահիմքերով, ինչպես՝ *գլխակորույս, երախտահատույց, երգուսույց, կրոնուսույց, պարուսույց, պարտահատույց, քանքարաթաթույց, օրենսուսույց* և այլն,

գ) Երկրորդ հիմքային բաղադրիչը համապատասխանում է անցյալ կատարյալի ցոյական վերջավորություններով հիմքերին, ինչպես՝ *աղքատիմաց, խնկաղաց, հեքիաթասաց, ծիթաղաց, մայրատյաց, ողբասաց, ուխտագնաց, պատվազգաց, ցրտազգաց, օտարագնաց* և այլն,

դ) Երկրորդ հիմքային բաղադրիչը համընկնում է բուն հրամայականի եզակի երկրորդ դեմքին, ինչպես՝ *անձնատուր, աստվածատուր, բնատուր, գործադիր, թագադիր, ծնրադիր, կանոնադիր, պայմանադիր, պսակադիր, օրինադիր* և այլն:

Ինչ վերաբերում է Գ+Բ կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերություններին, դրանք բազմազան են. քանի որ, ինչպես հայտնի է, նախադասության բայական անդամի լրացումներն են **խնդիրներն** ու **պարագաները**, հետևաբար բարդության՝ բայով արտահայտված երկրորդ բաղադրիչին նույնպես լրացնում են խնդիրներն ու պարագաները, որոնց դերը կատարում են բարդության

¹⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 152:

¹⁷⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 120-121:

առաջին բաղադրիչները: Գ+Բ կաղապարով բարդությունների բաղադրիչների միջև կարող է լինել նաև **ենթակայ ակամ** հարաբերություն:

Խնդրային հարաբերություն և արտահայտող բարդություններ

Գ+Բ կաղապարով կազմված բարդություններում ընդհանուր առմամբ դրսևորվում են խնդրային հետևյալ հարաբերությունները.

ա) ուղիղխնդրային հարաբերություն. սրանցում առաջին բաղադրիչը համարժեք է նույնանիշ բառակապակցությունների ուղղական-հայցականով արտահայտված անդամին, ինչպես՝ *ակնոցագործ, բերդապահ, դավադիր, դավասեր, թարախածին, թմրաբեր, ծիծաղահարույց, կենսատու, հայրենապաշտ, հավատակործան, հատապտղատու, հրդեհածին, տիեզերացունց* և այլն:

Բարդության բայական բաղադրիչն արտահայտվում է ենթակայական դերբայի ներգործող սեռով, ինչպես՝ *կարգապահ=կարգ պահող, ծիծաղահարույց=ծիծաղ հարուցող, հրդեհածին=հրդեհ ծնող* և այլն:

բ) Հանգման անուղղակի խնդրի հարաբերություն. բարդության առաջին բաղադրիչն արտահայտում է տրական հոլովի իմաստ, ինչպես՝ *արհեստավարժ, երկնահաս, լեռնահայաց, հայրենանպաստ, վանքապատկան, ցրտասովոր, քմահաճ* և այլն:

գ) Անջատման անուղղակի խնդրի հարաբերություն. բարդության առաջին բաղադրիչն ունի բացառական հոլովի իմաստ, ինչպես՝ *արքայածին, բնական, գլխահան, սրտաբույս, մարմարակերտ, վշտաբեկ, տեղահան, փոթորկածին* և այլն:

դ) Միջոցի անուղղակի խնդրի հարաբերություն. սրանցում գոյական բաղադրիչն արտահայտում է հիմնականում գործիական հոլովածևի իմաստ, ինչպես՝ *ամոթալից, արյունաներկ, բեռնաբարձ, դափնեզարդ, կտցահար, նոճիածածկ, ոսկրապատ* և այլն: Միջոցի խնդիրը արտահայտում է գործողության կատարման միջոցը:

Անվանաբայական համանունության պատճառով Գ+Բ բաղադրությունը հաճախ ըմբռնվում է որպես *գոյական+գոյական* կառույց, ինչպես՝ *ձեռագործ*՝ և՛ *ձեռքով գործված*, և՛ *ձեռքի գործ*, *խողովակաշար*՝ *խողովակներով շարված*, *խողովակների շարք* և այլն:

Երկրորդ դեպքում բաղադրիչների միջև հատկացուցիչ-հատկացյալի հարաբերությունն կդիտվի:

ե) Ներգործող խնդրի հարաբերությունն. ներգործող անուղղակի խնդրի իմաստը հայերենում հիմնականում արտահայտվում է բացառական հոլովով կամ տրականով ու *կողմից* կապով, ինչպես նաև գործիական հոլովով: Ներգործող խնդիրը միշտ դրվում է կրավորական սեռի բայերի պահանջով¹⁷⁷:

Բաղադրիչների միջև ներգործող խնդրի հարաբերությամբ բարդություններ են, օրինակ՝ *ծյուռնախեղդ (ծյուռնից խեղդված)*, *ծյուռնածածկ (ծյուռնով ծածկված)*, *ծխախեղդ (ծխից խեղդված)*, *կայծակնահար (կայծակից հարվածված, խփված)*, *կարոտավառ (կարոտից վառված)*, *շանթակեզ (շանթից կիզված, այրված)*, *փայտաշեն (փայտից շինված)* և այլն, սակայն այս բարդությունները բացելիս երկրորդ բաղադրիչը կարող է ընկալվել նաև որպես ներգործական սեռի դերբայ: Երբ երկրորդ բաղադրիչը ընկալվում է որպես կրավորական սեռի դերբայ, գործունեք ներգործող խնդրի հետ, իսկ երբ այն ընկալվում է որպես ներգործական սեռի դերբայ, ապա առաջին բաղադրիչը դառնում է կողմնակի ենթակա, ինչպես օրինակ՝ *եղեռնազարկ (եղեռնի զարկած կամ եղեռնից զարկված)*, *գայլ ապատառ (գայլի պատառոտած, գայլից պատառոտված)*: Յետևաբար միևնույն բարդությունը բաղադրիչների շարահյուսական կապակցության տեսանկյունից կարող է երկակի բացատրություն ունենալ¹⁷⁸:

Պարագայ ական հարաբերությունն արտահայտող բարդություններ

Ինչպես արդեն նշել ենք, համադրական բարդությունների բաղադրիչների միջև կարող են դրսևորվել նաև պարագայ ական հարաբերություններ.

ա) Տեղի պարագայի հարաբերությունն արտահայտող բարդություններում գոյական բաղադրիչն ունի. 1. ուղղական-հայցական հոլովածևի նշանակությունն, ինչպես՝ *երկնամբարձ*,

¹⁷⁷ Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բադիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսությունն, Եր., 2003, էջ 144:

¹⁷⁸ Տե՛ս Ռ. Մկրտչյան, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԼՈՅ, IV, Եր., 1977, էջ 141:

երկնառաք, ի եռնամուտ տու նդարծ և այլն, 2. ներգոյ ական հոլովաձևի նշանակություն, ինչպես՝ ամառանոցաքնակ, գյուղաքնակ, ծովասույգ, կղզեքնակ, ծյունաթավալ, մոխրաթաթափ տիեզերասույգ, փռեթավալ և այլն, 3. տրական հոլովաձևի նշանակություն, ինչպես՝ երկնահուպ, երկնամած, վիմագիր (քարին գրված), տապանագիր և այլն, 4. գործիական հոլովաձևի նշանակություն, ինչպես՝ գետազնաց, օդագնաց, օդասլաց և այլն, 5. բացառական հոլովաձևի նշանակություն, ինչպես՝ աստվածառաք, երկնաբույս ի եռնահոս, ի եռնաբույս ձվածին և այլն:

բ) Պատճառի պարագայի նշանակություն. նման բարդություններում գոյականը բացառական հոլովաձևի իմաստ է արտահայտում, ինչպես՝ ախտաբորբոք, ախաբեկ, հոգսամաշ, վշտատոչ որ, տոթախեղդ, ցավատանջ և այլն:

գ) Ժամանակի պարագայի նշանակություն. սրանցում առաջին բաղադրիչը կարող է ունենալ հոլովական տարբեր իմաստներ, ինչպես՝ ամառնաբույս, ամառնակեզ, աշնանաթափ, աշնանահաս, աշնանատուկ, գարնանախթիթ, գարնանաշարժ, գիշերաբաղձ, գիշերախթիթ, ձմեռնաբույս և այլն:

դ) Չափի և ձևի պարագայի նշանակություններ. արծաթափայլ (արծաթի պես փայլող), բոցածավալ (բոցի նման ծավալված, բոցի չափ ծավալված), դիաթավալ (դիակի պես գետնին թավալված՝ տապալված), ծովատարած (ծովի նման տարածված, ծովի չափ տարածված), ծխագալ ար (ծխի պես գալ արվող), ոսկեհնչյուն (ոսկու նման հնչող), ծյունափայլ (ծյուն պես փայլող) և այլն:

Ենթակայ ական հարաբերություն և արտահայտող

բարդություններ

Այս բարդություններում առաջին բաղադրիչները ենթակայի հարաբերություն են արտահայտում՝ հանդես գալով ուղղական հոլովով, ինչպես՝ այգաբաց, գլխամեռ, թևաթափ լուսաբաց, ճարահատ, մարդամեռ, մտացոր, շնչակտուր, շնչահեղձ և այլ բարդություններում, որտեղ բայական բաղադրիչը գործածվում է հարակատար դերբայի՝ 1. չեզոք սեռի նշանակությամբ, օրինակ՝ ճարահատ՝ ճարը հատած, 2. կրավորական սեռի նշանակությամբ, օրինակ՝ շնչակտուր՝ շունը կտրված և այլն:

Ենթակայի հարաբերությունն արտահայտող բարդությունները այնքան կենսունակ չեն, որքան խնդրային ու պարագայական հարաբերությունն արտահայտողները:

Բարդության բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերությունները հաճախ հստակ չեն, քանի որ միևնույն բարդությունը կարող է տարբեր նշանակություններով հասկացվել, օրինակ՝ **լավատես**՝ 1. լավը տեսնող, 2. լավ տեսնող, **ծովածով**՝ 1. ծովում ծփացող, 2. ծովի պես ծփացող, **ջրասուն**՝ 1. ջրով սնվող, սնված, ինչպես կաթնասուն, 2. ջրի մեջ սնվող և այլն¹⁷⁹: Նույն կերպ, օրինակ՝ *թարախածին, փոթորկածին* բառերում մերթ կարելի է դիտել ուղիղխնդրային՝ *թարախ ծնող, փոթորիկ ծնող* իմաստներով, մերթ՝ անջատման խնդրի շարահյուսական հարաբերությունն՝ *թարախից ծնված, փոթորկից ծնված*:

Բացի բաղադրիչների միջև շարահյուսական ամենաբազմազան հարաբերություններից՝ Գ+Բ կադապարով բարդությունները, ըստ արտահայտած իմաստի, կարող են քիմբազորել հետևյալ կերպ.

ա) վիճակ, դրություն, հատկանիշ, զգացմունքներ, ապրումներ՝ *աղմկասեր, ամոթալից, արյունաթաթախ, արնախում, բամբասասեր, գինեմեծ, երազախաբ, խռովահույզ, համբերատար, հյուրամեծար, պատվասեր, ստախոս* և այլն,

բ) կրոն, նախապաշարմունք՝ *աղոթատյաց, աստվածակերտ, աստվածակիր, աստվածամեծար, աստվածանարգ, երազադատ, երազարյուն, խաչապաշտ, հայրապետադիր, մեղսագործ, նեռադավան, սաղմոսասաց, սատանայապաշտ* և այլն,

գ) զենք-զինամթերքի առնչվող բառեր՝ *թրախորով, թրածեծ, կացնահար, նետախողխող, նիզակածիգ, սրախոց, տիգաբեկ, տիգակիր* և այլն,

դ) բնությանը, երկնային մարմիններին առնչվող բառեր՝ *ամպաբեր, անձրևաթափ, անձրևահար, աստղաբաշխ, աստղագօծ, արևակեզ, արփիաբաշխ, ծմեռնահաս, ջրախեղդ, տիեզերաթիռ, տիեզերակործան* և այլն,

ե) կենդանիներին և բույսերին առնչվող բառեր՝ *առյունծասպան, արծվատարած, բուսակեր, գայլախեղդ, գայլապատառ, եղեգնակոխ*

¹⁷⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2., Եր., 1974, էջ 167-168:

եղեգնահյուս, ծաղկաթափ, հավագող, ձիագող, ձկնակեր, ճագարակեր, պտղահան, տերևաթափ, օձահալած, օձատանջ և այլն,

զ) պետական-վարչական կյանք, մասնագիտություն, զբաղմունք, արհեստ, արվեստ՝ *արհեստագետ, արվեստասեր, ակիոնավաճառ, բանտապահ, բեմագետ, գանձապահ, դանակագործ, եզնածափ, թագավորապատկան, համերգավար, հարկահավաք, հացթուխ մեղվապահ, մորթեգործ, մսահատ, նիզակագործ, սրնգահար* և այլն,

է) ուտելիքին և ըմպելիքին առնչվող բառեր՝ *գարեջրագետ (գարեջուր խմող), գինեխում, խաղողահաս, հացակեր, հացամեծար, ձվակեր, մսաբեր, մրգահավաք, մրգապահ* և այլն,

ը) դրամ՝ *արծաթասեր, դրամասեր, փողապաշտ* և այլն,

թ) բժշկություն՝ *դեղատու, սպեղանապատ* և այլն,

ժ) հիվանդություններ՝ *ախտածին, թոքախտաբույժ, թոքախտահար, լեղամուղ, սրտաբույժ, ցավածին* և այլն:

Անգլերենում N+V կաղապարով կան բազմաթիվ բայեր, որոնց կազմությունը կամ կոնվերսիայի, կամ հետադարձ բառակազմության (backformation) հետևանք է: Հետադարձ բառակազմությունը բառի մեջ գոյություն ունեցող կամ ենթադրյալ ածանցի (հիմնականում վերջաձանցների, երբեմն նաև նախաձանցների) անկման միջոցով բառեր կազմելու եղանակ է¹⁸⁰: Այլ կերպասած՝ այն ածանցի ավելացման հակառակ երևույթն է: Բառակազմական այս եղանակի հիմքում ընկած է համաբանությունը: Այսպես, հայտնի է, որ անգլերենում անձ ցույց տվող գոյականները կազմվում են ամենատարբեր բայերին գոյականակերտ *-er* և *-or* ածանցներ ավելացնելու միջոցով, օրինակ՝ *work-worker* «աշխատել-աշխատող», *speak-speaker* «խոսել-խոսող» և այլն: Հետադարձ բառակազմության ամենավաղ օրինակներից է *to beg* «մոլորալ, աղաչել» բայը, որ ստացվել է *beggar* «մոլորացկան» բառից. վերջինս փոխառություն է հին ֆրանսերենից՝ *bégar*, որն անգլիացիները սխալմամբ համարել են ածանցավոր բառ և վերոնշյալ *work-worker, speak-speaker* ու նման այլ ձևերի համաբանությամբ հանելով դրա ածանցը՝ ստացել են *beg*

¹⁸⁰ Տե՛ս А. Ильина, С. Кибасова, Словообразование в современном английском языке, Санкт-Петербург, 2012, էջ 53:

բայը¹⁸¹։ Հետագայում այս երևույթը տարածում է ստացել՝ ընդգրկելով անգլերենի համանման բոլոր կառույցները։

Հետադարձ բառակազմության եղանակով անգլերենում կազմվում են ինչպես պարզ (հմմտ. *hawker* «չարչի»-*hawk* «չարչիություն անել», *cobbler* «սալարկիչ»-*cobble* «սալարկել»), այնպես էլ բարդ բայեր։ Բարդ բայերը մեծ մասամբ կազմվում են համապատասխան բարդ գոյականների գոյականակերտ և դերբայական կամ ածականական վերջածանցների անկման եղանակով¹⁸², ինչպես՝ *babysitter* «երեխային խնամող, դայակ»-(*to*) *babysit* «երեխային խնամել, դայակություն անել», *housecleaning* «տան մաքրում»-(*to*) *houseclean* «տունը մաքրել», *housekeeper* «տնտեսվարող»-(*to*) *housekeep* «տնտեսվարել», *proofreader* «սրբագրիչ»-(*to*) *proofread* «սրբագրել», *sightseeing* «տեսարժան վայրերի դիտում»-(*to*) *sightsee* «տեսարժան վայրեր դիտել», *straphanger* «կանգնած երթևեկող»-(*to*) *straphang* «կանգնած երթևեկել» և այլն։ Ստացվում է, որ թեև այս բաղադրությունները չեն կազմվել անմիջապես N+V կաղապարի հետևողությամբ, այլ հետադարձ բառակազմության եղանակով, սակայն արդյունքում, միևնույնն է, դրանք հանգում են N+V կաղապարին, ինչպես՝ *babysitter=babysit=baby+sit* «երեխային խնամել, դայակություն անել»։ Տվյալ դեպքում հետադարձ բառակազմության եղանակով առաջացած այս կառույցները N+V կաղապարի տակ քննելով՝ մենք կարևորել ենք ոչ թե դրանց կազմության պատմական գործընթացը, այլ դիտարկել դրանք լեզվի ներկա, համաժամանակյա կտրվածքով։

Կան նաև կոնվերսիայի եղանակով կազմված N+V կաղապարով բարդ բայեր, ինչպես՝ *to carbon-copy* «պատճենել»¹⁸³։

Բացի բարդ բայերից՝ N+V կաղապարով կարող են կազմվել նաև **բարդ գոյականներ**, սակայն արդեն բառաբարդման և ոչ թե հետադարձ բառակազմության եղանակով, ինչպես՝ *nosebleed* «արյունահոսություն քթից», *sunshine* «արևի փայլ», *handshake* «ձեռքսեղմում», *knitwear* «ձեռագործ հագուստ» գոյականները և այլն։ Սրանց երկրորդ բաղադրիչները, սակայն, կարող են ընկալվել ոչ թե

¹⁸¹ Տե՛ս Թ. Дубенец, Современный английский язык. Лексикология, М., Ростов-на-Дону, 2010, էջ 72, Գ. Գիրունյան, Անգլերենի բառագիտության հիմունքներ, Եր., 2009, էջ 136։

¹⁸² Տե՛ս P. Ackema and A. Neeleman, Beyond Morphology; Interface Conditions on Word-Formation, Oxford, New York, 2004, էջ 54-59, И. Арнольд, Лексикология современного английского языка, М., 1986, էջ 126-127, V. Adams, Complex Words in English, London and New York, 2013, էջ 101։

¹⁸³ Տե՛ս L. Bauer, English Word-Formation, Cambridge, 1983, էջ 208։

որպես բայեր, այլ որպես գոյականներ, ինչպես՝ *bleed* «1. արյունաքամել ինել, 2. արյունաքամություն», *shine* «1. փայլել, 2. փայլ», *shake* «1. թափահարել, 2. թափահարում», *wear* «1. հագնել, 2. հագուստ», որի հետևանքով ամբողջ բարդությունը նույնպես ընկալվում է որպես N+N կառույց: Հենց դրանով էլ բացատրվում է N+V կաղապարի՝ գոյականներ կազմելու տեսանկյունից ոչ այնքան կենսունակ լինելն անգլերենում¹⁸⁴:

Այս կաղապարով բարդ գոյականներ կարող են կազմվել նաև համապատասխան բայերի կոնվերսիայի կամ գրոյական ածանցման եղանակով. օրինակ՝ *househunt* «տան փնտրտուք» գոյականը կազմվել է *to househunt* «տուն փնտրել» բայի կոնվերսիայի եղանակով, որն էլ իր հերթին կազմվել է *househunting* բարդ բառի հետադարձ բառակազմության եղանակով: N+V կաղապարով համադրական **բարդ ածականներ** առհասարակ չեն կազմվում¹⁸⁵:

Անգլերենի N+V կաղապարով զգալի թվով բարդությունների բաղադրիչների միջև առկա շարահյուսական հարաբերությունը **նուղիղխնդրային** է: Եթե շրջենք (*to*) *sightsee* «տեսարժան վայրեր դիտել» բայը, կունենանք *to see sights* կառույցը՝ բաղադրիչների **նուղիղխնդրային** հարաբերությամբ: Նման բարդությունները «կիսաշարահյուսական» (*semi-syntactic*) են, որ նշանակում է՝ կարող են վերածվել համապատասխան բառակապակցության, սակայն բարդության մեջ բաղադրիչների շարադասությունը խախտված է, և այսպիսի դեպքերում պակասում է նաև **the** հոդը (հմմտ. *to housekeep* vs *to keep the house*): Նույն հարաբերությունը առկա է նաև, օրինակ՝ *haircut* «սանրվածք» բարդության բաղադրիչների միջև:

Կան նաև **ենթակայական (agentive)** հարաբերությամբ N+V բարդություններ, ինչպես՝ *bloodshed* «արյունահեղություն», *daybreak* «լուսաբաց», *dogbite* «շան կծոց (կծելը)», *heartache* «սրտի ցավ (ցավելը)», *heartbeat* «սրտխփոց», *landfall* «հողի փլուզում», *moonshine* «լուսնալույս», *nightfall* «գիշերամուտ», *rainfall* «անձրև տարափը», *sunrise* «արևածագ», *snowfall* «ձյան տեղումներ», *waterfall* «ջրվեժ» և այլն: Սրանց միջև հարաբերությունը հաճախ նաև կոչվում է ստորոգական (*predicative relation*), որի դեպքում նկատի է առնվում բարդությունը

¹⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 205:

¹⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 211:

բացել իս դիտվող ենթակա-ստորոգյալ ի հարաբերություները՝ *landfall=the land falls* «հողը փլուզվում է», *moonshine=the moon shines* «լուսինը փայլում է» և այլն: Սրանց երկրորդ բաղադրիչները դիտարկում ենք որպես կոնվերսիայի ենթարկված բայեր¹⁸⁶:

Անգլերենի N+V կաղապարով բարդություներն իմաստային խմբերի բաժանելը նպատակահարմար չէ, քանի որ այդ կառույցների արտահայտած իմաստները խիստ բազմազան են:

Գոյական+դերբայ (Noun+Participle)

Գ+Դրբ. կառույցով բարդություների կազմությանը հայերենում մասնակցում են անորոշ և ենթակայական դերբայները՝ որպես բաղադրող հիմք:

Այս կաղապարին հատուկ կազմություներում բայերի –ել //ալ վերջավորություներին նախորդող մասը բառային անկախ գործածություն չունի, առանձին վերցրած բարդ բառ չէ, այլ ստացվել է բաղադրող հիմքի վերածվող բային սկզբից արմատահիմք կամ բառավելացնելու միջոցով¹⁸⁷:

Առաջնորդվելով այս մոտեցմամբ՝ **գոյական+անորոշ դերբայ** կազմություներ են համարվում, օրինակ՝ *բողոքարկել*, *գնդակոծել*, *թևակոխել*, *լերդակալել*, *խնկարկել*, *կլիմայափոխել*, *ճառակալել*, *պատճառաբանել*, *սեռափոխել* և այլն, քանի որ սրանց՝ առանց բայական խոսքիմասային ածանցի հիմքերն ինքնուրույն գործածություն չունեն:

Կան նաև **գոյական+ենթակայական դերբայ** կաղապարով բարդ բառեր, որոնց դեպքում ենթակայական դերբայը բուն կամ իսկական բարդության բաղադրող հիմքն է, ինչպես՝ *իրավախախտող*, *լրագրող*, *կինոդիտող*, *ռադիոլսող*, *ռադիոսիրող*, *քնարերգող* և այլն:

Անգլերենում N+Particip. I և N+Particip. II կառույցները մի շարք լեզվաբաններ համարում են N+A կառույցներ, քանի որ Participle-ը՝ ածական դերբայը, ունի և՛ բայի, և՛ ածականի հատկանիշեր: Օրինակ՝ *spaceborne*¹⁸⁸ (*space-borne*) «տիեզերքում շարժվող» բառը L. Բաուերը

¹⁸⁶ Տե՛ս L. Brinton and D. Brinton, *The Linguistic Structure of Modern English*, Amsterdam/Philadelphia, 2010, էջ 105:

¹⁸⁷ Տե՛ս Ս. Գալստյան, Անորոշ դերբայը բառակազմական անփոփոխ հիմք, ԲԵՅ N 1 (124), 2008, էջ 103:

¹⁸⁸ Տե՛ս L. Bauer, նշվ. աշխ., էջ 209:

համարում է N+A կաղապարով կառույց, իսկ Վ. Ադամսը *airborne* (*airborne*)¹⁸⁹ «օդում տեղափոխվող» բառը քննում է N+V կաղապարի ներքո: Երկու դեպքում էլ ունենք միևնույն *borne* հիմքը, որը *to bear* «տանել, շարժել» բայի անցյալ (երկրորդ) դերբայն է:

Մենք հակված ենք ընդունել ու Վ. Ադամսի տեսակետը, որն այս կառույցները դասում է N+V կաղապարով կազմության ներքին, քանի որ, այնուամենայնիվ, երկրորդ բաղադրիչը բայական ծագում ունի: Ավելի կոնկրետացնելով, սակայն, առանձնացրել ենք այս կաղապարը՝ որպես N+Particip., քանի որ N+V կաղապարի ներքո քննել ենք միայն գոյականով և բայահիմքով կառույցները:

Գոյականով և առաջին դերբայով (Particip. I) կազմված համադրական կառույցներ են, օրինակ՝ *earsplitting* «ականջ ծակող (ձայն)», *eyecatching* «աչքի զարնող», *groundbreaking* «նորարարական», *heartbreaking* «սրտաճմլիկ», *mouthwatering* «ախորժաբեր», *peaceloving* «խաղաղասեր»: Սրանց բաղադրիչների միջև կա ուղիղ խնդրային հարաբերություն, ինչպես՝ *peaceloving* «խաղաղասեր»-*to love peace* «խաղաղություն սիրել»:

Գոյականով և երկրորդ դերբայով (Particip. II) կազմված համադրական բարդություններ են, օրինակ՝ *bedridden* «անկողնուկ գամված», *browbeaten* «ահաբեկված», *handmade* «ձեռակերտ», *heartbroken* «սրտաբեկ, սրտակոտոր», *sunburnt* «արևակեզ», *thunderstruck* «կայծակնահար» և այլն: Նման բարդությունների բաղադրիչների միջև շարահյուսական կապակցության տեսակետից կա **ուղիղ խնդրային** հարաբերություն, ինչպես՝ *heartbroken* «սիրտը կոտրված», **ներգործող խնդրի** հարաբերություն, ինչպես՝ *manmade* «մարդու կողմից շինված», *windblown* «քամուց քշված», մյուս մասի մեջ՝ **միջոցի խնդրի** հարաբերություն՝ *heartfelt* «սրտով զգացած», իսկ այլ բարդություններում՝ **սեղի պարագայի** հարաբերություն, ինչպես՝ *homespun* «տնայումս՝ տանը հյուսած», *homemade* «տանը պատրաստված», **պաճառի պարագայի** հարաբերություն՝ *moonstruck* «լուսնահար, սիրուց ցնորված», *wayworn* «երկար ճանապարհից հյուսված» և այլն:

¹⁸⁹ Տե՛ս V. Adams, *An Introduction to Modern English Word-Formation*, London, 1973, էջ 96:

Գոյականով և երկրորդ դերբայով կառույցներից *handpicked* բառը կարող է մեկնաբանվել երկու ձևով¹⁹⁰. 1. *[(hand+pick)+ed]*, այսինքն՝ *[(n+v)+ed]* կաղապարով, և 2. *[hand+(pick+ed)]*, այսինքն՝ *[n+(v+ed)]* ձևով: Առաջին դեպքում գոյականից ու բայից բաղադրված *handpick* «հատ-հատ ընտրել» բային միացել է *ed* դերբայ ակերտ վերջածանցը, իսկ երկրորդ դեպքում գոյականին միացել է *picked* դերբայը, որն իր հերթին բաղադրվել էր *pick* «հավաքել» բայից և *ed* դերբայ ակերտ վերջածանցից: Երկրորդ դեպքը հանգում է N+Particip. II կաղապարին: N+Particip. I և N+Particip. II կաղապարներով անգլերենում կազմվում են հիմնականում ածականներ և մակբայներ:

Գոյ ական+կապ(Noun+Preposition)

Հայերենում Գ+Կ/հետադրությունն կաղապարով կազմված բարդությունները մյուս բարդությունների համեմատ սակավաթիվ են: Հայագիտության մեջ կարծիք կա, որ կապերը «որպես նյութական իմաստչունեցող, ձևական խոսքի մասեր իրենց բուն կիրառություններով ստորադասական բառակապակցություններ չեն կազմում»¹⁹¹, այսինքն՝ բարդությունների կազմությանը որպես բաղադրիչներ իրենց բուն իմաստով չեն մասնակցում:

Մենք, սակայն, առանձնացրել ենք այս կաղապարն ու դրանով կազմված բարդությունները, քանի որ, այնուամենայնիվ, ձևաբանորեն կապը որպես խոսքի մաս մասնակցում է բարդությունների կազմավորմանը. այլ հարց է, թե դրանք իրենց բուն իմաստով են հանդես գալիս բարդությունների կազմում, թե՞ ոչ:

Մեզ հանդիպել են Գ+Կ/ հետադրությունն կաղապարով հետևյալ **հոդակապակոր** բարդությունները՝ *անթատակ*, *արևադեմ*, *բառամեջ*, *երկրաշուրջ*, *լուսադեմ*, *կալատակ*, *տողամեջ*, *փորատակ* և այլն: **Անհոդակապ** բարդություններ են, օրինակ՝ *արեգընդդեմ*, *աստվածընդդեմ*, *կալ մեջ*, *տողընդմեջ*, *օրընդմեջ* և *ընդդեմ*, *ընդմեջ* կապերով մնացած բառերը:

¹⁹⁰ Տե՛ս J. Jensen, Morphology: Word Structure in Generative Grammar, Amsterdam/Philadelphia, 1990, էջ 110:

¹⁹¹ Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 25:

Այս կաղապարով կազմվում են **գոյականներ՝ գիշերադեմ, գյուղամեջ, իրիկնադեմ, ծնկատակ, կրնկատակ, հանդամեջ** և այլն, և **ածականներ՝ մարդամոտ, սրտամոտ** և այլն:

Գոյականի և կապի կապակցությամբ կազմված բարդությունները մեծ մասամբ **պարագայական** նշանակություններ են արտահայտում՝ **տեղի պարագայի** (աչքամեջ, ափամեջ, գետամեջ, գլխատակ, կրնկատակ, ձորամեջ, քաղաքամեջ), **ժամանակի պարագայի** (օրումեջ):

Անգլերենում նախդիրները որպես բաղադրող հիմք գոյականների հետ հազվադեպ են հանդես գալիս, իսկ իբրև սերող հիմք՝ հաճախ են միանում գոյականին և բարդությունն կազմում, ինչպես՝ Prep.+N կաղապարով՝ *aftereffect* «հետագդեցություն», *outhouse* «բակում կառուցված օժանդակ շենք (կցաշենք)» և այլ բառերում, որոնք արդեն քննել ենք մեր աշխատանքում: Նախդիրներն ավելի հեշտությամբ և ավելի հաճախ կապակցվում են բայերի հետ՝ ի հակադրություն գոյականների: Պարզվում է, որ N+Prep. համադրական տիպի կառույցները թվով խիստ սահմանափակ են: Այդ կաղապարով բարդության մեզ հանդիպած եզակի օրինակներից է *sundown* «արևամուտ» բարդությունը¹⁹²:

Վերը քննված տարբեր կաղապարներով համադրական բարդությունների սերող և բաղադրող հիմքերում կարող են դրսևորվել հնչյունափոխական տարբեր երևույթներ, սակայն պետք է նկատի ունենալ միայն առաջին բաղադրիչների հնչյունափոխությունը որպես բուն բառակազմական գործընթացների հետևանք: Այսպես, բարդությունների սերող հիմքերում կարող են լինել հետևյալ հնչյունափոխությունները.

ա) **աթ** կոճկանցք, կոճկատեղ,

¹⁹² Վ. Ադամսն առանձնացնում է նաև բայակազմ գոյականով և նախդրով կառույցներ, ինչպես՝ *a blastoff* «արձակում, պոկում», *a pumpdown* «պոմպով մղում» և այլն (տե՛ս V. Adams, *Complex Words in English*, London and New York, 2013, էջ 76): Իրականում *a blastoff* «արձակում, պոկում», *a pumpdown* «պոմպով մղում» բարդություններն առաջացել են համապատասխան բառակապակցություններից՝ *to blast off* «արձակել (հրթիռ և այլն)», *to pump down* «պոմպով մղել» և այլն: Սա հաշվի առնելով՝ պետք է դրանցից կազմված բարդությունների առաջին բաղադրիչները համարենք ոչ թե բայակազմ գոյականներ, այլ բայեր, իսկ երկրորդ բաղադրիչները ոչ թե նախդիրներ, այլ մակբայներ: Եթե կարևորենք այս կազմությունների առաջացման պատմական գործընթացը, ապա սրանք N+Prep. կաղապարի մեջ չեն կարող քննվել, սակայն եթե սրանք դիտարկում ենք զուտ ձևական տեսանկյունից և լեզվի զարգացման տվյալ փուլում, ապա հնարավոր ենք համարում նաև Վ. Ադամսի մոտեցումը:

- բ) **ի>ը** ազնվագարմ, ըղծամեն, ըղծանույշ, ընչաքաղց, մշտախորժ,
 գ) **ի>թ** դեղնածաղիկ, ծաղկահյուս, հաշվագետ,
 դ) **ի>ե** այգետեր, բարեբախտ, բարետես, գինետուև, օղեվաճառ,
 ե) **ը>թ** ակնաղբյուր, կարծրահիմք, մանրապճեղ, մատնահարդար,
 սառնաշաքար,
 զ) **ու>թ** ածխածին, բազմախամբավ, հանրահավաք, պատմահայր,
 է) **ու>վ** լեզվահամակարգ, լրատվամիջոց, չվացուցակ,
 ը) **ու>ը** մնջախաղ, ջրագռավ, ցրտահերկ, փոսախո,
 թ) **ե (է)>ի** դիմակահանդես, սիրառատ, տիգահար, օրինատու,
 ժ) **ո>թ** ոսկրացավ, որկրամուլ,
 ժա) **յ ու>թ** ալրաթաթախ, ալրաղաց, արնանման,
 ժբ) **յ ու>ը** ձնագուևդ, ձնհալ,
 ժգ) **յ ա>ե** առենակալ, հեծելագոր, մատենացանկ, պատենագարդ,
 ժդ) **ույ>ու** բուսակեր, լուսասյուն, կապուտաչ, հուսահատ,
 պարուրածև,
 ժե) **ույ>ը** քրորդի,
 ժզ) **ույ>թ** արնածոր, կապտաթույր, սառցաքեկոր:

Անգլերենում հնչյունափոխված հիմքերով կազմվում են հիմնականում կրկնավոր վերլուծական բաղադրություններ, որոնց կանդիդատնանք մեր աշխատանքի համապատասխան բաժնում:

Ինչ վերաբերում է համադրական բաղադրությունների հիմքերի **հոլոկական** ձևերին, ապա սերող հիմքը սովորաբար դրվում է **ուղղական հոլոկով**, օրինակ՝ *գայլ փետդդ, մարդասեր* և այլն, իսկ ներքին թեքման մի քանի բառերի դեպքում՝ **սեռական-տրական հոլոկաձևով**, ինչպես՝ *աշնանացան, գարնանամուտ, հորեղբայր, մորապապ, տանուտեր*՝ այդ թվում նաև գրաբարատիպ սեռական-տրական հոլոկների քարացած ձևերով՝ *դստերագիր, կայսերագիր, կայսերապսակ*. **սեռական-տրական** հոլոկաձևով կարող է դրվել նաև բաղադրող հիմքը՝ *հինավուրց, օրավուր* և այլն: Բաղադրություններում առաջին բաղադրիչի իմաստը կրկնակի բացատրություն կարող է ունենալ, օրինակ՝ *ուղղական* և *բացառական* հոլոկների նշանակություն միաժամանակ՝ *խել ապակաս→խել քր/խել քից պակաս*, *ուղղական* և *գործիական* հոլոկների իմաստ միաժամանակ՝ *հուզառատ→հույզերը/հույզերով առատ* և այլն:

ԳԼՈՒԽ 3. ԳՈՅԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՆԵՐՈՎ ՎԵՐԼ ՈՒՃԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

3.1 Կրկնավորներ

Բառակազմության վերլուծական տիպին հատուկ եղանակներից մեկը կրկնումն է: Հ. Աճառյանի բնորոշմամբ՝ «կրկնությունը, իբր բառակազմության շատ հասարակ մի միջոց, ամեն լեզվի մեջ էլ գործածական է...»¹⁹³: Բառակրկնությամբ բառապաշարի հարստացումը եղել է գործունե երևույթ հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքում: Ըստ Գ. Ջահուկյանի՝ կրկնության անդամներից մեկը կրկնության *հիմքն* է կամ *կրկնյալը*, իսկ մյուսը՝ *նմանակը* կամ *կրկնորդը*: Ելնելով նրանից, որ կրկնությունների մեծ մասի մեջ առաջին բաղադրիչը կրկնյալն է, սակայն մի շարք դեպքերում իբրև այդպիսին հանդես է գալիս երկրորդ բաղադրիչը, առանձնացվում է դրանց երկու տիպ՝ AA_1 և A_1A , որոնց մեջ A -ով նշանակված է *կրկնյալը*, իսկ A_1 -ով՝ *կրկնորդը*: Ժամանակակից հայերենում կրկնության գործունե և արտադրողական տիպը AA_1 -ն է¹⁹⁴:

Անգլերենի բառակրկնությունները բնորոշ են լեզվի գրական և խոսակցական տարբերակներին, սակայն դրանց մեծ մասը, այնուամենայնիվ, ավելի հատուկ է խոսակցական լեզվին, ժարգոնային բառապաշարին ու մանկական խոսքին: Անգլերենում գերակշռող են վերլուծական տիպի կրկնությունները, իսկ համադրական տիպի կրկնավորները խիստ հազվադեպ են, հետևաբար երկու լեզուների կրկնավոր կազմությունների միջև տիպաբանական ընդհանրությունների կամ տարբերությունների հաստատման տեսանկյունից առավել նպատակահարմար է զուգադրել հենց վերլուծական տիպի կառույցները: Անգլերենն այնքան հարուստ է կրկնավոր բաղադրություններով, որ դեռևս 1866թ. Հ. Ուիթլին կազմել է անգլերենի կրկնավորների մի ընդգրկուն բառարան¹⁹⁵:

Հայերենում բազմազան են Գ+Գ կաղապարով կրկնավոր վերլուծական բաղադրությունները. այս կաղապարն անուն խոսքի

¹⁹³ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Եր., 1957, էջ 69:

¹⁹⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 215:

¹⁹⁵ H. Wheatley, A Dictionary of Reduplicated Words in the English Language, London, 1866:

մասերից մակբայներ կազմելու հիմնական եղանակներից է: Անգլերենում ևս դրանց թիվը քիչ չէ:

Ըստ բաղադրիչների կապակցման միջոցի՝ կրկնավոր բաղադրությունները բաժանվում են *հարակցական*, *շաղկապական* և *նախորդական* տեսակների.

1. **Գ+Գ կաղապարով հարակցական** կրկնավոր բաղադրություններ են հայերենում՝ *ալյակ-ալյակ*, *բում-բում*, *գյուղ-գյուղ*, *դույլ-դույլ*, *թերթ-թերթ*, *կաթիլ-կաթիլ*, *կոհակ-կոհակ*, *ծար-ծարակ*, *ծաք-ծաք*, *ճեղքոռ-ճեղքոռ* (*ճեղք-ճեղք*), *ճուռլ-ճուռլ*¹⁹⁶ (*փուռնջ-փուռնջ*), *պտղուռնջ-պտղուռնջ*, *ջոկատ-ջոկատ*, *սկահակ-սկահակ*, *ցեղ-ցեղ* և այլն, անգլերենում՝ *hodge-podge/hotch-potch* «խառնիխուռն բաներ», *hubble-bubble* «զլզլակ», *hugger-mugger* «խառնաշփոթություն», *niddle-noddle* «զլխով հավանություն տալը», *prittle-prattle/bibble-babble* «անիմաստ զրույց»¹⁹⁷, *ship-shape* «տեղը տեղին» և այլն: Անգլերենում N+N կաղապարով հարակցական կրկնություններ հանդիպում են նաև մանկական խոսքում, ինչպես՝ *night-night* «բարի գիշեր»:

2. **Շաղկապական** կրկնավորները հայերենում կազմվում են *ոռ*, *հազվադեպ* *և* *շակապներով*, իսկ անգլերենում՝ *and* *շաղկապի* միջոցով: Գ+ոռ (և)+Գ կաղապարով *շաղկապական* կրկնավորներ են հայերենում՝ *թոհ և բոհ*, *ժանգ ոռ ժուռնգ*, *խազ ոռ մազ*, *ծալ ոռ ծալ*, *կապ ոռ կուպ*, *կուզ ոռ կուզ*, *հանգ ոռ հուռնգ*, *ճախ ոռ ճուռխ* և այլն, անգլերենում՝ *half and half* «կես-կես, հավասարապես», *neck and neck*

¹⁹⁶ Նման բառերը հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին. թեև դրանք այսօրվա գրական նորմին չեն համապատասխանում, սակայն հայերենի բառազանձի մասն են կազմում:

¹⁹⁷ Անգլերենում հաճախ անհրաժեշտ է լինում անդրադառնալ այս կամ այն կրկնավորի ծագման պատմությանը՝ պարզելու, թե ինչպես է այն առաջացել, ինչ խոսքիմասային պատկանելությունն և իմաստ են ունեցել դրա բաղադրիչները, քանի որ կրկնավորները կարող են ամենատարբեր մեկնաբանություններ ստանալ. օրինակ՝ *pitter-patter* «1. հաճախակի թեթև թխկթխկոց, 2. «հաճախակի որեն և թեթև» նշանակությամբ կրկնություն ծագման վերաբերյալ կատարվող վարկած. այն ծագել է. ա) *Pater noster* «Չայր մեր» աղոթք, տեղի ունեցող «ա» բառի՝ արագ-արագ աղոթելու իմաստից, բ) ուշ միջնադարյան *patter/pat* «1. հաճախակի թխկթխկոց, թփթփոց, 2. հաճախակի, թեթև թփթփացնել» բառից՝ նմանաձայնական կրկնություն (*onomatopoeic repetition*) եղանակով (տե՛ս H. Wheatley, նշվ. աշխ., էջ 6):

Հաճախ բառակրկնությունների դեպքում ևս բախվում ենք անվանաբայական համանունության խնդրին, օրինակ՝ *niddle-noddle* «1. զլխով անել, հավանություն տալ» *կրկնավորի* դեպքում միայն բառի ծագման պատմությունն ուսումնասիրելուց հետո է պարզ դառնում, որ այն կազմվել է *noddle* «զլ ուխ» գոյականից, □o-i□ հնչյունափոխությամբ և ոչ թե *nod* «զլխով անել» բայից (տե՛ս <http://www.oxforddictionaries.com/definition/english/niddle-noddle>-Oxford Dictionaries):

«կողք կողքի (վազքի ժամանակ)», *party and party (costs)* «պետական դրամական (պարգև)» և այլն:

3. **Նախդրական** կրկնավորները զուտ գրական ձևեր են և արդի արևելահայերենին են ժառանգվել գրաբարից¹⁹⁸: Դրանք են *առ, ընդ և ի* նախդիրներով կազմված կապակցությունները: Ավելի հաճախորդ են *առ* նախդիրով, երբեմն էլ *ի* նախդիրով գոյականական կրկնությունները, օրինակ՝ *անդամ առ անդամ, բառ առ բառ, դեզ առ դեզ, երես առ երես, էջ առ էջ, ժամ առ ժամ, ժամանակ առ ժամանակ, լեզուն առ լեզուն, խավ առ խավ, կոհակ առ կոհակ, ճակատ առ ճակատ, տող առ տող, ծալ ի ծալ, ծայր ի ծայր, շար ի շար* և այլն¹⁹⁹: Անգլերենում նախդրական կրկնավոր բաղադրությունները կազմվում են *in, on, to, by, for* և այլ նախդիրներով²⁰⁰, ինչպես՝ *N-in-N` arm-in-arm* «թև թևի», *hand-in-hand* «ձեռք ձեռքի», *N-on-N` body-on-body* «սուսերամարտում մերձամարտ», *chest-on-chest* (ամրկ.) «բարձր կոմոդ` դարակներով պահարան», *year-on-year* «նախորդ տարվա համեմատությամբ հաշվարկված», *N-to-N` bumper-to-bumper* «կիպ», *coast-to-coast* «ափեափ», *eyeball-to-eyeball* «երես առ երես», *hand-to-hand* «ամերիկյան մարտածև», *head-to-head* «բանավեճ (երկու կողմերի միջև)», *heart-to-heart* «անկեղծ, մտերմիկ», *mouth-to-mouth* «բերան բերանի (արհեստական շնչառություն մասին)», *N-by-N` day-by-day* «օր օրի», *bit by bit/brick by brick/piece-by-piece* «աստիճանաբար», *play-by-play* «սպորտային խաղի մանրամասն մեկնաբանություն», *side by side* «կողք կողքի», *step-by-step* «քայլ առ քայլ», *N-for-N` letter-for-letter* «տառացի», *word-for-word* «բառացի», *N-till-N` computer-till-computer* «համակարգիչ առ համակարգիչ» և այլն:

Գ+Գ բառակրկնությունների բաղադրիչները կարող են անփոփոխ մնալ կամ ենթարկվել հնչյունական զանազան փոփոխությունների: Փոփոխությունների է ենթարկվում

¹⁹⁸ Տե՛ս Լ. Յոզսեֆյան, Կրկնությունը գրաբարի բառակազմության մեջ, *Slovo*, vol. 26-27 (2001-2002), "Actes du Sixième Colloque international de Linguistique arménienne (INALCO-Académie des Inscriptions et Belles-Lettres 5-9 juillet 1999)", Paris, 2002, էջ 169-178:

¹⁹⁹ Հայերենի զարգացման ներկայիս փուլում նախդրական վերլուծական կրկնավորները դրսևորում են սերտաճելու և համադրական բարդությունների վերածվելու միտում. այդ դեպքում հիմնականում *առ* և *ընդ* նախդիրներն անփոփոխ են մնում, իսկ *ի* նախդիրը դառնում է *ե*. այսպես օրինակ՝ *թափ ընդ թափ թափը ընդ թափի, ուս ընդ ուս/ուս սընդ ուս, տող առ տող/տողառ տող, փոխ ի փոխ/փոխե փոխ, շար ի շար/շարեշար, ժամ ի ժամ/ժամեժամ* և այլն (տե՛ս [http://hpi.asj-oa.am/3629/1/2005-2\(263\).pdf](http://hpi.asj-oa.am/3629/1/2005-2(263).pdf) Ա. Կարապետյան, Վերլուծական կրկնավոր բարդությունները ժամանակակից հայերենում, ՊԲՀ N 2, Եր., 2005, էջ 265):

²⁰⁰ Տե՛ս G. Ambardaryan, *Semantic-Typological Analysis of Reduplicated Formations (based on the material of the Armenian, Russian, English Languages)*, Gyumri, 2013, էջ 58:

հիմնականում երկրորդ բաղադրիչը՝ կրկնորդը: Անհնչյունափոխ կրկնություններ են՝ *բզիկ-բզիկ, բլիթ-բլիթ, գլուխ-գլուխ, դար ու դար, դեզ-դեզ, երփն-երփն, թույր-թույր, խորշոմ-խորշոմ, խուրձ-խուրձ, ծվեն-ծվեն, հնչյուն-հնչյուն, մատուռ-մատուռ, մորմոք-մորմոք, շաք-շաք, պուտ-պուտ* և այլն, իսկ անգլերենում հիմնականում բաղադրիչներից մեկը փոփոխված է, հազվադեպ են անհնչյունափոխ բաղադրիչներով կրկնությունները, ինչպես՝ *goody-goody* «առաքինի ձևացող մարդ»:

Երկու լեզուներում հնչյունափոխված բաղադրիչներով Գ+Գ կրկնություններում տեղի են ունենում հնչյունական հետևյալ փոփոխությունները.

1. Երկրորդ բաղադրիչի ձայնավորի/ձայնավորների հնչյունափոխություն, հիմնականում **առ**և, երբեմն նաև **աքե, եռ**և հնչյունափոխությամբ, ինչպես՝ *ծակ-ծուկ, ճար ու ճուր, շախ ու շուխ, շառ ու շուռ, ծեն-ծուն, փասափուսա, ժանգ ու ժենգ, դեղ ու դուղ* և այլն, ինչպես նաև երկու ձայնավորի փոփոխությամբ՝ *աղքատ ու դքուտ, լակոտ-լուկուտ, ջահել-ջուհուլ, փալաս-փուլուս* և այլն: Անգլերենին հիմնականում բնորոշ են [i]-[æ] և [i]-[o] հնչյունափոխությամբ կրկնավորները, որոնք կոչվում են *ablaut combinations* (ձայնդարձային կապակցություններ), ինչպես՝ ա) [i]-[æ]- *chit-chat* «շատախոսություն», *fiddle-faddle* «անկարևոր բաներ», *flim-flam* «խարդախություն», *mish-mash* «խառնաշփոթ», *riff-raff* «աչքի անցկացնելը», *zig-zag* «բեկյալ գիծ», բ) [i]-[o]- *ding-dong* «զանգերի ղողանջ», *flip-flop* «ռետինե հողաթափ», *ping-pong* «սեղանի թենիս», *sing-song* «միապաղաղ», *tip-top* «առաջնակարգ» և այլն:

2. Երկրորդ բաղադրիչի բառասկզբի բաղաձայնը փոխարինվում է մեկ այլ բաղաձայնով՝ հիմնականում **մ**-ով, ինչպես՝ *աքիս-մաքիս, բան-ման, գիծ ու միծ, գոգլի-մոգլի, թուք ու մուք, հուր ու մուր, սագ ու մագ, վնաս ու մնաս*, երբեմն նաև այլ բաղաձայնով՝ *գել ու փել, գրոց-բրոց, լոթի-փոթի, ճիծ ու փիծ/ճիծ ու բիծ, նագ ու բագ, շենիկ-մենիկ* և այլն: Անգլերենում երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնի հնչյունափոխությամբ կրկնավորները շատ են հանդիպում հանգավորված կապակցությունների (*rhyme combinations*²⁰¹) շարքում, ինչպես՝ *fuddy-duddy* «հնաճ մարդ», *handy-dandy* «մանկական

²⁰¹ St 'u И. Арнольд, Лексикология современного английского языка, М., 1986, էջ 130-131:

խաղ», *hocus-pocus* «աճ պարարություն», *popsy-wopsy* «փոքրիկ աղջիկ», *rowdy-dowdy* «կռվարար մարդ» և այլն: Սրանք նաև կոչվում են *կեղծ (շինծու)* բարդություններ, քանի որ դրանց մի մասի իմաստն առհասարակ պատճառաբանված չէ. հաճախ երկու բաղադրիչներն էլ *կեղծ (շինծու)* ձևեր են: Դրանք հեշտ է շփոթել սովորական կրկնավոր բաղադրությունների հետ, որոնց բաղադրիչները, ի տարբերություն հանգավորվածների, լիիմաստ բառեր են, ոչ թե շինծու ձևեր. այս կազմություններում փոխվում է ոչ թե երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնը, այլ երկրորդ բաղադրիչը բոլորովին այլ բառ է, պարզապես սրանց բաղադրիչները ևս հանգավորված են, ինչպես՝ *chug-drug* «պայթյունի ձայն», *clap-trap* «անմիտ զրույց», *fender-bender* «թեթև բախում», *hugger-mugger* «խառնաշփոթ», *hurry-scurry* «հրապուրանք», *razzle-dazzle* «անբովանդակ, ցուցադրական բան», *slang-whang* «հայ հոյախոսություն»²⁰²:

3. Անգլերենում կրկնորդի առաջին բաղաձայնը կարող է փոխվել *shm* կամ *schm* հնչյունակապակցության, ինչպես՝ *breakfast-shm(r)akfast* «նախաճաշ-մախաճաշ», *child-schmild* «երեխա-մերեխա», *crisis-shmisis* «ճգնաժամ-մգնաժամ», *table-shmable* «սեղան-մեղան» և այլն: Կրկնորդի առաջին բաղաձայնը կարող է փոխարինվել մեկ այլ բաղաձայնով կամ տառակապակցությամբ նաև հատուկ անունների դեպքում, ինչպես՝ *Charlie-Parlie*, *Pedro-Schmedro* և այլն: Կրկնության այս տեսակն անգլերենին է անցել եբրայերենից, որում *s(c)hm* հնչյունակապակցությամբ սկսվող բառերը բացասական կամ արհամարհական, իսկ երբեմն նաև հումորային իմաստ ունեն²⁰³:

4. Երկրորդ բաղադրիչի սկզբում ավելանում է որևէ բաղաձայն՝ մեծ մասամբ *մ*, որոշ դեպքերում էլ *չ, ճ, պ* և այլ բաղաձայններ՝ *ախտ ու մախտ, աղքատ-մաղքատ, աման-չաման, առակ-պառակ, ավել-մավել, ընկեր-մընկեր, օրենք-մօրենք* և այլն: Երկրորդ բաղադրիչի սկզբում հայերենում կարող է ավելանալ նաև գրաբարյան *գ* նախդիրը, ինչպես՝ *ամպ ու զամպ, արդ ու զարդ, արմանք-զարմանք* և այլն: Անգլերենում այդպիսիք են, օրինակ՝ *apple-shmapple* «խնձոր-մնձոր», *art-shmart* «արվեստ-մարվեստ», *Europe-Shmeurope* «Եվրոպա-մեվրոպա», *moon-schmoon* «լուսին-մուսին», *opinion-shmopinion* «կարծիք-մարծիք» և

²⁰² Տե՛ս E. Matiello, Extra-Grammatical Morphology in English: Abbreviations, Blends, Reduplicatives and Related Phenomena, "Topics in English Linguistics", Vol. 82, Berlin/Boston, 2013, էջ 154:

²⁰³ Տե՛ս նույն տեղում, էջ 153, էջ 161:

այլ կրկնություններ, որոնց դեպքում կրկնորդի սկզբում ավել անում է մի ամբողջ տառակապակցություն:

5. Առաջին բաղադրիչի սկզբում ընկնում է առաջին բաղաձայնը, ինչպես՝ *ալ ան-թալ ան, ալ աս-փալ աս, ալ ոց-գալ ոց, ախտու բախտ, արան-շարան, արև-բարև, արուն-գարունք (գարնանային օրեր)* և այլն²⁰⁴: Անգլերենում մեզ նման կառույցներ չհանդիպեցին: Հաճախ միայն առաջին հայացքից կարող է թվալ, թե կրկնավորի մեջ ընկել է առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայնը, սակայն երբ անդրադառնում ենք բառի պատմությանը, պարզվում է, որ այդպես չէ. օրինակ՝ *eastie-wastie* «անկայուն, անվստահելի մարդ» կրկնավորի դեպքում թվում է, թե առաջին բաղադրիչի *w*-ն է ընկել, սակայն իրականում կրկնավորի իմաստն է՝ “one who veers from east to west” — «մարդ, որը մերթ դեպի արևելք, մերթ դեպի արևմուտք է գնում»²⁰⁵, որ նշանակում է՝ կրկնությունը կազմված է *east* և *west* առանձին, ինքնուրույն բառերից:

Հայերենում կան հոլովված բաղադրիչով (ներով) կրկնավորներ (*առքով-փառքով, շախով-շուխով*): Կան այնպիսիք, որոնց հիմքում թեև բուն բառակազմական գործընթացներ ընկած չեն, սակայն դրանք բառայնացել են շարահյուսական կապակցությունների հետագա կայունացման եղանակով, հետևաբար կարող են համարվել քերականական ձևավորմամբ կրկնավոր բաղադրություններ, որոնց 1. առաջին բաղադրիչը դրված է՝ ա) բացառական հոլովով՝ *գյուղից գյուղ, թոռից թոռ, թփից թուփ, ժամից ժամ, ծովից ծով, շենից շեն, ցեղից ցեղ* և այլն²⁰⁶, բ) գործիական հոլովով՝ *տեղով տեղ, գ) գրաբարյան սեռական-տրական հոլովածևով՝ առկոց առակ, արքայից արքա, իշխանաց իշխան, ձեռաց ձեռ, քաջաց քաջ*, 2. երկրորդ բաղադրիչը դրված է՝ ա) գործիական հոլովով՝ *աշխարհ աշխարհով*, բ) տրական հոլովով՝ *ազգ ազգի, գիրկ գրկի, թև թևի, շունչ շնչի, ուս ուսի*, գ) երկրորդ բաղադրիչը՝ տրական հոլովով, իսկ առաջինը՝ ուղղականով՝ որոշյալ առումով՝ *ծերը ծերին, տեղը*

²⁰⁴ Նման կրկնություններում երբեմն առաջին բաղադրիչը որպես ինքնուրույն բառ է ընկալվում, և ամբողջ բաղադրությունը թվում է հարակցական հարադրություն: Օրինակ՝ *արմանք-գարմանք* և *աղատ-պաղատ* կրկնավորները նույն հաջողությամբ կարող են ընկալվել որպես *արմանք և գարմանք, աղատ և պաղատ* առանձին, ինքնուրույն բառերից կազմված հարակցական հարադրություններ (տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1987, էջ 233-234):

²⁰⁵ Տե՛ս <https://www.wordnik.com/words/eastie-wastie>-Wordnik:

²⁰⁶ Է. Աղայանը սրանք համարում է սովորական շարահյուսական կառույցներ (տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 231):

տեղի՛ն, դ) երկրորդ բաղադրիչը դրված է գրաբարյան հոգնակի սեռական հոլովածնով՝ *գիրք գրոց, երգ երգոց, սրբությունն սրբոց*:

Բնական է, որ անգլերենի կրկնավորները նման հոլովական ձևեր ունենալ չեն կարող, քանի որ հոլովական իմաստներն անգլերենում արտահայտվում են գերազանցապես նախդիրների օգնությամբ, ինչպես՝ *arm-in-arm* «թև թևի», *day-by-day* «օր օրի», *hand-in-hand* «ձեռք ձեռքի», *house-to-house* «տնից տուն» և այլն: Հայերենում կրկնավոր հարադրությունների առանձին տեսակ են նրանք, որոնցում առաջին բաղադրիչը գոյական է, իսկ երկրորդը՝ այդ գոյականից բաղադրված ածանցավոր կամ բարդ բառ, ինչպես՝ *անդուստան, գեղ-գեղովի, դուռ-դրացի, հանդ-հանդվոր, հոտ-հոտոտանք, ձի-ձիատեր, շուն-շնվոր, սել-սելվոր, տեր-տիրական, տուն-տնեցի* և այլն²⁰⁷:

Կան նաև արական ու իգական սեռեր մատնանշող բառակրկնություններ, որոնց դեպքում երկրորդ բաղադրիչն է ածանցավոր, ինչպես՝ *աշակերտ-աշակերտուհի, բանվոր-բանվորուհի, դերասան-դերասանուհի, երգիչ-երգչուհի, ուսուցիչ-ուսուցչուհի* և այլն²⁰⁸:

Հայերենում բառակրկնությունը, ըստ բաղադրիչների հետ ունեցած գործառական փոխհարաբերության (խոսքիմասային գործառություն), լինում է *համագործառական* և *փոխգործառական* (*համակադասարային* և *փոխկադասարային*)²⁰⁹: Կրկնավոր բաղադրությունը համագործառական է այն դեպքում, երբ ունի խոսքիմասային նույն արժեքը, ինչ նրա բաղադրիչները, հատկապես հիմնական բաղադրիչը՝ կրկնյալը, օրինակ՝ *հայերենում՝ ծայն-ծուն, անգլերենում՝ ping-pong* «սեղանի թենիս»:

Փոխգործառական կրկնություն դեպքում առկա է խոսքիմասային փոխանցում, որի հետևանքով գոյականների կրկնությունից ստացվում են ածականներ՝ *աքիս-մաքիս* (*աքիսի նման*), *գույն-գույն*, *ծով-ծով*, *պուտ-պուտ* (*պուտեր ունեցող*), և մակբայներ՝ *բակ-բակ, բոլուկ-բոլուկ, գող-գող, երակ-երակ, կաթիլ առ կաթիլ, հատ-հատ, մաս առ մաս, շիթ առ շիթ, տեղ-տեղ*: Որոշ կրկնավոր բաղադրություններ

²⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 235:

²⁰⁸ Է. Աղայանն այս տիպի բաղադրությունները հարակցական հարադրություններին շարքին է դասում (տե՛ս նույն տեղում, էջ 227):

²⁰⁹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 216-217:

գործածվում են և՛ որպես ածական, և՛ որպես մակբայ՝ ստանալով զանազանություն, բազմակիություն նշանակություն կամ ցույց են տալիս համազգի բաների հաջորդականություն, հետևաբար դրանք հիմնականում դրվում են հոգնակի գոյականի հետ²¹⁰, ինչպես՝ *դարս-դարս (դարս-դարս փայտեր, դարս-դարս շարել)*, *խումբ-խումբ (խումբ-խումբ տղաներ, խումբ-խումբ նստել)*, *ծումռ-ծումռ (ծումռ-ծումռ գրեր, ծումռ-ծումռ քայլել)*, *կաթ-կաթ (կաթ-կաթ ջրեր, կաթ-կաթ թափվել)*, *կտոր-կտոր (կտոր-կտոր մսեր, կտոր-կտոր բաժանել)*, *տեսակ-տեսակ (տեսակ-տեսակ ուտել եղեն, տեսակ-տեսակ հագնվել)*, *փոթ-փոթ (փոթ-փոթ շորեր, փոթ-փոթ խորշումել)* և այլն:

Անգլերենում ևս, ինչպես հայերենում, կարող ենք ունենալ համագործառական ու փոխգործառական կրկնություններ, սակայն անգլերենում, ի տարբերություն հայերենի, փոխգործառական կրկնության դեպքում գոյականների կրկնությամբ ստացվում են նաև **բայեր**, օրինակ՝ *criss-cross* գոյականական կրկնության իմաստներն են. 1. «խաղ մանուկների համար՝ խաչափաղ» (գոյ.), 2. «խաչածն» (ած., մկբ.), 4. «խաչածն գծեր անել մի բանի մակերեսին» (բայ): Նույն կերպ *tittle* գոյականի կրկնությամբ (երկրորդ բաղադրիչի հնչյունափոխված տարբերակով) ստացվել է *tittle-tattle* կրկնավորը, որը նույնպես երկարժեք²¹¹ է՝ «1. շատախոսություն (գոյ.), 2. շաղակրատել (բայ)»: Սրանք, փաստորեն, միաժամանակ համագործառական և փոխգործառական կրկնություններ են:

Երկու լեզուներում ընդհանրություններ կան նաև Գ+Գ կաղապարով բառակրկնությունների արտահայտած իմաստների առումով: Սովորաբար բաղադրիչների կրկնությունն առաջացնում է իմաստի կրկնություն՝ ցույց տալով հաճախակիություն, բազմակիություն, սաստկականություն և այլն: Բառակրկնությամբ խոսքին հաղորդվում է հուզականություն և արտահայտչականություն²¹²: Կրկնավորները կարող են արտահայտել.

ա) **հավաքականություն, խառնաշփոթ վիճակ, անորոշություն**՝ *ալ աւ-փալ աւ, աման-չ աման, գիրք-միրք, ծակ-ծուկ/ծակ ու ծուկ, հավ-մավ, հաց-մաց, մարդ-մոլորդ, ջահել-ջուհուլ, փալ աւ-փուլ ու ս, փասա-*

²¹⁰ Մ. Աբեղյան, Չայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2., Եր., 1974, էջ 146:

²¹¹ «Երկարժեք» եզրույթի մասին տե՛ս Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարածքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., 1996, էջ 85:

²¹² Տե՛ս Լ. Եզեկյան, Չայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 362:

փոռ սա, փլ ան-փստան/ֆլ ան-ֆստան և այլն: Անգլերենում՝ *higgledy-piggledy* «խառնաշփոթ», *hodge-podge* «խառնիխուռն բաներ», *knick-knackery* «ամեն տեսակ զարդարանք, պանդանք», *ribble-rabble* «ամբոխ», *riff-raff* «հասարակության թափթփուկները», *tag-rag* «հասարակության ցածր խավը» և այլն,

բ) **մարդկային հատկանիշներ**՝ *ահել-ջահել*, *լոթի-փոթի*, *ճստիկ-պստիկ*, անգլերենում՝ *harum-scarum* «անխոհեմ», *high muck-a-muck* «ինքնագոհ», *love-dovey* «սիրառատ, քնքուշ», *niddle-noddle* «օրորվող, ոտքի վրա հազիվ կանգնող» և այլն,

գ) **սաստկակամություն**՝ *ամիսներ-ամիսներ*, *դարեր-դարեր*, *տարիներ-տարիներ*, *օրեր-օրեր*, *artist-artist* «իսկական, լավ արվեստագետ (սաստկական իմաստով)», *coke-coke* «իսկական կոկա-կոլա (ըմպելիք)» և այլն²¹³:

Թեև բառակրկնությունը երկու լեզուներում հիմնական բառակազմական միջոցներից չէ, սակայն այդ եղանակով բառեր կազմելը կենդանի երևույթ է և նպաստում է զուգադրվող լեզուների բառապաշարի հարստացմանը:

3.2 Հարադրություններ Հարակցական հարադրություններ

Հարակցական հարադրությունների բաղադրիչները հարադրվում են ուղղակի հարակցությամբ, գրվում են միացման գծիկով և ունեն իմաստային, հնչական միասնություն: Դրանք անգլերենում համապատասխանում են *copulative compounds* «կապակցված, հարակցված բարդություններ» կամ *additive (adjunctive) compounds* «զուգարումային, հավելումային բարդություններ» տեսակին: Այս եզրույթները հաճախ հավասարապես կիրառում են՝ նկատի ունենալով նաև առդրական բաղադրությունները, սակայն առդրականներին ավելի շատ տրվել է *appositional* անվանումը:

Հարակցական հարադրությունները կարելի է բաժանել խմբերի՝ ըստ դրանց բաղադրիչների իմաստային մերձավորության աստիճանի:

²¹³ Տե՛ս http://vanhise.lss.wisc.edu/ling/files/ling_old_web/iso/wpl/5.1/LSOWP5.1-08-Kajitani.pdf M. Kajitani, Semantic Properties of Reduplication among the World's Languages, "LSO Working Papers in Linguistics 5: Proceedings of WIGL", Madison/Wisconsin, 2005, p. 93:

Ըստ այդմ՝ կան *իմաստով առնչակից, հոմանիշ և հականիշ* բաղադրիչներով հարադրու թյուկներ:

ա) **իմաստով առնչակից բաղադրիչներով.** *աղոթք-մրմունջ, անուև-ազգանուև, բեղ-մորուք, գիր-գրականություն, գենք-գրահ, թել-ասեղ, հարս-փեսա հաց-թաց (թացան), պատանք-պատարագ, սեր-կարոտ, քար-ճար* և այլն, անգլերենում՝ *cost-benefit* «ծախք-օգուտ», *mind-body* «միտք-մարմին», *murder-suicide* «սպանություն-ինքնասպանություն», *parent-child* «ծնող-երեխա», *parent-teacher* «ծնող-ուսուցիչ», *space-time* «տարածություն-ժամանակ», *work-life* «աշխատանք-կյանք» և այլն: Անգլերենում նման հարադրու թյուկները մեծ մասամբ նաև ածականական (որոշ այլն) արժեք ունեն:

բ) **Հոմանիշ բաղադրիչներով.** *գոռում-գոչյուն, դեղ-դարման, ընդմիջում-արանք, հաց-նշխար, հույս-ապավեն, հուր-կրակ, մեզ-մառախուղ, քար-ապառաժ* և այլն, անգլերենում՝ *dryness-drought* «չորություն-երաշտ», *love-affection* «սեր-համակրանք», *promotion-advancement* «պաշտոնի բարձրացում-առաջխաղացում», *tumbler-glass* «բաժակ-ըմպանակ», *rumour-gossip* «ասեկոսե-բամբասանք» և այլն,

գ) **հականիշ բաղադրիչներով.** *ահել-ջահել, աղջիկ-տղա, առավոտ-իրիկուն, երկինք-երկիր, ործ-էգ* և այլն, իսկ անգլերենում՝ *angel-beast* «հրեշտակ-հրեշ (գազան)», *day-night* «գիշեր-ցերեկ», *friend-enemy* «ընկեր-թշնամի», *love-hate* «սեր-ատելություն», *man-woman* «կին-տղամարդ» և այլն:

Հանդիպում են նաև հարակցական հարադրու թյուկներ՝ փոխաբերական իմաստով, ինչպես՝ *անձրև-արցունք* «շատ արցունքներ», *արցունք-կղզի* «լացող, տառապող սիրտ», *թաշկինակ-ամպ* «թաշկինակած և ամպի ծվեն», *թարթիչ-նետ* «նետած երկար ու սուր թարթիչ», *թռչուն-միտք* «նյութից նյութ անցնող միտք», *լեռ-բլուր* «շատ մեծ չափերով», *խաղալիք-բլուր* «խաղալիքանման փոքրիկ բլուր» և այլն:

Հարակցական հարադրու թյուկները բերականական փոփոխությունների ենթարկելիս (թվակազմություն, հոլովում, հոգառություն) հիմնականում փոփոխվում է երկրորդ բաղադրիչը, ինչպես՝ *տառիկ-պապիկ ներ, տառիկ-պապիկ ներք, տառիկ-պապիկ ներից*, *քար-ապառաժ ներ, քար-ապառաժ ներք, քար-ապառաժ ներից* և այլն:

Կան նաև հարակցական հարադրություններ՝ երկու հոլովված բաղադրիչներով, օրինակ՝ ա) սեռական հոլովով՝ *ամռան-ձմռան (հագուստ), սարի-ծորի, սրի-հրի*, բ) տրական հոլովով՝ *ծեռին-ոտին, ոտին-գլխին, քարին-քոլին*, գ) բացառական հոլովով՝ *հորից-մորից, ծեռից-ոտից, տնից-տեղից*, դ) գործիական հոլովով՝ *ազգով-ցեղով, բեռով-բարձով, բեռով-թեռով, թրով-սրով, ծեռով-ոտով, նազով-սազով / նազով-տուզով, շարքով-կարգով, շենքով-շնորհքով, տնով-տեղով, ոտով-ծեռով*: Այս հարադրություններում, սակայն, ոչ թե բաղադրիչներից ամեն մեկն առանձին փոփոխվում է, այլ հարադրությունը կազմվում է արդեն հոլովված բաղադրիչներով:

Անգլերենում նույնպես քերականական փոփոխության է ենթարկվում երկրորդ բաղադրիչը, ինչպես օրինակ՝ հոգնակիի կազմության դեպքում՝ *friend-enemies* «ընկեր-թշնամիներ», *murder-suicides* «մարդասպանություն-ինքնասպանություններ» և այլն:

Քանի որ հոլովված բաղադրիչներով հարակցական հարադրություններից շատերը հաճախ փոխաբերական իմաստ են արտահայտում, այդ պատճառով երբեմն դիտվելով անվանական դարձվածային կապակցություններ՝ սրանց մի մասը տեղ է գտել նաև հայերենի դարձվածաբանական բառարաններում²¹⁴, օրինակ՝ *համով-հոտով* «դուրեկան, հաճելի», *հոգով-սրտով* «լիովին», *ծեռով-ոտով* «առողջ», *ոտքով-գլխով* «ամբողջապես, լիովին», *տնով-տեղով* «ողջ ընտանիքով, ունեցած-չունեցածով» և այլն: Սրանք նախադասության մեջ հիմնականում կա՛մ որոշ ի դերում են հանդես գալիս՝ «Ձեռով-ոտով մարդ էր», կա՛մ մակբայական կիրառություն ունեն, ինչպես՝ «Ուտքով-գլխով փորձանքի մեջ ընկավ»:

Անգլերենում հարակցական հարադրությունների ածականական արժեքը ակնհայտ է դառնում այն ժամանակ, երբ դրանք, միանալով մեկ այլ գոյականի, դառնում են վերջինի որոշիչը, ինչպես՝ *[[doctor-patient] talk]* «բժիշկ-հիվանդ զրույց», *[[employer-worker] interaction]* «տնօրեն-աշխատակից փոխհարաբերություն», *[[father-son] relationship]* «հայր-տղա հարաբերություն», *[[mind-body] problem]* «մտավոր-ֆիզիկական խնդիր», *[[professor-student] cooperation]* «դասախոս-ուսանող համագոր-

²¹⁴ Տե՛ս Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, Պ. Բեդիրյան, Դարձվածաբանական բացատրական բառարան, Եր., 1971:

ծակցութիւն», *[[parent-child] conflict]* «ծնող-երեխա հակասութիւն»²¹⁵. **Father-daughter** տիպի բաղադրութիւնների համադասական հարաբերութիւնը դրսևորվում և որպէս այդպիսին ըմբռնվում է միայն այն դեպքում, երբ դրանք հանդես են գալիս իբրև լրացում, օրինակ՝ *[[father-daughter] dance]* կապակցության մեջ, որ նշանակում է «հոր և աղջկա պար», իսկ առանձին գործածվելու դեպքում բաղադրութիւնն իմաստը կարող է ճիշտ չհասկացվել և ընկալվել «հայր, որը նաև աղջիկ է» իմաստով. սա, իհարկէ, անհեթեթութիւնն է կլիներ²¹⁶.

Անգլերենում և հայերենում հարակցական բաղադրութիւններ են նաև այնպիսի երկանդամ հատուկ անուններ, ինչպիսիք են՝ *Austria-Hungary* «Ավստրո-Հունգարիա», *Bosnia-Herzegovina* «Բոսնիա-Հերցեգովինա», *USA-Canada* «ԱՄՆ-Կանադա», *Արփա-Սևան*, *Բրեստ-Լիտովսկ*, *Գորիս-Երևան* և այլն: Հարակցական հարադրութիւններ կարող են կազմվել նաև ամսանուններով, ինչպէս՝ *մարտ-ապրիլ*, *հունվար-փետրվար*, *սեպտեմբեր-հոկտեմբեր*, *April-May* «ապրիլ-մայիս», *June-July* «հունիս-հուլիս», *November-December* «նոյեմբեր-դեկտեմբեր» և այլն: Թվարկված հարադրութիւնները ևս, հարադրվելով գոյականի հետ, դառնում են դրանց որոշիչները, ինչպէս՝ *[[Spain-France] match]* «Իսպանիա-Ֆրանսիա մրցախաղ», *[[Yerevan-Moscow] flight]* «Երևան-Մոսկվա չվերթ», *[[November-December] period]* «նոյեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատված» և այլն:

Ինչ վերաբերում է հարակցականների իմաստային կենտրոն ունենալուն, *doctor-patient* «բժիշկ-հիվանդ», *professor-student* «դասախոս-ուսանող» բաղադրութիւններն արտակենտրոն են, քանի որ թեև դրանց կազմի մեջ մտնող բաղադրիչներն առանձին բնութագրում են մարդկանց, սակայն բաղադրութիւնն ամբողջությամբ մատնանշում է բաղադրիչների միջև եղած հարաբերութիւնը, հետևաբար կենտրոնը բաղադրութիւնն ինք դուրս է²¹⁷:

²¹⁵ Հարակցական հարադրութիւնների օրինակները տե՛ս http://imgd.philology.upatras.gr/files/MMM7_Proceedings.pdf S. Padrosa-Trias, Are there Coordinate Compounds?, "Morphology and Diachrony; On-Line Proceedings of the Seventh Mediterranean Morphology Meeting (MMM 7)", Greece, 2010, էջ 98-111:

²¹⁶ Տե՛ս <https://books.google.am/books?id=46kLFhR5gj4C&pg=PA2&lpg=PA2&dq=Olsen+S.,+Coordination+in+Morphology+and+Syntax:+the+Case+of+Copulative+Compounds> S. Olsen, Coordination in Morphology and Syntax: the Case of Copulative Compounds, "The Composition of Meaning: from Lexeme to Discourse (Current Issues in Linguistic Theory, 255)", Amsterdam/Philadelphia, 2004, էջ 23:

²¹⁷ Տե՛ս R. Lieber, Introducing Morphology, Cambridge, 2009, էջ 47-48:

Առդրական հարադրություններ

Առդրական են այն հարադրությունները, որոնց բաղադրիչները հարադրվելով՝ բնութագրում են միևնույն առարկան, երևույթը տարբեր կողմերից: Սրանք հայ բառակազմագիտության մեջ հաճախ կոչվել են *Նոր տիպի* հարադրություններ՝ որպես այն ժամանակների համար նոր, ռուսերենի նմանողությամբ կազմված կառույցներ²¹⁸:

Սանսկրիտի քերականության մեջ այլ համադասական բաղադրությունների հետմիասին *dvandva* կոչված այս կառույցները ժամանակակից անգլերենում նաև տարբեր անվանումներ են ստացել, ինչպես՝ *copulative compounds* «հարակցված, կապակցված բարդություններ»²¹⁹, *additive compounds* «գումարումային, հավելումային բարդություններ»²²⁰, *appositional compounds* «առդրական բարդություններ»²²¹, *appositive compounds* «բացահայտչային բարդություններ»²²²: Հաշվի առնելով սրանց բնորոշ կառուցվածքային, իմաստային հատկանիշները և բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունները՝ ավելի ճիշտ է դրանք անվանել *appositional compounds* «առդրական բարդություններ»: դրանք լիովին համապատասխանում են հայերենի առդրական հարադրություններին: *Appositional* բառը նպատակահարմար ենք գտնում թարգմանել «առդրական» եզրույթով, քանի որ *“(to) appose”* անգլերենից թարգմանաբար նշանակում է «մոտ դնել, առդնել», իսկ նման կառույցների բաղադրիչները դրվում են կողք կողքի՝ բնութագրելով նույն մարդուն, առարկան և այլն:

Առաջին հայացքից թվում է, թե նման կառույցները երկու իմաստային կենտրոն ունեն, սակայն, օրինակ՝ Ի. Փլագը դրանց աջակողմյան բաղադրիչն է դիտում որպես իմաստային կենտրոն, քանի որ քերականական փոփոխությունների հենց դա է ենթարկվում, ինչպես՝ *“There are many poet-translators in this country”*- «Այս երկրում

²¹⁸ Տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, ժամանակակից հայոց լեզու, Կ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 269-271, Ա. Մարգարյան, ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն), Եր., 1990, էջ 70:

²¹⁹ Տե՛ս S. Olsen, նշվ. աշխ., էջ 17-37:

²²⁰ Տե՛ս R. Ginzburg et al., A Course in Modern English Lexicology, M., 1979, էջ 146, Н. Раевська, English Lexicology, K., 1979, էջ 80:

²²¹ Տե՛ս L. Bauer, English Word-Formation, Cambridge, 1983, էջ 203:

²²² Տե՛ս G. Booji, The Grammar of Words: An Introduction to Linguistic Morphology, Oxford, 2005, էջ 81:

շատ բանաստեղծ-թարգմանիչ **ներ** կան»²²³։ Այս հատկանիշով սրանք հակադրվում են, օրինակ՝ իսպաներենի համանման կառույցներին, որոնցում երկու բաղադրիչներն են միաժամանակ հոգնակի թվի վերջավորությունն ստանում, ինչպես՝ *actores-bailarines* «դերասան-պարողներ», *amigos-enemigos* «ընկեր-թշնամիներ», *cantantes-actores* «երգիչ-դերասաններ», որ հաստատում է իսպաներենում նման կառույցների երկկենտրոնությունը²²⁴։

Հայերենում և անգլերենում առդրական հարադրությունները միավորվում են իմաստային տարբեր խմբերում²²⁵։

ա) **զբաղմունք, մասնագիտություն**՝ *բժիշկ-մաշկագետ, բժիշկ-օրթոպեդ, գործընկեր-արվեստագետ, երաժիշտ-մեկնաբան, թիկնապահ-օգնական, ինժեներ-շինարար, ինժեներ-տեխնոլոգ, հաղորդավար-մրցավար, ճարտարապետ-մտավորական, մանկավարժ-մեթոդիստ, ներկարար-ծեփագործ, սպասավոր-գրող, ուսանող-օրդինատոր, թարգմանիչ-քարտուղար, անգլերենում՝* *author-historian* «գրող-պատմաբան», *editor-director* «խմբագիր-տնօրեն», *lawyer-agent* «փաստաբան-գործակալ», *philosopher-painter* «փիլիսոփա-նկարիչ», *secretary-typist* «քարտուղար-մեքենագրող», *singer-composer* «երգիչ-երգահան», *writer-publicist* «գրող-թղթակից» և այլն²²⁶,

բ) **կուսակցություններ և դրանք ներկայացնող գործիչներ**՝ *լուսավորիչ-դեմոկրատ, լիբերալ-դեմոկրատ, հեղափոխական-դեմոկրատ, մարքսիստ-լենինիստ, քրիստոնյա-դեմոկրատ, ֆեդերալ իստ-նախագահ, ֆեդերալ իստ-նախարար, անգլերենում՝* *capitalist-anarchist* «կապիտալ իստ-անարխիստ», *democrat-republican* «դեմոկ-

²²³Տե՛ս I. Plag, *Word-Formation in English*, Cambridge, 2003, էջ 147։

²²⁴Տե՛ս <https://books.google.am/books?id=TI9CDJHwScC&pg=PA897&lpg=PA897&dq=Olsen+S.,+Composition#v=onepage&q=Olsen%20S.%2C%20Composition&f=false> S. Olsen, *Composition, "Morphologie/Morphology"*, Vol. 1, Berlin and New York, 2000, էջ 912։

²²⁵ Հայերենի գոյական բաղադրիչներով առդրական հարադրությունների իմաստային դասակարգումը տե՛ս նաև Գ. Վարդանյան, Ժամանակակից հայերենի անվանական վերլուծական բառակազմությունը, Եր. 2010, 77-79։ Առդրական հարադրությունների օրինակների մեծ մասը տե՛ս Դ. Գյուրջինյան, Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատկամ գծիկով գրվող բառեր, Եր., 2008։

Անգլերենի առդրական բաղադրությունների օրինակներից շատերը տե՛ս <https://books.google.am/books?id=46kLFhR5gj4C&pg=PA2&lpg=PA2&dq=Olsen+S.,+Coordination+in+Morphology+and+Syntax:+the+Case+of+Copulative+Compounds> S. Olsen, *Coordination in Morphology and Syntax: the Case of Copulative Compounds*; "The Composition of Meaning: from Lexeme to Discourse (Current Issues in Linguistic Theory, 255)", Amsterdam/Philadelphia, 2004, էջ 17-38։

²²⁶ Անգլերենում կան նաև եռաբաղադրիչ ու քառաբաղադրիչ առդրական հարադրություններ, ինչպես օրինակ՝ *actor-producer-director* «դերասան-պրոդյուսեր-ռեժիսոր», *soldier-statesman-author-orator* «զինվոր-պետական գործիչ-գրող-ճարտասան» և այլն (տե՛ս H. Marchand, *The Categories and Types of Present-Day English Word-Formation, A Synchronic-Diachronic Approach*, Wiesbaden, 1960, էջ 82)։

րատ-հանրապետական», *liberal-anarchist* «լիբերալ-անարխիստ», *Marxist-philosopher* «մարքսիստ-փիլիսոփա» և այլն,

գ) **ռազմական գործ, սառնամանակային զենքեր** - *լեյտենանտ*, *զենքերալ-մայոր*, *զենքերալ-ֆելդմարշալ*, *գրահարար-հրկիզող*, *լորդ-քաղաքապետ*, *կապիտան-լեյտենանտ*, *մինիստր-վարչապետ*, անգլերենում՝ *bombardier-navigator* «հրետազորային-ծովագնաց», *crusader-fighter* «խաչակիր-մարտիկ», *dictator-president* «բռնապետ-նախագահ», *lieutenant-commander* «լեյտենանտ-հրամանատար», *officer-explorer* «սպահե տաճարող», *owner-president* «սեփականատեր-նախագահ», *soldier-citizen* «զինվոր-քաղաքացի» և այլն,

դ) **առանիս իրեր, գործիքներ, հագուստ, փոխադրամիջոցներ**՝ *բազկաթոռ-մահճակալ*, *հնձիչ-խրճակապ*, *սայլակ-պատգարակ*, *վերնազգեստ-թիկնոց*, *տանկ-ականահան*, անգլերենում՝ *camper-trailer* «տուներեքենա», *hammer-axe* «մուրճ-կացին», *kneeler-sitter* «աթոռակ՝ ծնկները դնելու համար», *refrigerator-freezer* «սառնարան-սառցարան», *screwdriver-hammer* «ստրուտակիչ-մուրճ», *skirt-trousers* «կիսաշրջազգեստ-անդրավարտիք» և այլն,

ե) **գիր-գրականությունը, արվեստի առնչվող բառեր**՝ *ալբոմ-բառարան*, *ադոթ-նամակ*, *բալետ-օպերա*, *բառարան-տեղեկատու*, *գիրք-ալբոմ*, *գիրք-տետր*, *դիմում-զանգատ*, *համերգ-շնորհանդես*, *նամակ-ծանուցադիր*, *շոու-հանդիսանք*, *շոու-մրցույթ*, անգլերենում՝ *album-book* «ալբոմ-գիրք», *letter-application* «նամակ-դիմում», *letter-CV* «նամակ-ինքնակենսագրություն», *newspaper-magazine* «թերթ-ամսագիր», *opera-ballet* «օպերա-բալետ», *pen-knife* «գրիչ-դանակ» և այլն,

զ) **տարբեր հաստատություններ (նաև ուսումնական), ռեստորաններ, կացարաններ** և այլն՝ *ավտոկցորդ-ննջասենյակ*, *արգելավայր-թանգարան*, *բար-ռեստորան*, *բուֆետ-ճաշարան*, *դպրոց-արվեստանոց*, *խանութ-ցուցասրահ*, *սրճարան-ռեստորան*, *տուներ-ինտերնատ*, *ունիվերսիտետ-հանրախանութ*, անգլերենում՝ *library-guestroom* «գրադարան-հյուրասենյակ», *museum-preserve* «թանգարան-արգելոց», *restaurant-bar* «ռեստորան-բար», *restaurant-car* «ռեստորան-մեքենա», *restaurant-discotheque* «ռեստորան-դիսկոտեկ», *shop-office* «խանութ-գրասենյակ», *theater-museum* «թատրոն-թանգարան», *university-college* «համալսարան-վարժարան» և այլն,

Է) **ճարտարապետություն, կառույցներ`** *ամրոց-բնակավայր, ամրոց-վանք, բերդ-ամրոց, բլուր-հնավայր, խուց-քարայր, հուշարձան-արգելավայր, հուշարձան-համալիր, հուշարձան-դամբարան, պառչգամբ-առանձնասենյակ*, անգլերենում` *cathedral-basilica* «տաճար-բազիլիկ», *monument-statue* «հուշարձան-քանդակ», *sculpture-garden* «հուշարձան-պարտեզ», *sculpture-monument* «քանդակ-հուշարձան» և այլն:

ը) **աշխարհի տարբեր կողմեր`** *հարավ-արևելք, հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, հյուսիս-արևմուտք*, անգլերենում` *south-east, south-west, north-east, north-west*,

թ) **չափման միավորներ`** *վատտ-ժամ, վատտ-մետր, կիլոմետր-ժամ, կիլոմետր-վատտ, կիլոմետր-տատալ, տոննա-կիլոմետր*, անգլերենում` *watt-hour, watt-metre, kilometre-hour, kilowatt-hour, kilovolt-ampere, tonne-kilometre* և այլն:

Գ+Գ կաղապարով առդրական հարադրությունները դրանց բաղադրիչների միջև եղած շարահյուսական կապի տեսանկյունից կարող են ունենալ երկակի պատճառաբանվածություն: Բաղադրիչների միջև կարելի է դիտել և՛ ստորադասական հարաբերություն, որի դեպքում երկրորդ բաղադրիչը մասնավորեցնում է առաջինի իմաստը, ինչպես` *բժիշկ-վարակազետ* և՛ համադասական հարաբերություն` բաղադրիչների միջև «և» համադասական շաղկապով²²⁷, ինչպես` *բժիշկ և վարակազետ, դպրոց և արվեստանոց* և այլն, անգլերենում` *poet and translator* «բանաստեղծ և թարգմանիչ», *theater and museum* «թատրոն և թանգարան» և այլն. ընդ որում` երկու լեզուներում էլ, երբ փոխում ենք բաղադրիչների տեղերը` *արվեստանոց-դպրոց* և *դպրոց-արվեստանոց, poet-translator* «բանաստեղծ-թարգմանիչ» և *translator-poet* «թարգմանիչ-բանաստեղծ», բաղադրությունն ընդհանուր իմաստը չի փոխվում:

Հայերենում և անգլերենում փոքրաթիվ են առդրական այն հարադրությունները, որոնց բաղադրիչների միջև հաստատաբանաբար է որոշիչ-որոշյալի ստորադասական հարաբերություն. այդպիսիք են, օրինակ, այն բաղադրությունները, որոնց բաղադրիչներից մեկը փոխառյալ բառ է, ինչպես` *բետամասնիկ, բետաճառա*

²²⁷ Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 227:

գայ թ, բետա-տրոհիչ մ, գամմա-ճառագայ թ²²⁸, *alpha-helix* «ալ ֆա-սպարոլյո», *alpha-receptor* «ալ ֆա-ընդոլնիչ», *beta-particle* «բետա-մասնիկ», *beta-ray* «բետա-ճառագայ թ», *gala-performance* «գալ ա-ներկայացում», *gamma-camera* «գամմա-ֆոտոխցիկ» և այլն: Կան նաև որոշիչ-որոշյալ կապակցությամբ այնպիսի հարադրություններ, որոնց երկու եզրերն են փոխառյալ բառեր, ինչպես՝ *բալ-մասկարադ*²²⁹, *բիզնես-սլան*, *ֆեդերալ իստ-կանցլեր* և այլն: Որոշիչ-որոշյալ հարաբերությամբ որոշ թվով բաղադրությունների երկու բաղադրիչներն էլ հայերեն են. դրանք հաճախ արտահայտում են փոխաբերական իմաստներ, ինչպես՝ *լոյս-աստվածուհի* «սիրելի, պաշտելի էակ», *մահ-աղջիկ* «մահը աղջկա տեսքով», *գառ-աստված* «անմեղություն, բարություն խորհրդանշող աստված» և այլն:

Անգլերենում որոշիչ-որոշյալ հարաբերությունն կա հիմնականում այն առդրական հարադրությունների բաղադրիչների միջև, որոնց առաջին բաղադրիչը մատնանշում է երկրորդի սեռը: Քանի որ ի տարբերություն հին անգլերենի՝ ժամանակակից անգլերենում գոյականի սեռի քերականական կարգը չի պահպանվել²³⁰, միշտ էլ վերլուծական բաղադրություններում արական ու իգական սեռի տարբերակման համար կիրառվում են *he* և *she* դերանունները, կամ *boy*, *girl*, *man*, *woman* և այլ գոյականներ, ինչպես՝ *he-bear* «ործարջ», *she-goat* «էգայծ», *gentleman-farmer* «տղամարդ ֆերմեր», *girl-child* «աղջիկ երեխա», *man-driver* «տղամարդ վարորդ», *mail-carrier* «տղամարդ առաքիչ», *woman-painter* «նկարչուհի», *woman-washer* «լվացարարուհի», *lady-doctor* «բժշկուհի» և այլն: Սրանցից առաջին երկուսը կազմված են Pron.+N, մյուսները՝ N+N կաղապարով: Նման բաղադրություններն անհրաժեշտ են անգլերենին, քանի որ ոչ բոլոր բառերն են ստանում սեռ մատնանշող -ess վերջածանցը:

Հարկ է նշել, որ, օրինակ՝ *mail-carrier* «տղամարդ-առաքիչ» տիպի բաղադրության անդամների միջև կապը ստորադասական է (որոշիչ-որոշյալի) միայն այն դեպքում, երբ բարդության իմաստն ընկալվում է որպես «տղամարդ, այլ ոչ թե կին առաքիչ», սակայն

²²⁸ Տե՛ս Յ. Օհանյան, ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 67:

²²⁹ Այս հարադրության բաղադրիչների միջև կապը կարող է դիտվել նաև որպես համադասական:

²³⁰ Տե՛ս Յ. Թոքմաջյան, ժամանակակից անգլերենի քերականություն, Եր., 1995, էջ 11:

կարող է նաև համադասական համարվել, եթե բաղադրիչների միջև դնենք և համադասական շարկապը՝ «տղամարդ և առաքիչ»:

Որոշիչ-որոշյալի հարադրությունն առկա է նաև ազգակցական կապեր արտահայտող հարադրությունների միջև, ինչպես՝ *dancer-sister* «պարուհի-քույր», *engineer-father* «ինժեներ-հայր», *gardener-husband* «պարտիզպան-ամուսին», *lawyer-brother* «իրավաբան-եղբայր», *professor-mom* «դասախոս-մայր», *surgeon-brother* «վիրաբույժ-եղբայր», որոնցում առաջին գոյականը ներկայացնում, «որոշում է» երկրորդի մասնագիտությունը:

Հայերենում որոշիչ-որոշյալի շարահյուսական կապակցությամբ առդրական բաղադրություններ են կազմվում նաև *վայ* ձայնարկության և գոյականի հարադրությամբ՝ ծաղրական, հեգնական իմաստով, ինչպես օրինակ՝ *վայ-առաջնորդ*, *վայ-բարեփոխիչ*, *վայ-բժիշկ*, *վայ-գործիչ*, *վայ-զինվոր*, *վայ-ժողովրդավար*, *վայ-լրագրող* և այլն: Սրանց մեջ *վայ* բաղադրիչը որոշչի դեր է կատարում:

Անգլերենում առդրական բաղադրությունը, հարադրվելով երրորդ գոյականի հետ, դառնում է դրա որոշիչը, ինչպես՝ *[[author-historian] group]* «գրող-պատմաբանների խումբ», *[[poet-painter]] crew]* «բանաստեղծ-նկարիչների աշխատակազմ», *[[singer-composer] group]* «երգիչ-երգահանների խումբ»: Նման կազմությունները հաճախ երկիմաստ²³¹ են, ինչպես՝ *[[poet-painter] crew]* «բանաստեղծների և նկարիչների աշխատակազմ» կամ «բանաստեղծ-նկարիչների աշխատակազմ», *[[singer-composer] group]* «երգիչների և երգահանների խումբ» կամ «երգիչ-երգահանների խումբ» և այլն:

Հատվածական հարադրություններ

Հատվածական հարադրությունները կազմվում են հիմնականում ածականների հարադրությամբ, որոնց առաջին բաղադրիչները հատված են, ինչպես՝ *ռազմական-վարժական* > *ռազմա-վարժական* > *ռազմավարժական*, *հայերեն-ռուսերեն* > *հայ-ռուսերեն*, սակայն այս կառույցներից մեզ հետաքրքրում են միայն նրանք, որոնք իրենց կազմում ունեն մեկ գոյական բաղադրիչ՝ որպես հարադրության երկ-

²³¹ Տե՛ս I. Plag, *Word-Formation in English*, Cambridge, 2003, էջ 147:

րորդ անգամ, և ժամանակի ընթացքում չեն վերածվել համադրական բարդությունների:

Մեզ հետաքրքրող կառույցները հիմնականում քաղաքական-հասարակական հասկացություններ արտահայտող եզրույթներ են, որոնք հայերենին են անցել եվրոպական լեզուներից ռուսերենի միջոցով, հազվադեպ փոխառվել են ռուսերենից անմիջականորեն²³²: Այդպիսիք են, օրինակ՝ հետևյալ հարադրությունները՝ *նացիոնալ - լիբերալ իզմ*, *նացիոնալ - շովինիստ*, *նացիոնալ - սոցիալ իստ*, *սոցիալ - դեմոկրատիա*, *սոցիալ - իմպերիալ իզմ*, *սոցիալ - իմպերիալ իստ*, *սոցիալ - շովինիզմ*, *սոցիալ - շովինիստ*, *սոցիալ - պատրիոտ*, *սոցիալ - պացիֆիզմ*, *սոցիալ - պացիֆիստ* և այլն:

Մի շարք հարադրություններում երկրորդ բաղադրիչները հայերեն են՝ *սոցիալ - դավաճանություն*, *սոցիալ - դավաճան*, *սոցիալ - հեղափոխական*, *սոցիալ - միաբանիչ*, *սոցիալ - միաբանողականություն* և այլն:

Անգլերենում *social* «հասարակական» բառը լատիներենից փոխառություն է *socialis* «մոտիկ, ցեղակից»²³³ բառից, իսկ *national* «ազգային» բառը ծագել է լատիներեն *natio* (*n-*) «ծնունդ» բառից²³⁴: Անգլերենում վերոնշյալ բաղադրությունները հատվածական հարադրություններ չեն, քանի որ ի տարբերություն հայերենի՝ սրանց առաջին բաղադրիչները՝ *national*, *social* բառերն ածանցավոր են և ունեն ածականի արժեք, իսկ հայերենում, քանի որ չկա ածականակերտ համարժեք ածանց, դրանք գիտակցվում են ոչ թե որպես ածականներ, այլ հատված հիմքեր՝ մեր լեզվում եղած ածականակերտ *-ական*, *-իստ* ածանցների կորստով²³⁵. անգլերենում, փաստորեն, հայերեն հատված բառի դիմաց ունենք լիարժեք բառ՝ ածական, որ, միանալով գոյականին, ստեղծում է նմանատիպ կազմություններ՝ *national-anarchism* «նացիոնալ - անարխիզմ», *national-Bolshevik* «նացիոնալ - բոլշևիկ», *national-Christian* «նացիոնալ - քրիստոնյա», *social-Chauvinism* «սոցիալ - շովինիզմ», *social-chauvinist* «սոցիալ - շովինիստ», *social-Code*

²³² Տե՛ս Յ. Օհանյան, նշվ. աշխ., էջ 65-67:

²³³ Տե՛ս <http://www.oxforddictionaries.com/definition/english/social>-Oxford Dictionaries

²³⁴ Տե՛ս նույն տեղում - <http://www.oxforddictionaries.com/definition/english/national>

²³⁵ Տե՛ս Գ. Վարդանյան, ժամանակակից հայերենի անվանական վերլուծական բառակազմությունը, Եր., 2010, էջ 87-88:

«սոցիալ -օրենսգիրք», *social-conflict* «սոցիալ -բախում», *social-democracy* «սոցիալ -դեմոկրատիա», *social-democrat* «սոցիալ -դեմոկրատ» և այլն:

Թերևս այդպիսի հատված հիմքերով բաղադրություններ կարելի է համարել անգլերենում դասական լեզուներից փոխառյալ բաղադրիչով (ներով) բաղադրությունների մի մասը՝ *sociolinguistics* «հանրալեզվաբանություն», *electrochemistry* «էլեկտրաքիմիա» և այլն, սակայն դրանք մեծ մասամբ ոչ թե վերլուծական, այլ համադրական կազմություններ են: *Socio* բաղադրիչով կան նաև որոշ վերլուծական կառույցներ՝ *socio-analysis* «սոցիալ -վերլուծություն», *socio-economics* «սոցիալ -տնտեսագիտություն» և այլն, որոնք հանդիպում են նաև միացյալ գրություններ:

Գոյական բաղադրիչով հատվածական բաղադրությունները ավելի քիչ են՝ համեմատած ածական բաղադրիչներով հատվածական հարադրություններին: Ընդհանրապես հատվածական վերլուծական բաղադրությունների թիվը մեծ է, քանի որ առաջին բաղադրիչի մեջ ածանցի անկումը նպաստում է հետագայում այդ բաղադրությունների անցմանը համադրական տիպի:

Շաղկապական հարադրություններ

Գոյական բաղադրիչներով շաղկապական հարադրությունները՝ կազմված «ու», «և» շաղկապներով, բավականին գործածական են հայերենում: Դրանց մեծամասնությունը կազմվում է «ու» համադասական շաղկապով, ավելի քիչ են «և» շաղկապով միավորված բաղադրությունները: Վերլուծական բաղադրություններ կազմելու մեջ «ու» շաղկապի ավելի մեծ դեր ունենալը մեծապես կապված է «ու»-ի՝ ժողովրդախոսակցական լեզվին հատուկ լինելու և հետևաբար ժողովրդախոսակցական բնույթի բաղադրություններ կազմելու հետ, իսկ «և» շաղկապով կազմությունները, ընդհակառակն, հիմնականում գրական լեզվին են բնորոշ²³⁶:

Գ+ու+Գ կաղապարով բաղադրություններն ունեն եզակի և հոգնակի թիվ, որոշյալ, անորոշ առում, հոլովվում են, վերցնում

²³⁶ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի բաղիյունական բաղադրությունները, Եր., 1986, էջ 11-13:

են ստացական ու դիմորոշ հոդեր²³⁷, և հիմնականում քերականական փոփոխությունների է ենթարկվում դրանց երկրորդ բաղադրիչը, օրինակ՝ *զենք ու զորք*, *զենք ու զորքի*, *զենք ու զորքով*, *զենք ու զորք (ը)*, *զենք ու զորքերը* և այլն²³⁸:

Անգլերենում շաղկապական հարադրությունները դասվում են այսպես կոչված *բառակապակցական բարդությունների* (*phrasal compounds*) շարքին: Նման կառույցները միջին օղակ են շարահյուսական միավորների (բառակապակցությունների) և բառակազմական միավորների (բարդ բառերի) միջև: Լինելով շարահյուսական կառույցներ՝ միևնույնն է, դրանք մեկ բառի արժեք ունեն: Այստեղից էլ բխում է *բառակապակցական բարդություն* անվանումը:

Բառակապակցական բարդությունների մի տեսակը *and* (հազվադեպ նաև *or*) համադասական շաղկապով կապված *շաղկապական հարադրություններն* են, ինչպես՝ *bubble-and-squeak* «տապակած կարտոֆիլ և կաղամբ», *milk-and-water* «անզոր, թույլ», *pepper-and-salt* «ալեխառն» և այլն: Մյուս տեսակը *շարահյուսական բարդություններն* են (Բլումֆիլդի եզրույթով), որոնք ունեն նախադասությունների և ազատ բառակապակցությունների բնորոշ կառուցվածք, համապատասխանում են անգլերենի շարադասական կանոններին, այլ կերպ ասած՝ նախադասության խտացման՝ “sentence condensation”-ի արդյունք են:

Շաղկապական հարադրությունների բաղադրիչները սովորաբար իմաստային մերձավորություն կամ սերտ առնչություն են ունենում, այսինքն՝ դրանք հենց այնպես չեն կապվում միմյանց: Ըստ այդմ՝ երկու լեզուներում կարելի է առանձնացնել իմաստով *առնչակից*, *հոմանիշ* և *հականիշ* բաղադրիչներով շաղկապական հարադրություններ: Ընդ որում՝ հաճախ դրանց հարադրմամբ նաև փոխաբերական իմաստներով կառույցներ են կազմվում:

²³⁷ Տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածքանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 79-80:

²³⁸ Այս կանոնից շեղվում են միայն **հայր**, **մայր** բառերով կազմված բաղադրությունները, որոնցում առաջին բաղադրիչը ևս հոլովվում է՝ *հայր ու աղջիկ*, *հոր ու աղջկա*, *հոր ու աղջկանից*, *հոր ու աղջկանով*, *մայր ու տղա*, *մոր ու տղայի*, *մոր ու տղայից*, *մոր ու տղայով* և այլն: Մնացած դեպքերում առաջին բաղադրիչը թեև չի հոլովվում, սակայն հավասարապես արտահայտում է երկրորդի հոլովական ու թվային իմաստները (տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի բաղիյուսական բարդությունները, Եր., 1986, էջ 47-48):

ա) **առնչակից իմաստ** ունեցող բաղադրիչներով՝ *առի ու մահ*, *աղոթք ու աղաչանք*, *արմավ ու նուշ*, *բառ ու խոսք*, *թաթ ու կրունկ*, *թուղթ ու թանաք*, *լ ու ծ ու եգ*, *խելք ու միտք*, *խինդ ու փառք*, *խոսք ու գրույց*, *ծառ ու ծաղիկ*, *կաթ ու կորեկ*, *կաշի ու ոսկոր*, *կուժ ու կթղա*, *կրակ ու բոց*, *հանդ ու ձոր*, *ճար ու ճամփա*, *շուն ու գայլ*, *շունչ ու հոգի* և այլն, անգլերենում՝ *arts and crafts* «արվեստներ ու արհեստներ», *bed and board* «օթևան ու սնունդ», *bread and wine* «հաղորդության ժամանակ ճաշակվող հաց (նշխար) ու գինի», *cakes and ale* «երկրային վայելք», *cat and mouse* «մուկն ու կատու», *dog and bone* «հեռախոս», *doom and gloom* «հոռետեսություն», *law and order* «կարգ ու կանոն», *milk and honey* «ծաղկում ու բարգավաճում» և այլն,

բ) **հոմանիշ** բաղադրիչներով՝ *անեծք ու նզովք*, *արտ ու հանդ*, *բանտ ու զնդան*, *գանգատ ու բողոք*, *գութ ու կարեկցանք*, *դատ ու դատաստան*, *դեղ ու ճար*, *խոհ ու խոկում*, *ծամ ու վարս*, *ծոմ ու պաս*, *կապ ու կշկուռ*, *հարգ ու պատիվ*, *հողմ ու քամի*, *ճորտ ու ծառա մուխ* ու *ծուխ վանք* ու *եկեղեցի*, *վեճ ու կռիվ* և այլն, անգլերենում՝ *command and control* «գինված ու ժերի վարում», *house and home* «տուն ու տեղը, ունեցվածքը», *hue and cry* «աղմուկ-աղաղակ, բողոք», *hum and haw* «տատանում, վարանում», *pot and pan* «մեկի հայրը կամ ամուսինը», *rag and tatter* «մաշված, ծակծկված» և այլն,

գ) **հականիշ** բաղադրիչներով՝ *աղքատ ու հարուստ*, *անեծք ու օրհնանք*, *աջ ու ձախ*, *դար ու փոս/դար* ու *դարափ դուրս ու տուն*, *խինդ ու արցունք*, *խինդ ու վիշտ*, *ծեր ու մանուկ*, *ստրուկ ու տեր*, *վիշտ ու ժափտ*, *տիվ ու գիշեր* և այլն, անգլերենում՝ *alpha and omega* «սկիզբն ու վերջը», *boom and bust* «վերելք ու անկում», *day and night* «օր ու գիշեր», *ebb and flow* «մակընթացություն և տեղատվություն», *left and right* «աջ ու ձախ», *life and death* «կենաց ու մահու», *light and shade* «լույս ու ստվեր», *wax and wane* «աճ ու նվազում» և այլն:

Ի տարբերություն հայերենի շաղկապակալ հարադրություններին՝ նման կառույցներն անգլերենում կազմվում են ոչ միայն *and* (և) շաղկապով, այլև *or* շաղկապով, ինչպես՝ *feast or famine* «չափազանց շատ կամ քիչ», *rhyme or reason* «բանական պատճառ կամ բացառություն», *by hook or by crook* «ամեն հնարավոր ձևով» և այլն:

Երկու լեզուներում թեև ավելի հազվադեպ, սակայն հանդիպում են նաև շաղկապակալ հարադրությունների այնպիսի

օրինակներ, որոնցում գոյականը հարադրված է այլ խոսքի մասի, ինչպես՝

ա) Գ+Բ՝ *ահ ու զարկ, դեղ ու դիր, ջարդ ու նահանջ*, անգլ երենում՝ *cash and carry* «մեծածախ առևտուր», *tax and spend* «հարկերի բարձրացման քաղաքականություն» և այլն,

բ) Բ+Գ կադապարով՝ *անկ ու կուտ, առ ու գերի, ել ու մուտք, զարկ ու ավար, հոռնչ ու բառ, շարժ ու ձև, տուր ու դմփոց*, անգլ երենում՝ *run and gun* «արագ, անկանոն (խաղ)» և այլն,

գ) Ա+Գ կադապարով՝ *ալ ու առլաս, թաց ու թոն, սև ու սուգ*, անգլ երենում՝ *hard and fastness* «անշարժություն», *rough and tumble* «բարձիթողի վիճակ» և այլն,

դ) Գ+Ա կադապարով՝ *դաշտուղի ու րան, խաղք ու խայտառակ, ուժ ու աշխույժ*, անգլ երենում՝ *art-and-crafty* «ձեռագործ իրեր պատրաստել սիրող», *horse and buggy* «հնաճ», *home and dry* «հաջողությամբ նպատակին հասած», *pepper and salty* «մուգ ու բաց, բժավոր» և այլն:

Հայ երենում կան նաև ձայնարկություններ +գոյական կադապարով կազմություններ, ինչպես՝ *ախուղ դարդ, ախուղ հառաչ, ախուղ ոխ, ախուղ վախ* և այլն:

Շաղկապական հարադրությունները հիմնականում կազմվում են պարզ հիմքերի հարադրությամբ, սակայն կան նաև բաղադրիչի (ներքին) քերականական ձևավորմամբ հարադրություններ, ինչպես՝ *կենաց ու մահու (գրաքարյան սեռական հոլովածևով)*, հոգնակի թվով դրված բաղադրիչով (ներով) կառույցներ, ինչպես՝ *եզներ ու կովեր, սարեր ու ձորեր* և այլն: Հաճախ միայն երկրորդ բաղադրիչն է հոգնակի թվով դրված, ինչպես՝ *ազգ ու ազինք (գրաքարածև), երգ ու տաղեր, կուժ ու կարասներ*, սակայն քանի որ այս հարադրությունները սովորաբար հոգնակիության ու հավաքականության նշանակություն են արտահայտում, հոգնակի թվով կիրառվելու կարիք առանձնապես չունեն²³⁹:

Գ+Գ շաղկապական հարադրությունները հայ երենում հիմնականում կազմվում են համակադապարային կառույցներ (բացառությամբ հոլովական ձևերի): Անգլ երենում, սակայն, երկու գոյականների հարադրումից կարող է կազմվել ոչ միայն **գոյական**, ինչպես՝ *alarums and excursions* «իրարանցում, հոլյգեր», այլև **ածական**՝

²³⁹ Տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզուն (Բառակազմություն, դարձվածքանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 80:

hole and corner «գաղտնի, ծածուկ», **մակբայ** ` *body and soul* «ամբողջապես, լիովին (հոգով ու մարմնով)», **բայ** ` *top and tail* «բանջարեղենի վերևի ու ներքևի հատվածները հեռացնել» և այլն: Հետևաբար անգլերենում լինում են նաև շաղկապական բաղադրությունների փոխադասարային կազմություններ, և կան գոյականներով հարադրված այնպիսի շաղկապական բաղադրություններ, որոնք միաժամանակ կարող են լինել գոյական և ածական, ինչպես՝ *meat-and-potatoes* «1. մի բանի կարևոր մասը (գոյ.), 2. հիմնական, կարևոր (ած.)»:

Շաղկապական հարադրությունները, հարադրվելով երրորդ գոյականի հետ, դառնում են դրանց որոշիչները, ինչպես՝ *a [[cat and dog] life]* «անհամերաշխ կյանք», *a [[ham-and-egg] sandwich]* «խոզապուխտով և ձվով բրդուճ», *a [[hole and corner] conspiracy]* «դավադրություն», *a [[life and death] struggle]* «կենաց-մահու պայքար» և այլն:

Բառակապակցական բաղադրությունների մյուս տեսակն անգլերենում, ինչպես նշեցինք, *շարահյուսական բարդություններն* են: Դրանցում առանձնացվում են ներկենտրոն և արտակենտրոն բաղադրություններ: Ներկենտրոն բաղադրությունները բաժանվում են երկու խմբի՝ ա) նրանք, որոնց մեջ հիմնաբառը՝ գոյականով արտահայտված իմաստային ու քերականական կենտրոնը, առաջին բաղադրիչն է, ինչպես՝ *lady-in-waiting* «պալատական, ազնվական կին», *son-in-law* «փեսա (աղջկա ամուսինը)». այս տեսակն անգլերենում կենսունակ է, բ) նրանք, որոնց մեջ իմաստային կենտրոնը երկրորդ բաղադրիչն է, իսկ առաջին բաղադրիչը բառակապակցություն է կամ նախադասություն, ինչպես՝ *a pain-in-stomach-gesture* «ստամոքսի ցավ ունեցողի շարժում, ժեստ», *a what-do-you-think-movement* «շարժում, որով մեկին ուզում են հարցնել, թե նա ինչ է մտածում», *the old-must-be-right-attitude* «վերաբերմունք՝ ըստ որի տարեցները միշտ ճիշտ են». այս տեսակն անգլերենում բառակազմական տեսանկյունից ավելի կենսունակ է²⁴⁰:

Արտակենտրոն բաղադրությունների մեջ շատ են հանդիպում բույսերի անուններ, ինչպես՝ *love-in-idleness* «գառմանուշակ

²⁴⁰ Տե՛ս L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 207:

(եռագուն մանուշակ)», *mother-of-rhyme* «վայրի ուրց, ծոթոր», *snow-in-summer* «սպիտակ թերթերով անթառամ ծաղիկ» և այլն²⁴¹:

Նախդիրներով կազմված այս կապակցություններն անգլերենում կոչվում են նախդրավոր բառակապակցական բաղադրություններ (prepositional phrasal compounds): Դրանք սովորաբար իրենց կազմում ունեն մի գոյական բաղադրիչ և այլ խոսքի մասեր: Նման բաղադրությունները կարող են կազմվել տարբեր նախդիրներով²⁴², ինչպես՝ *hand-in-glove* «իրար արժանի, սազական», *maid-in-waiting* «թագուհուն ծառայող օրիորդ-սպասուհի», *stick-in-the-mud* «չնախածեռնող», *jack-of-all-trades* «բազմաշնորհ», *lily-of-the-valley* «հովտաշուշան», *matter-of-fact* «իրականություն», *middle-of-the-road* «չափավոր», *mother-of-pearl* «սադափ», *state-of-the-art* «նորագույն», *man-at-arms* «զինված հեծյալ», *gentleman-at-arms* «արքունի թիկնապահ», *stay-at-home* «տնակյաց մարդ», *Johnny-jump-up* «զամանուշակ (եռագուն մանուշակ)», *up-to-date* «այժմեական», *up-to-the-minute* «վերջին րոպեների, ամենաթարմ», *off-the-shoulder-blouse* «ուսերը բաց բլուզ», *off-the-record* «ոչ պաշտոնական», *on-the-job* «զգոն, ուշադիր», *Johnny-on-the-spot* «օգնության պատրաստ մարդ», *behind-the-scenes* «հետնաբեմում», *out-of-the-way* «աշխարհից կտրված», *out-of-date* «ոչ նորածն», *under-the-counter/table* «գաղտագողի» և այլն²⁴³:

²⁴¹ Տե՛ս H. Marchand, The Categories and Types of Present-Day English Word-Formation, A Synchronic-Diachronic Approach, Wiesbaden, 1960, էջ 80:

²⁴² Տե՛ս <https://webcache.googleusercontent.com/search?q=cache:3yJBPhF9jqYJ:https://is.cuni.cz> M. Ménová, Phrasal Compounds in Contemporary British Newspapers (Bakalářská práce), Květen, 2012, էջ 19-38:

²⁴³ Թեև կառուցվածքով սրանք ավելի նման են բառակապակցության, սակայն հաճախ բերականական փոփոխությունների են ենթարկվում բառերի պես. *jack-in-the-box* բաղադրության հոգնակի թիվը կազմվում է բառի վերջում հոգնակիակերտ մասնիկի ավելացմամբ՝ *jack-in-the-boxes* «դուրս ցատկող տիկնիկով տուփեր», սակայն մյուս կողմից, օրինակ՝ *brother-in-law* բաղադրության առաջին բաղադրիչը՝ իմաստային ու բերականական կենտրոնն է հոգնակի թիվ ստանում՝ *brothers-in-law* «փեսաներ», և այդպիսով բաղադրությունը շեղվում է բառին հատուկ՝ բերականական ցուցիչը (նշույթը) վերջում ստանալու կանոնից: Միևնույն ժամանակ *brother-in-law* կապակցությունը սովորական բառերի նման սեռական հոլովի մասնիկն ընդունում է վերջին բաղադրիչի վրա, ինչպես՝ *brother-in-law's* «փեսայի», որն արդեն իսկ հականությունն է առաջացնում: Այս է պատճառը, որ սրանք կոչվում են բառակապակցական բարդություններ՝ ունենալով և՛ բառակապակցությանը, և՛ բարդ հարադրությանը բնորոշ բերականական գործառնություններ (տե՛ս A. C.-McCarthy, An Introduction to English Morphology: Words and their Structure, Edinburgh, 2002, էջ 67-68):

Այս տիպի կապակցությունները հաճախ կազմվում են նաև անմիջապես խոսելու պահին՝ տվյալ իրավիճակում²⁴⁴, երբեմն նույնիսկ ամբողջական նախադասություններ են վերածվում նշված տիպի բառակապակցական բաղադրությունների, ինչպես՝ *a what-should-I-do-next look* «հայացք, որ ասում է՝ հետո ինչ եմ անելու»: Դրանք հաճախ անհատական, հեղինակային կառույցներ են և կիրառվում են խոսքին յուրահատկություն հաղորդելու նպատակով, շատ են հանդիպում նաև գրական ստեղծագործություններում, օրինակ՝ *She looked at him in the “What-a-brave-hero-you-are” manner.* (Agatha Christie)-«Նա նրան էր նայում այնպես, կարծես ուզում էր ասել. «ԻՆՉ ԽԻՉԱՔ ԿԵՐՈՍ ԵՍ ԴՈՒ» (Ագաթա Քրիստի)²⁴⁵:

Նման կառույցների առկայությունն անգլերենում պայմանավորված է դրա վերլուծական լեզու լինելու հանգամանքով, որ թույլ է տալիս կողք կողքի դնելով մի քանի բառ և նախդիր՝ առանց որևէ քերականական փոփոխության ենթարկելու ստանալ մեկ բառի արժեք ունեցող միավորներ: Ընդ որում այս կառույցները կազմված չեն որևէ բառակազմական կաղապարի հետևողությամբ. ինչպես տեսնում ենք, դրանց կազմում կարող են լինել և՛ գոյականներ, և՛ բայեր, և՛ նախդիրներ ու հոդեր, հետևաբար դրանց կազմությունը չի կարող բնորոշվել որոշակի համակարգայնությամբ: Սրանք հայերենում չունեն իրենց տիպաբանական զուգահեռը, քանի որ հայերենում չկան մեկ բառի արժեք ունեցող նման նախադասություն-կապակցություններ:

Որոշ բառակապակցական բաղադրություններ, հարադրվելով մեկ այլ գոյականի, դառնում են դրանց որոշիչները, ինչպես՝ *a [[mother-to-daughter] talk]* «մոր ու աղջկա զրույց», *an [[end-of-term] examination]* «տարեվերջյան քննություն», *the [[not-quite-at-ease] manners]* «մեկի անհարմար զգալը մատնող պահվածք» և այլն: Հաճախ կամ ամբողջ բաղադրությանը վերջում, կամ դրա բառակապակցական մասի վերջին անդամին կցվում են *-er*, *-ish* վերջածանցները, և ստացվում են մարդկանց առնչվող բառակապակցական բաղադրություններ, ինչպես՝

²⁴⁴ Հետաքրքիր են անգլերենում **N+to be** բայով կապակցությունները *a bride-to-be* «սպազա հարսնացու», *a mom-to-be* «սպազա մայրիկ», *a father-to-be* «սպազա հայրիկ», *a wife-to-be* «սպազակին, տիկին» և այլն (տե՛ս M. Ménová, նշվ. աշխ., էջ 27):

²⁴⁵ Մեջբերումն ըստ S. Արբեկովայի (տե՛ս Т. Арбекова, Лексикология английского языка, М., 1977, էջ 24):

a devil-may-care-ish-attitude «անշրջահայաց վերաբերմունք», *a breakfast-in-the-bedder* «անկողնում նախաճաշող մարդ» և այլն²⁴⁶:

Կապակցական հարադրություններ

Կապակցական հարադրությունները նախկին շարահյուսական կապակցությունների կայունացման, քարացման ու բառայնացման հետևանքով ստացված միավորներն են: Մենք կապակցական հարադրություններ ասելով նկատի ունենք երկու լեզուներում ոչ թե դարձվածքները կամ բաղադրական կապակցությունները, այլ միայն առավելագույնս բառայնացման ենթարկված բառակազմական միավորները, որոնց բաղադրիչներն առանձին կորցրել են իրենց ինքնուրույնությունն ու իմաստը՝ ձեռք բերելով բոլորովին այլ բառային իմաստ: Սրանցից մեզ հետաքրքրում են միայն այն կազմությունները, որոնք ունեն կամ երկու, կամ գոնե մեկ գոյական բաղադրիչ:

Երկու գոյականներով կազմված կապակցական կառույցների առաջին բաղադրիչը սովորաբար դրված է բացառական հոլովով, օրինակ՝ *այբից քե, առավոտից իրիկուս, ոտից գլուխ սկզբից վերջ* և այլն:

Գոյականը կարող է միանալ սպասարկու խոսքի մասի՝ կազմելով բաղադրյալ մակբայներ, դերանուններ, ածականներ, շաղկապներ ու կապեր: Գրաբարյան նախդիրների և գոյականի հարադրմամբ կազմված կապակցական հարադրություններում գոյական բաղադրիչը (ները) կա՛մ ուղիղ ձևով է դրված, կա՛մ գրաբարյան տարբեր հոլովաձևերով, ինչպես՝ ա) **առ** նախդրով՝ *առ Աստված, առ սեր* և այլն, բ) **ըստ** նախդրով՝ *ըստ էության, ըստ կարգի, ըստ հարկի, ըստ օրինի* և այլն, գ) **ընդ** նախդրով՝ *ակն ընդ ական, ատամն ընդ ատաման* և այլն, դ) **ի** նախդրով՝ *ի գիտություն, ի գործ, ի գեն, ի զարմանս, ի թիվս, ի լրումն, ի խնդիր, ի խորոց սրտի, ի խրատ, ի կատարումն, ի հաճույս, ի հաշիվ, ի տնօրինություն, ի մահ, ի նշան, ի նպաստ, ի շահ, ի շարս, ի պաշտոնե, ի պաշտպանություն, ի պատասխան, ի պատիվ, ի սրտե, ի տեղի, ի փառս* և այլն:

²⁴⁶ Տե՛ս V. Adams, *An Introduction to Modern English Word-Formation*, London, 1973, էջ 13, Դ. Антрушина, О. Афанасьева, Н. Морозова, *Лексикология английского языка*, М., 1985, էջ 82:

Ի նախորդով և տեղ ու ժամանակ ցույց տվող որևէ գոյականի կամ գոյականների հետ *վեր, վար* կապերով կարող են կազմվել կապակցական այնպիսի հարադրություններ, ինչպիսիք են՝ *բլուրն ի վար, դարերն ի վեր, երկինքն ի վեր, կիրճն ի վեր, սարերն ի վեր, փողոցն ի վար* և այլն: Նման կառույցները, սակայն, միտում ունեն ժամանակի ընթացքում վերածվելու համարական կազմությունների, ինչպես՝ *լանջնիվայր, լանջնիվեր, լեռնիվայր, լեռնիվեր, սարնիվար* և այլն:

Հայերենի նմանատիպ կառույցներին կարելի է գուգադրել անգլերենում նախորդվոր քարացած կառույցները՝ կազմված տարբեր նախդիրներով ու գոյականներով (հաճախ նաև որոշյալ ու անորոշ հոդերով). դրանց հարադրմամբ ստացվում են տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր՝ վերաբերականներ, ածականներ, մակբայներ և այլն, ինչպես օրինակ՝ *at odds* «անհամերաշխ», *by virtue of* «շնորհիվ», *in a word* «մի խոսքով», *in consequence of* «հետևանքով», *in grain* «բնույթով», *in my book* «իմ կարծիքով», *in place* «տեղին», *in the pink* «ուժերի ծաղկման շրջանում», *on the word* «անմիջապես» և այլն: Սրանք անգլերենում մեկ բառի արժեք ունեցող կայուն կապակցություններ են և հաճախ են հանդիպում թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում:

Կապակցական կազմություններ են նաև *առաջ* բառի և գոյականների կապակցությամբ կառույցները, ինչպես՝ *ամիս առաջ, ժամ առաջ, վայրկյան առաջ, րոպե առաջ, օր առաջ* և այլն: Կապակցական հարադրությունների մեջ կան իրենց կազմում գոյական բաղադրիչ ունեցող վերաբերականներ, ինչպես՝ *ամենայն հավանականությամբ, ըստերևույթին, ինչ խոսք, համենայն դեպս, ցավոք սրտի* և այլն: Շարահյուսական կապակցությունների կայունացման հետևանքով առաջացած կառույցներ են, օրինակ՝ *այն գլխից, այն ժամանակ, այն օրը, անցյալ օրը, առանց այլ և այլ ության, հանուն արդարության, տարին բոլոր, տարին բուռն* և այլն:

Կապակցական հարադրությունները բառակազմական տեսանկյունից այնքան կենսունակ չեն, որքան, ասենք, շաղկապական և առդրական հարադրությունները և հարադրությունների մյուս տեսակները:

3.3 Երկու գոյականներով և գոյականով ու այլ խոսքի մասերով բաղադրված հարադրություններն անգլերենում

Ինչպես ցույց է տալիս հայերենի գոյական բաղադրիչով (ներով) վերլուծական հարադրությունների քննությունը, դրանք հիմնականում կազմվում են երկու գոյականներով, ինչպես շաղկապականների մեծ մասի (բացի գոյականի և այլ խոսքի մասերի հարադրմամբ կազմվածներից) և կրկնավոր, հարակցական ու առդրական հարադրությունների դեպքում: Հատվածական հարադրությունների մեր քննած տեսակի մեջ մի բաղադրիչը հատված ածական է, իսկ մյուսը՝ գոյական, կապակցականներում կա՛մ երկու գոյականներ են, կա՛մ մի բաղադրիչը նախդիր է կամ այլ խոսքի մաս:

Ի տարբերություն հայերենի, որում վերլուծական բաղադրությունների մեծ մասում եթե մի բաղադրիչը գոյական է, ապա հիմնականում մյուսն էլ է գոյական, անգլերենում գոյականը բացի գոյականից՝ հարադրվում է նաև այլ խոսքի մասերի պատկանող տարբեր բառերի հետ:

Համադրական բարդություններին նվիրված գլխում մենք քննել ենք գոյական սերող ու բաղադրող հիմքերով բարդություններն ըստ տարբեր կաղապարների, դրանց բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունների և բարդությունների արտահայտած իմաստների: Այժմ ներկայացնենք անգլերենի գոյական բաղադրիչով այն վերլուծական կառույցները, որոնց բաղադրիչների միջև առկա է լրացում-լրացյալի հարաբերություն: Դրանց բաղադրիչների միջև շարահյուսական և իմաստային հարաբերություններին կանդիդատանք հպանցիկ, քանի որ նույն հարաբերությունները կան նաև համադրական կառույցների դեպքում, և այլևս նպատակահարմար չենք համարում դրանց մանրամասն քննությունն այդ տեսակետից. հետևաբար կսահմանափակվենք գոյականի և այլ խոսքի մասերի հարադրմամբ կազմված վերլուծական բաղադրությունների հնարավոր կաղապարների ներկայացմամբ և ընդհանուր բնութագրմամբ:

Գոյ ական վերջնաբաղադրիչով վերլուծական
բաղադրու թյ ու ներից առաջինն է երկու գոյ ականներով
կապակցու թյ ու նը:

N+N: Վերևում արդեն քննել ենք անգլերենի N+N կաղապարով բաղադրությունների այն տեսակները, որոնց բաղադրիչները համադասական հարաբերություն ունեն, ինչպես՝ N+N *հարակցական* և *առդրական* (թեև սրանց որոշ մասի մեջ կարելի է տեսնել նաև բաղադրիչների ստորադասական հարաբերություն), *շաղկապական* հարադրությունները, սակայն բաղադրիչների ստորադասական հարաբերությամբ N+N վերլուծական կառույցներն ամբողջությամբ չենք քննել :

N+N կապակցությամբ վերլուծական ստորադասական բաղադրություններ են, օրինակ՝ *stone wall* «քարե պատ» տիպի կապակցությունները, որոնց բառակապակցություն կամ բարդ բառ լինելն անգլերենի բառակազմության մեջ մինչև այժմ վիճելի է։ Որպեսզի համոզվենք, որ N+N կաղապարով այս կամ այն բաղադրությունը ոչ թե շարահյուսական միավոր (բառակապակցություն) է, այլ բառակազմական, առաջնորդվում ենք միանգամից մի քանի չափանիշներով (առաջին բաղադրիչի վրա շեշտ, ձևակառուցվածքային, իմաստային ամբողջականություն և այլն)։

Թեև N+N կաղապարով վերլուծական բաղադրություններում առաջին բաղադրիչը գոյական է, սակայն սրանց մի մասում այն ածականական արժեք է ստանում, և բաղադրիչների միջև հարաբերությունը դառնում է ստորադասական՝ **որոշիչ-որոշյալի**, ինչպես օրինակ՝ *garden party* «պարտեզում կազմակերպված երեկույթ», *home-care* «տնային խնամք», *life support* «կենսապահովում», *price rise* «գնային աճ», *space vehicle* «տիեզերական փոխադրամիջոց», *tissue paper* «բարակ, նուրբ փաթեթավորման թուղթ», *spring-freshness* «գարնանային թարմություն» և այլ բառերի դեպքում:

Ստորադասական հարաբերությամբ վերլուծական կառույցներ են նաև նրանք, որոնց առաջին բաղադրիչը կոնկրետացնում, մասնավորեցնում է երկրորդի իմաստը՝ արտահայտելով մասի և ամբողջի կամ ամբողջի և դրամի տեսակի հարաբերություն, ինչպես՝ *viper snake* «իժ-օձ», *horn bugle* «եղջերափող», *grape vineyard* «խաղողի այգի», *hawk-bird* «բազե-թռչուն», *tuna fish* «թյուննոս-ձուկ», *oak tree* «կաղնի

ծառ»²⁴⁷: Սրանք կոչվում են *redundant compounds* «հավելադրային բարդություններ» կամ *tautological compounds* «նույնաբանական բարդություններ», քանի որ մի բաղադրիչն արդեն արտահայտում է մյուսի իմաստը և տրամաբանորեն ավելորդ է²⁴⁸:

Կան նաև **հարկացուցիչ-հարկացյալ** կապակցությամբ բաղադրություններ՝ կազմված կա՛մ գոյականների ուղիղ հարադրմամբ՝ *beggar-stick* «մուրացկանի ձեռնափայտ», *brand-name* «ապրանքանշան», *door-knocker* «դռան թակ», *table leg* «սեղանի ոտք», կա՛մ ապաթարցով և պատկանելության իմաստ արտահայտող *s* մասնիկով, ինչպես՝ *bird's eye* «կանաչ ու սպիտակ թերթերով ծաղկի տեսակ», *crow's nest* «պաշտպանական դիտանոց», *mother's mark* «մարմնի վրա ի ծնե եղած խալ», *driver's licence* «վարորդական իրավունք», *master's degree* «մագիստրոսի աստիճան» և այլն: Թվարկված ապաթարցով բաղադրություններից առաջին երեքն արտակենտրոն բաղադրություններ են, իսկ վերջին երկուսը՝ ներկենտրոն:

Այն հարադրությունները, որոնցում երկրորդ բաղադրիչը բայակազմ գոյական է, ունեն բաղադրիչների **խնդիր-խնդրառու** հարաբերություն, ինչպես՝ *cheese-cutter* «պանիր կտրող սարք», *fortune-teller* «բախտագուշակ», *money-changer* «դրամափոխ, սեղանավոր», *bottle-opener* «խցանահան», *paper-pusher* «գրասենյակային առնետ» և այլն:

N+N կաղապարով վերլուծական բաղադրությունները հիմնականում ընտրել ենք Կ. Սադիկի «Բարդ բառեր. 7000 բարդ և գծիկով միացած բառեր» բառարանից²⁴⁹, որպեսզի համոզված լինենք, որ դրանք բառակազմական միավորներ (բարդ բառեր) են, ոչ թե բառակապակցություններ: Գոյականներից կազմված վերլուծական բաղադրությունների կազմում կարող են լինել նաև երկուսից ավելի գոյականներ:

Դրանք կարելի է ներկայացնել հետևյալ կաղապարներով՝
[[noun+noun]+noun] – *orange juice carton* «նարնջահյութով լի տուփ»,
[[noun+[noun+noun]] – *button mushroom* «նորածիլ, չբացված սունկ»,

²⁴⁷ Տե՛ս <http://www.daredictionary.com/page/languagechanges> Dicitonary of American Regional English, DARE

²⁴⁸ Տե՛ս <https://books.google.am/books?id=XLkPBwAAQBAJ&pg=PA142&lpg=PA142&dq=Szymanek+B.,+Remarks+on+Tautology+in+Word-Formation> B. Szymanek, Remarks on Tautology in Word-Formation, "Semantics of Complex Words (Studies in Morphology)", Vol. 3, Switzerland, 2015, էջ 148:

²⁴⁹ Տե՛ս C. Sadik, The Compound Words; 7000 Compound and Hyphenated Words, United States, 2013:

[[[noun+noun]+noun]+noun] – coconut oil mask «կոկոսի յուղով դիմակ» և այլն: Սրանք, ի վերջո, հանգում են երկբաղադրիչ բաղադրությունների, քանի որ կա՛մ լրացման, կա՛մ լրացյալի դերում հանդես է գալիս երկու գոյականներից կազմված բաղադրիչ-անդամը, որը կարող է լինել նաև համադրական բաղադրություն: Սրանք կոչվում են բազմաբաղադրիչ բաղադրություններ (multi-element compounds)²⁵⁰:

N+N կաղապարով վերլուծական բաղադրությունների շարքում առանձին տեղ են զբաղեցնում նրանք, որոնց առաջին բաղադրիչն արտահայտված է գերունդով (G): Գերունդը ձևով նման է առաջին դերբային: Այն կազմվում է բայի հիմքին *-ing* վերջածանցն ավելացնելով, ինչպես՝ *wash-washing* «լվանալ -լվանալը», այնպես ինչպես առաջին դերբայը (Particip. I)՝ *walk-walking* «քայլել -քայլող»։ Իմաստային տեսանկյունից ևս գերունդն այն ունի թե՛բայական և թե՛գոյականական հատկանիշներ, քանի որ ի վերջո բայն է գոյակալանում՝ (to) *sing-singing- երգել-երգելը*: Այդ պատճառով այնպիսի կառույցները, ինչպիսիք են՝ *chewing gum* «ծամոն», *drawing room* «նկարչական սենյակ», *drinking water* «խմելու ջուր», *fishing rod* «կարթածող», *sleeping pills* «քնաբեր հաբեր», *sleeping bag* «քնապարկ», *swimming pool* «լողավազան», *walking stick* «ձեռնակիայտ», *writing desk* «գրասեղան» և այլն, առաջին հայացքից կարող են ընկալվել և՛ որպես **V/Particip. 1+N**, և՛ որպես **N/G+N** կաղապարով կառույցներ, սակայն երբ դրանք քննում ենք բաղադրիչների միջև իմաստային հարաբերության տեսանկյունից, ակնհայտ է դառնում, որ դրանց առաջին բաղադրիչների դերբայ լինելը բացառվում է, քանի որ մեկնաբանվում են հետևյալ կերպ՝ *drinking water* «խմելու ջուր (ջուր՝ խմելու համար)», այլ ոչ թե «խմող ջուր», *fishing rod* «ձկնորսության համար նախատեսված կարթածող», ոչ թե «ձկնորսությամբ զբաղվող կարթածող», *sleeping bag* «քնելու համար նախատեսված պարկ», ոչ թե «քնող պարկ» և այլն: Հետևաբար սրանք **N (G)+N** տիպի բաղադրություններ են: Հաճախ նման կառույցներին զուգահեռ կիրառվում են **V+N** կաղապարով կառույցները՝ նույն իմաստով. դրանք ժամանակակից անգլերենում հիմնականում համադրական բաղադրություններ են,

²⁵⁰ Տե՛ս https://is.muni.cz/th/361665/pedf_b/Lucie_Koresova-bachelor_thesis_.pdf L. Korešová, Compound Nouns Related to Healthy Lifestyle, Fitness and Diet (Bachelor thesis), Brno, էջ 48, W. O' Grady and V. P. de Guzman, Morphology: the Analysis of Word Structure, "Contemporary Linguistics; an Introduction", London, New York, 1997, էջ 152-153:

ինչպես՝ *grinding stone – grindstone* «աղացաքար», *washing house – washhouse* «լվացքատուն», *storing house – storehouse* «պահեստ, մառան» և այլն²⁵¹:

Գերունդով կարող է արտահայտված լինել նաև բաղադրության երկրորդ բաղադրիչը **N+G (N)**, ինչպես՝ *decision-making* «որոշում կայացնելը», *finger-pointing* «մատնացույց անելը», *soul-searching* «ինքնավերլուծություն անելը», *problem-solving* «խնդիրներ լուծելը», *prize-giving* «մրցանակներ հանձնելը», *profit-sharing* «եկամուտները կիսելը», *saber-rattling* «թուր ճոճելը», *risk-taking* «ռիսկի դիմելը»²⁵² և այլն: Նման կառույցները, միևնույնն է, մնում են սահմանային միավորների բառակազմական և շարահյուսական միավորների (բառակապակցությունների) միջև: Բացի այդ՝ սրանց երկրորդ բաղադրիչները կարող են տարբեր կերպ մեկնաբանվել՝ ընկալվելով և՛ որպես գերունդ, և՛ որպես առաջին դերբայ: Այս կառույցները կհամարվեն N+Particip. I, ոչ թե N+G կաղապարով կազմություններ դրանց մոտգոյական ավելացնելու դեպքում, ինչպես՝ *finger-pointing* «մատնացույց անելը» (N+G) և *a finger-pointing girl* «մատնացույց անող աղջիկ» (N+Particip.I):

N+N կաղապարով կազմվում են հիմնականում **գոյական** վերլուծական բաղադրություններ, ինչպես՝ *country air* «գյուղի օդ», *morning exercise* «առավոտյան մարզանք», *price-reduction* «զնի նվազում», *shop-management* «խանութի կառավարում», *summer-house* «ամառանոց», *winter vacation* «ձմեռային արձակուրդ» և այլն, սակայն, օրինակ, նույն կաղապարով կազմված **ածականների** հարցը վիճելի է, քանի որ դրանք միայն կոնվերսիայի եղանակով կարող են ածականական կիրառություն ունենալ՝ մի երրորդ գոյականի հետ հարադրվելով ու դառնալով դրա որոշիչը, ինչպես՝ *coffee-table book* «թանկարժեք պատկերազարդ գիրք», *night-shift job* «գիշերային հերթափոխով աշխատանք», *back-street house* «արվարձանային տուն» և այլն:

Կան նաև N+N խառը տիպի կաղապարներ, ինչպես՝ *snow-feathered* «ձյունափետուր», *gab-toothed* «ատամների միջև ճեղք ունեցող», *king-sized* «չափազանց մեծ չափերի» և այլն ((snow-feather)+ed□):

Բարդ **բայերը** ևս սահմանափակ են, քանի որ դրանք նույնպես հիմնականում կազմվում են բարդ **գոյականների** կոնվերսիայի

²⁵¹ Տե՛ս H. Раевича, English Lexicology, K., 1979, էջ 76:

²⁵² Բարդ բառերի բերված օրինակները հիմնականում հանված են Կ. Սադիկի՝ բարդ բառերի բառարանից (տե՛ս C. Sadik, նշվ. աշխ.):

եղանակով. հազվագյուտ օրինակներից է նշված եղանակով կազմված *breath-test* «ոգելից խմիչքի օգտագործման ստուգում անցկացնել» բայը²⁵³, սակայն այս կառույցի երկրորդ բաղադրիչը կարող է նաև որպես բայ ընկալվել, ու հետևաբար նաև ամբողջ բաղադրությունը կհամարվի ոչ թե N+N, այլ N+V կառույց: Երկրորդ բաղադրիչի խոսքիմասային պատկանելության տեսանկյունից երկակի պատճառաբանվածությամբ նման այլ բայական հարադրություններ են, օրինակ՝ *flight test* «թռիչքից առաջ ստուգում անցկացնել», *head line* «վերնագրել», *road test* «ճանապարհային ստուգում անցկացնել», *safety check* «անվտանգությունն ապահովող ստուգում անցկացնել», *side track* «գործից շեղել» և այլն:

N+N կաղապարով բաղադրությունների առանձին տեսակ են նաև նրանք, որոնցում կա՛մ առաջին, կա՛մ երկրորդը բաղադրիչը հատուկ անուն է, ինչպես՝ *Air Canada* «Կանադական ավիաուղիներ», *Heathrow Airport* «Յեթրոու օդանավակայան», *Markov Chain* «Մարկովի շղթա», *Oxford University* «Օքսֆորդի համալսարան» և այլն:

Հաճախ N+N կաղապարով վերլուծական բաղադրությունները երկիմաստ են. օրինակ՝ *doctor joke* բաղադրությունը կարող է երեք տարբեր իմաստներ արտահայտել. ա) «կատակ բժիշկների մասին», բ) «բժիշկների կողմից արված կատակ», գ) «առհասարակ բժիշկներին հատուկ կատակ»: Նման դեպքերում հարադրության իմաստը պարզ է դառնում միայն համատեքստից:

A+N: Այս կաղապարով վերլուծական բաղադրություններ են, օրինակ՝ *big-ticket* «թանկ, ծախսատար», *double-agent* «կրկնակի գործակալ, լրտես», *high-technology* «բարձր տեխնոլոգիա», *low-income* «ցածր եկամուտ ունեցող», *true-life* «իրապաշտական», *wise guy* «ամենագետ» և այլն²⁵⁴: A+N

²⁵³ Տե՛ս L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 209:

²⁵⁴ Այս կաղապարով բառակազմական միավորները շարահյուսական միավորներից (բառակապակցություններից) տարբերակելիս հիմնականում առաջնորդվում են շեշտի դիրքով և իմաստային ու կառուցվածքային միջարք չափանիշներով, որոնց անդրադարձել ենք մեր աշխատության առաջին գլխում: Բացի նշված չափանիշները հաշվի առնելուց՝ ընդունված է համարել, որ բառի մեջ հիմնական շեշտը առաջին բաղադրիչի վրա լինելու դեպքում ստացվում է բառակազմական միավոր, իսկ երկրորդ բաղադրիչի վրա լինելու դեպքում՝ բառակապակցություն. ըստ այդմ, օրինակ՝ *easy chair* «հարմարավետ բազկաթոռ», *fast-food* «արագ պատրաստվող սնունդ», *new town* «նորակառույց բնակելի համալիր» կապակցությունները բառակազմական միավորներ են: Հաճախ, սակայն, բառակազմական միավորներ են համարվում նաև այնպիսի A+N կազմություններ, որոնցում շեշտն ընկնում է երկրորդ բաղադրիչի վրա, ինչպես՝ *cold war* «սառը պատերազմ», *heavy metal* «երժշտական ոճ», *high court* «գերագույն դատարան» և այլն (տե՛ս V. Adams, *Complex Words in English*, London and New York, 2013, էջ 81):

կաղապարով բաժանական ին հաճախեց վերլուծական բաղադրություններին ցեն խառը տիպի կաղապարները, ինչպես՝ *bright-eyed* «պայծառաչ», *broad-shouldered* «լայնաթիկունք», *clear-sighted* «խորաթափանց, կանխատես», *dark-haired* «սևահեր», *dewy-eyed* «դյուրահավատ», *dry-eyed* «անարտասուք», *evil-minded* «չարակամ», *false-hearted* «խորամանկ», *long-legged* «երկարոտն», *low-spirited* «անտրամադիր», *narrow-minded* «նեղմիտ» և այլն:

Նույն խառը տիպի կաղապարով հայերենում ունենք համադրական բարդություններ, ինչպես՝ *ազատաշխարհիկ*, *վատատրամիկ*, *սակավաժամանկյա* և այլ բառերը, որոնց անդրադարձել ենք Ա+Գ կաղապարով *համադրական* բարդությունները քննելիս:

A+N վերլուծական կաղապարով կազմվում են **գոյականներ**՝ *fast track* «արագացված կուրսեր», *full-dress* «երեկոյան զգեստ», *half-breed* «խառնածին», *half-moon* «կիսալուսին», *hard-stuff* «ուժեղ կախվածությունն առաջացնող թմրանյութ», *tight rope* «լարախաղացի պարան», *white-collar* «գրասենյակային աշխատող», **ածականներ**՝ *broad-brush* «մոտավոր», *civic-minded* «քաղաքացիական մտածելակերպով», *half-hearted* «անտարբեր», *light-fingered* «ճարպիկ», *loose-tongued* «բացբերան», ավելի հազվադեպ՝ **բայեր** *bad-mouth* «քննադատել», *brown-bag* «իր հետռեստորան խմիչք բերել» և այլն: Ածականների շարքում հատկապես շատ են *high* «բարձր» սկզբնաբաղադրիչով կազմվածությունները, ինչպես՝ *high-speed* «բարձր արագություն ունեցող», *high-minded* «մեծամիտ», *high-level* «բարձրաշխարհիկ» և այլն:

Կան A+N կաղապարով կազմված բազմաթիվ արտակենտրոն բաղադրություններ, ինչպես՝ *black-hearted* «չարակամ», *bloody-minded* «դաժան, անմարդկային», *dead hand* «ճնշող ազդեցություն», *late-day* «երեկոյան կրելու (հագուստ)», *sweet-tooth* «քաղցրակերություն», *wet-blanket* «վայելքն ու փշուրախությունը փչացնող մարդ» և այլն:

Num.+N: Համադրական կառույցները քննելիս նշել ենք, որ ավելի շատ են այս կաղապարով վերլուծական բաղադրությունները, որոնք հիմնականում միացման գծիկով են գրվում: Կան քանակական թվականներով և գոյականներով կազմված վերլուծական կառույցներ (*cardinal number+noun*, ինչպես՝ *one-man* «մեկի կողմից իրականացվող», *one-piece* «ամբողջական», *three-ply* «եռաշերտ», *one-way* «միակողմանի», *three-star* «երեքաստղանի», *two-bit* «անկարևոր, չնչին», *two-piece* «երկմասանի», *two-tone* «երկերանգ» և այլն: Այս կաղապարով

գերազանցապես կազմվում են **ածականներ**, սակայն կան նաև **գոյականներ**, ինչպես՝ *five-finger* «հնգաթերթ ծաղիկ», *one-acter* «մեկ գործողությամբ ներկայացում», *one-step* «զուգապարի տեսակ» և այլն:

Կան նաև խառը տիպի կաղապարով Num.+N վերլուծական բաղադրություններ, ինչպես՝ *four-wheeled* «քառանիվ», *two-edged* «երկսայր», *two-faced* «երկերեսանի», *two-fisted* «առնական», *two-handed* «երկու ձեռքով օգտագործելի» և այլն: Սրանց հետ համեմատելի են հայերենի *եռոտանի*, *հինգհարկանի*, *հինգմասնյա*, *չորսձեռնանի* խառը տիպի կաղապարով համադրական բաղադրությունները:

Num.+N կաղապարով կազմվում են մեծ մասամբ ներկենտրոն բաղադրություններ, ինչպես՝ *four-color* «քառագույն», *one-horse* «միաձի (կառք)», *three-cornered* «եռակողմ», սակայն կան նաև արտակենտրոն կառույցներ, ինչպես՝ *four-eyes* «չորսաչքանի (ակնոցավոր մարդ)», *one-liner* «սրամիտ կարճ կատակ», *five-finger* «հնգաթերթ ծաղիկ» և այլն:

Num.+N կաղապարի իրացմանը մասնակցում են նաև դասական թվականները. դասական թվականների և գոյականի կապակցությամբ (ordinal number+noun) բաղադրություններ են, օրինակ՝ *first-aid* «առաջին օգնություն», *fourth-class* «չորրորդ կարգի», *second-class* «երկրորդ կարգի», *fifth-century* «5-րդ դարի», *third-degree* «երրորդ աստիճանի» և այլն: Հայերենում դասական թվական+գոյական կապակցությամբ կառույցները համադրական տիպի են, ինչպես՝ *առաջ նախալի*, *երկրորդակարգ*, *երրորդամաս*, *քառորդամաս* և այլն, մինչդեռ նույն կաղապարով վերլուծական կապակցությունները թվականական բառակապակցություններ են՝ *առաջին հանդիպում*, *երկրորդ խաղաքը*, *հինգերորդ մասնաճյուղ*, *ութերորդ հիվանդանոց*, և ոչ թե բառակազմական միավորներ:

Pron.+N. Այս կապակցությամբ վերլուծական բաղադրություններ կազմվում են հետևյալ կաղապարներով՝

ա) անձնական դերանուն+գոյական (personal pron.+N). այս կաղապարով կազմվում են այնպիսի վերլուծական բաղադրություններ, որոնցում առաջին բաղադրիչը կամ երկրորդի սեռն է մատնանշում, ինչպես՝ *she-crab* «Էգ ծովախեցգետին», *she-devil*

«կախարդուհի»²⁵⁵, կա՛մ որևէ հատկանիշ, ինչպես՝ *he-man* «մկանուտ, հուժկու տղամարդ»: Կաղապարի իրացմանը հիմնականում մասնկացում են անձնական դերանունների ուղղական հոլովով ձևերը, սակայն կանա՛ն I- «ես» դերանվան խնդրային հոլովով դրված ձևի և գոյականի միացությամբ կազմված *me generation* «նյութապաշտ սերունդ» բաղադրությունը:

բ) Որոշյալ դերանուն+գոյական (*defining pron.+N*), ինչպես՝ *all-American* «ուղնուծուծով ամերիկացի», *all-purpose* «բազմանպատակ, համափտանի», *all-star* «լավագույն աստղերից (երգիչ, դերասան և այլն) կազմված», *other-direction* «արտաքին ազդակներով պայմանավորված վարքագիծ», *each-way/both-way* «երկկողմանի»,

գ) Ժխտական դերանուն “no”+գոյական (*negative pron. “no”+N*), ինչպես՝ *no-account* «անկարևոր, անարժեք», *no-fault* «պարտադիր»,

դ) անդրադարձ դերանուն «self»+գոյական (*reflexive pron. “self”+N*), ինչպես՝ *self-absorption* «ինքնամփոփություն», *self-analysis* «ինքնավերլուծություն», *self-contempt* «արհամարհանք սեփական անձի հանդեպ», *self-respect* «հարգանք սեփական անձի հանդեպ», *self-confidence* «ինքնավստահություն» և այլն:

Այս կաղապարով կազմվում են հիմնականում **գոյականներ**՝ *all-friend* «կարգին ընկեր», *he-male* «առնական տղամարդ», և **ածականներ**՝ *all-day* «ողջ օրը տևող», *all-night* «ողջ գիշեր տևող», *no-brained* «անուղեղ», *no-calorie* «առանց կալորիաների», *no-knock* «անսպասելի», *no-brow* «ինտելեկտչությունեցող»:

V+N: V+N կաղապարով այն կառույցները, որոնք մարդկանց են բնութագրում, անգլերենում հիմնականում համադրական են՝ բաղադրիչների միջև ուղիղխնդրային հարաբերությամբ, ինչպես՝ *cutthroat* «մարդասպան», *spoilsport/killjoy* «ուրիշների ուրախությունը թունավորող մարդ» և այլն: Սակայն կան նաև նույն կաղապարով վերլուծական կառույցներ, ինչպես՝ *lack-lustre* «անկյանք, անհամոզիչ», *pinch-belly* «ժլատ մարդ (հատկապես ուտելիքի վրա փող չծախսող)» և այլն՝ կրկին բաղադրիչների միջև ուղիղխնդրային շարահյուսական հարաբերությամբ և հիմնականում արտակենտրոն: Ուղիղխնդրային շարահյուսական հարաբերությամբ V+N կաղապարով

²⁵⁵ Սրանք քննել ենք առօրյա կառույցների մեջ, քանի որ իմաստային տեսանկյունից համընկնում են դրանց, սակայն սրանց առաջին բաղադրիչները դերանուններ են:

վերլուծական բաղադրությունները՝ համեմատած նույն կաղապարով համադրական բաղադրությունների հետ, փոքրաթիվ են:

Մյուս խմբում նրանք են, որոնց բաղադրիչների միջև խնդրային հարաբերություն չկա. սրանք հիմնականում ներկենտրոն բաղադրություններ են, ինչպես՝ *goggle-box* «հեռուստացույց», *jump seat* «լրացուցիչ նստարան մեքենայում», *play pit* «ավազադաշտ, որտեղ խաղում են երեխաները», *pull-date* «ափտանության ժամկետ», *watch-dog* «դիտորդ» և այլն²⁵⁶. Նախորդ խմբի հետ համեմատած՝ այս խմբի կառույցները բառակազմական տեսակետից ավելի կենսունակ են: V+N կաղապարով հիմնականում կազմվում են **գոյականներ**՝ *dangle-dolly* «մեքենայի դիմապակուց կախված, ճոճվող խաղալիք-թալիսման», սակայն կան նաև բարդ **ածականներ**, ինչպես՝ *roll-neck* «բարձր, թեթևակի ծալված օձիքով», *kick-arse* «խիստ անտարբեր» և այլն:

Particip.+N կաղապարով վերլուծական բաղադրությունները կազմվում են առաջին դերբայի և գոյականի (Particip. I+N) և երկրորդ դերբայի ու գոյականի (Particip. II+N) կապակցությամբ, որոնք, սակայն, հեշտ է շփոթել համապատասխան բառակապակցությունների հետ. այս պարագայում ևս հիմնականում առաջնորդվում են բարդ բառի առաջին բաղադրիչի վրա ընկած միավորիչ շեշտով, ինչպես նաև դրա ձևակառուցվածքային ու իմաստային ամբողջականությամբ: Ըստ այդմ՝ **Particip. I+N** կաղապարով վերլուծական բաղադրություններ են, օրինակ՝ *dancing girl* «պարուհի», *glowing worm* «լուսատուիկ», *sliding door* «սահող դուռ», *working girl* «աշխատող, տնարար աղջիկ» և այլն: Կան նաև դեպքեր, երբ բառի մեջ երկու բաղադրիչները հավասարապես շեշտված են, կամ հիմնական շեշտն ընկնում է առաջին, իսկ երկրորդական շեշտը՝ երկրորդ բաղադրիչի վրա: Երբեմն միայն շեշտի դիրքից կախված՝ փոխվում է ամբողջ բաղադրության իմաստը, օրինակ՝ *dancing girl* բաղադրությունը՝ երկու բաղադրիչների վրա շեշտով, նշանակում է «պարող աղջիկ», իսկ առաջին բաղադրիչի վրա շեշտով ցույց է տալիս մարդու մասնագիտությունը՝ «արհեստավարժ պարուհի»²⁵⁷: Particip. I+N կապակցությամբ բազմաթիվ բառակապակցություններ լեզվի զարգացման ընթացքում բառայնացել, մեկ

²⁵⁶ Տե՛ս Ե. Бортничук, И. Василенко, Л. Пастушенко, Словообразование в современном английском языке, Киев, 1988, էջ 153-154:

²⁵⁷ Տե՛ս R. Ginzburg et al., A Course in Modern English Lexicology, M., 1979, էջ 142:

բառի արժեք են ձեռք բերել²⁵⁸, սակայն միևնույնն է, նման կառույցները անցումային, սահմանային են բառակազմական և շարահյուսական միավորների միջև:

Նշված կաղապարով կան նաև արտակենտրոն բաղադրություններ, ինչպես՝ *running dog* «բաղաբական համակարգի ստրկամիտ հետևորդ», *walking encyclopedia* «գիտելիքներով հարուստ անձնավորություն (քալող հանրագիտարան)» և այլն:

Այս կաղապարով հիմնականում կազմվում են համակաղապարային վերլուծական բաղադրություններ: Անգլերենում զգալի տեղ են գրավում Particip. I+N և G+N կաղապարով կազմված գոյական բաղադրությունները²⁵⁹: Հայերենում Դրբ.+Գ համադրական բաղադրություններ ունենք՝ կազմված **ենթակայ ական դերբայով** և **գոյական** բաղադրիչներով, ինչպես՝ *արարողակարգ*, *արարողապետ*, *ներողամիտ*, *քերթողահայր* և այլն, իսկ նույն բաղադրիչ-անդամներով վերլուծական կազմությունները բառակապակցություններ են, ոչ թե բարդ բառեր:

Կան նաև **Particip. II+N** կաղապարով կառույցներ, ինչպես՝ *added value* «ավելացված արժեք», *broken home* «բաժանված ընտանիք, քանդված օջախ», *broken English* «կոտրտված անգլերեն», *made man* «ապահովված մարդ», *made road* «ասֆալտապատ ճանապարհ», *striped maple* «փենսիլ վանյան թխկի» և այլն:

Particip. I+Noun և Particip. II+Noun կաղապարները հաճախ որպես առանձին կառույց չեն ներկայացվում, այլ քննվում են A+N կաղապարի տակ, քանի որ Particip. I+Noun և Particip. II+Noun կաղապարների՝ դերբայով արտահայտված առաջին բաղադրիչները, որոնք անվանում են երկրորդների հատկանիշը, այդպիսով դառնում են դերբայակազմածականներ (*participial adjectives*): Սրանից էլ բխում է կառույցի բաղադրիչների միջև եղած որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերությունը: Particip. I+Noun և Particip. II+Noun կաղապարներով կազմվում են **գոյական** բաղադրություններ:

Adv.+N: Այս կաղապարով մեզ հանդիպած միակ բաղադրությունը *then-president* «նախկին նախագահ» կառույցն է: Ըստ Լ. Բաուերի՝ Adv.+N կաղապարով բաղադրություն կարող էր համարվել նաև *now generation*

²⁵⁸ Տե՛ս Օ. Мешков, Семантические аспекты словосложения английского языка, М., 1986, էջ 186:

²⁵⁹ Տե՛ս В. Конечкая, Введение в сопоставительную лексикологию германских языков, М., 1993, էջ 150:

«Ժամանակակից սերունդ» կառույցը, որում, սակայն, *now* բառը կարող է նաև կոնվերսիայի եղանակով կազմված ածական լինել: Յեղինակն իրավացիորեն նշում է, որ այս կաղապարը գրեթե չի տարբերվում Prep.+N կաղապարից, քանի որ դրա իրացմանը մասնակցող տեղի և ժամանակի նախդիրներից շատերը կարող են ընկալվել որպես մակբայ՝ անգլերենում մակբայի և նախդրի՝ հաճախ ձևով համընկնելու պատճառով²⁶⁰:

Prep.+N: Այս կաղապարով վերլուծական կառույցները նույն կաղապարով համադրական բարդությունների նման կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) տեղի և ուղղության նախդիր+գոյական (Prep. of place and direction+N) կաղապարով բաղադրություններ՝ *by-passer* «անցորդ», *by-stander* «ականատես», *by-route/way* «երկրորդական ճանապարհ», *in-house* «ներքին միջոցներով, կազմակերպության ներսում արված», *off-center* «կենտրոնից հեռու», *off-island* «կղզուց հեռու», *on-site* «տեղում, ի տեղի» և այլն,

բ) ժամանակի նախդիր+գոյական (Prep. of time+N) կաղապարով բաղադրություններ՝ *after-tax* «հարկումից հետո, մաքուր (եկամուտ)», *before-tax* «հարկումից առաջ (եկամուտ)», *off-hour* «ազատ ժամ», *off-day* «անհաջող օր», *off-season* «ոչ սեզոնային» և այլն,

գ) նախդիր+գոյական (Prep. expressing other meanings+N) կաղապարով այլ իմաստներ արտահայտող բաղադրություններ՝ *in-crowd* «նորածևությանը հետևող խավ», *in-law* «ամուսնու կամ կնոջ հարազատներից», *in-joke* «ընկերական միջավայրում արված կատակ», *on-air* «հեռարձակող» և այլն:

Այս կառույցները հիմնականում համակաղապարային են. դրանցով կազմվում են **գոյականներ**՝ *at-home* «ընտանեկան երեկույթ», *by-law* «կանոնադրություն», *by-product* «հավելյալ արտադրանք», *by-street* «ոչ բանուկ ճանապարհ», և **ածականներ**՝ *in-depth* «խորությամբ, համակողմանի», *on-site* «տեղի, տարածքային» և այլն: Բաղադրիչների միջև հիմնականում առկա է որոշիչ-որոշյալի շարահյուսական հարաբերություն:

Թվարկված բոլոր բաղադրություններում գոյականը բաղադրությունների երկրորդ բաղադրիչն է (N+N կաղապարում

²⁶⁰ Տե՛ս L. Bauer, *English Word-Formation*, Cambridge, 1983, էջ 206:

երկու բաղադրիչներն էլ գոյական են), սակայն ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական կառույցներում գոյականը հանդես է գալիս նաև որպես բաղադրության առաջին բաղադրիչ: Առանձնացվում են հետևյալ կաղապարները.

N+A: Այս կաղապարով կազմված վերլուծական բաղադրությունները հիմնականում արտահայտում են նմանության կամ համեմատության հարաբերություններ (relations of comparison/resemblance), հետևաբար կաղապարն ավելի բացահայտ ձևով կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ *A+as+N` grass-green* «վառ կանաչ (խոտի նման)» (*green as grass*), *icy-cold* «շատ սառը (սառույցի նման)», *iron-gray* «երկաթագույն, գորշ», *knee-high* «մինչև ծնկները հասնող», *paper-thin* «շատ բարակ (թղթի նման)», *silk-soft* «փափուկ (մետաքսի նման)», *skin-deep* «մակերեսային», *sky-blue* «երկնակապույտ», *stone-deaf* «քարի պես լուռ», *world-famous* «աշխարհահռչակ» և այլն: Սրանք ավելի հաճախ են հանդիպում, քան նույն կաղապարով համադրական բարդությունները, ինչպես՝ *bloodthirsty* «արյունռոշտ», *carsick* «մեքենայի ընթացքից սրտխառնոց ունեցող» և այլն:

N+A կաղապարով վերլուծական կազմություններից շատերը կարելի է ներկայացնել նաև հետևյալ բանաձևով՝ *A+prep.+N* (ած.+նախդ.+գոյ.)²⁶¹: Սրանց կազմում նախդիրներ իրականում չկան, սակայն երբ շրջում ու շարահյուսական կապակցությունների ենթավերածում, սրանք դառնում են նախդրավոր կազմություններ, ինչպես՝ *A+of+N` class-conscious* «դասակարգային գիտակցությամբ», *A+in+N` gold-rich* «ոսկով հարուստ», *oil-rich* «նավթով հարուստ» (*rich in oil*) և այլն, *A+by+N` machine-readable* «համակարգչով մշակվող, ընթեռնելի», *man-portable* «մարդու կողմից տեղափոխելի» (*portable by man*) և այլն, *A+for+N` money-greedy* «փողասեր», *power-hungry* «իշխանատենչ» (*hungry for power*) և այլն, *A+to+N` cold-sensitive* «ցրտազգայուն (ցրտի նկատմամբ զգայուն)», *heat-sensitive* «շոգի նկատմամբ զգայուն» (*sensitive to heat*) և այլն:

Այս կաղապարով կազմվում են գերազանցապես **ածականներ**, ինչպես՝ *user-friendly* «կիրառելի, գործածական», *stone-cold* «քարսիրտ» և այլն:

²⁶¹ Տե՛ս Е. Бортничук, И. Василенко, Л. Пастушенко, Словообразование в современном английском языке, Киев, 1988, էջ 155:

N+V: N+V կաղապարով համադրական բարդությունների քննության մեջ նշել ենք, որ սրանց մի մասը՝ **բայերը**, հիմնականում կազմվում են համապատասխան գոյական կամ ածական բարդությունների հետադարձ բառակազմության կամ ածանցազերծման եղանակով: Քիչ չեն նաև նույն ճանապարհով կազմված վերլուծական բաղադրությունները, ինչպես՝ *air-conditioning* «օդակարգավորիչ համակարգ»-(to) *air-condition* «օդը կարգավորել», *birdwatcher* «թռչունների վարքը դիտող»-(to) *bird-watch* «թռչունների վարքը դիտել», *chain-smoker* «զանակ զանակի հետևից ծխող»-(to) *chain-smoke* «զանակ զանակի հետևից ծխել», *ghostwriter* «պատվերով որևէ աշխատանք գրող»-(to) *ghost-write* «պատվերով որևէ աշխատանք գրել», *mass-production* «զանգվածային արտադրություն»-(to) *mass-produce* «զանգվածաբար արտադրել», *spring-cleaning* «տան գարնանային հիմնավոր մաքրություն»-(to) *spring-clean* «տունը հիմնավորապես մաքրել գարնանը», *stage-manager* «բեմադրող»-(to) *stage-manage* «բեմադրել», *vacuum-cleaner* «փոշեկուլ»-(to) *vacuum-clean* «փոշեկուլով մաքրել» և այլն:

Սրանց մի մասի բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերությունն **ուղիղխնդրային** է, ինչպես՝ *air-condition* (to condition air) «օդը կարգավորել», *blood-transfuse* (to transfuse blood) «արյուն փոխներարկել» և այլն:

Մյուս մասի դեպքում կա **միջոցի խնդրի** հարաբերություն, ինչպես՝ *computer-generate* «համակարգչով պատրաստել», *machine-wash* «լվացքի մեքենայով լվանալ» և այլն²⁶²: **Ենթակայական շարահյուսական** հարաբերությամբ կառույցները հիմնականում համադրական բարդություններ են:

Այս կաղապարով վերլուծական կազմությունները կարող են լինել նաև համապատասխան բարդ գոյականների կոնվերսիայի արդյունք, ինչպես՝ *a mountain-bike – to mountain-bike* «հեծանվով

²⁶² *Computer-generate* «համակարգչով ստանալ, պատրաստել», *spring-clean* «տունը հիմնավորապես մաքրել գարնանը» և այլ բաղադրությունների՝ հետադարձ բառակազմությամբ կազմված լինելը տարակարծություններ է առաջացնում տարբեր լեզվաբանների շրջանում, սակայն որպես դրանց՝ հետադարձ բառակազմությամբ կազմված լինելու ապացույց՝ Վ. Ադամսը բերում է այն փաստարկը, որ անգլերենում բայերի՝ բառաբարդման եղանակով կազմությունը այնքան գործուն է, հետևաբար նման կառույցներն ավելի շուտ հետադարձ բառակազմության արդյունք են (տե՛ս V. Adams, Complex Words in English, London and New York, 2013, էջ 100-102):

լեռնագնացության գնալ», *a wheel-camp – to wheel camp* «մեքենան սեղմիչով անշարժացնել» և այլն: Սրանց երկրորդ բաղադրիչների բայ լինելը, սակայն, վիճելի է. նույն կերպ դրանք կարող են ընկալվել որպես գոյական, և այդ դեպքում կունենանք N+N և ոչ թե N+V կաղապար: Հետևաբար N+V կաղապարով բաղադրությունների (բայերի) կազմության ամենահիմնական եղանակը մնում է հետադարձ բառակազմությանը:

N+V կաղապարով վերլուծական բաղադրությունների առաջացման եղանակները միայն հետադարձ բառակազմությանը և կոնվերսիան չեն: Կան նաև այնպիսի բաղադրություններ, որոնք կարող են առաջացած լինել համապատասխան բառակապակցությունները ինվերսիայի²⁶³ ենթարկելու՝ շրջելու եղանակով, ինչպես օրինակ՝ *volume-expand* «ծավալել, ընդլայնել» բարդ բայի դեպքում, որ ստացվել է *to expand the volume* «մեծացնել ծավալը, ընդլայնել» բառակապակցության ինվերսիայով՝ շրջմամբ²⁶⁴:

Այս կաղապարով գերազանցապես կազմվում են **բայեր**, երբեմն նաև **գոյականներ**: Վերջինների մեջ վիճելի է երկրորդ բաղադրիչի բայ լինելը, քանի որ այն կարող է ընկալվել որպես գոյական. դրա հետևանքով ամբողջ բաղադրությունը կհամարվի արդեն N+N կառույց, ինչպես՝ *blood flow* «արյան հոսք», *birth control* «ծնելիության վերահսկողություն», *toe touch* «ոտքի ծայրին հասնելը, դիպչելը» և այլն:

N+Particip. կաղապարով վերլուծական բաղադրությունները կազմվում են գոյականի և առաջին դերբայի (N+ Particip. I) և գոյականի ու երկրորդ դերբայի (N+ Particip. II) կապակցությամբ: N+Particip. I կազմությամբ վերլուծական տիպի կառույցներ են, օրինակ՝ *energy-saving* «էներգախնայող», *fun-loving* «ժամանցասեր», *life-changing* «կյանքը փոխող, կարևոր», *nail-biting* «նյարդայնացած, լարված», *man-eating* «մարդակեր», *peace-loving* «խաղաղասեր», *life-saving* «կյանք փրկող», *mind-blowing* «շփոթեցնող», *mouth-watering* «ախորժաբեր» և այլն: Հարադրվելով գոյականին՝ սրանք դառնում են այդ գոյականների որոշիչները, ինչպես՝ *[[honey-gathering] bees]* «մեղր հավաքող մեղուներ», *[[peace-loving]*

²⁶³ *Ինվերսիա* եզրույթով մեր աշխատանքում նկատի ունենք շրջումը միայն բառային մակարդակում:

